

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կյանքի իրավունք

Թարմացված տարբերակը՝
2020 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ



Սույն փաստաթուղթը տպագիր կամ էլեկտրոնային հրապարակման տեսքով ամբողջությամբ կամ մասամբ թարգմանել և (կամ) վերարտադրել ցանկացող հրատարակիչներին կամ կազմակերպություններին առաջարկում ենք թույլատրման ընթացակարգին վերաբերող տեղեկություններ ստանալու համար գրել հետևյալ publishing@echr.coe.int հասցեին:
Եթե ցանկանում եք իմանալ, թե նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցներից որոնք են ներկայումս թարգմանվում, խնդրում ենք անցնել հետևյալ հղումով՝ Pending translations:

Սույն ուղեցույցի տպագրությունն իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Ուղեցույցը տպագրվել է Եվրոպայի խորհրդի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համատեղ ջանքերով: Սույն ուղեցույցի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Սույն ուղեցույցը կազմվել է Իրավախորհրդատուի (Jurisconsult) տնօրինության կողմից և Եվրոպական դատարանի համար չունի պարտադիր ուժ: Այն կարող է վերանայվել և խմբագրվել:
Սույն ուղեցույցի բնօրինակը կազմվել է անգլերեն: Այն պարբերաբար թարմացվել է. ամենավերջին անգամ՝ 2020 թվականի օգոստոսի 31-ին:
Նախադեպային իրավունքի վերաբերյալ ուղեցույցները կարելի է ներբեռնել https://www.echr.coe.int կայքից (Case-law – Case-law analysis – Case-law guides):
Հրապարակվող թարմացումների համար հետևե՛ք Դատարանի թվիթերյան էջին՝ https:/twitter.com/echrpublication:

Սույն թարգմանությունը հաշվի է առնում Եվրոպայի խորհրդի կողմից իրականացված ՄԻԵԴ-ի առաջատար նախադեպային իրավունքի և հրապարակումների հայերեն թարգմանված 2017թ. հրատարակությունը:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2021 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ 7

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 9

Ա. 2-րդ հոդվածի մեկնաբանությունը 10

Բ. Պետության պարտավորությունները
2-րդ հոդվածի ներքո 10

Գ. 2-րդ հոդվածի կիրառելիությունը
կյանքին սպառնացող իրավիճակներում 11

II. ԿՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 14

Ա. Պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթը 14

Բ. Պետության պոզիտիվ պարտավորությունների
շրջանակը 14

Գ. Կյանքի պաշտպանությունը տարբեր իրավիճակներում 16

1. Անձանց պաշտպանությունը ոչ պետական մարմինների
ներկայացուցիչների կողմից մահաբեր ուժի
գործադրումից 17
2. Անձանց պաշտպանությունն ինքնավասումից 19
3. Անձանց պաշտպանությունը բնապահպանական
և արդյունաբերական աղետներից 23
4. Անձանց պաշտպանությունն
առողջապահության ոլորտում 26

ա. Ընդհանուր բնակչություն 26

բ. Ազատությունից զրկված անձինք
և պետության հսկողության ներքո գտնվող
խոցելի անձինք 31
5. Անձանց պաշտպանությունը
դժբախտ պատահարների դեպքում 34
Դ. Ժամանակային սահմանափակումներ 38
1. Կյանքի սկիզբ 38
2. Կյանքի ավարտին վերաբերող հարցեր 39
ա. Էվթանազիա 39
բ. Կենսական ֆունկցիաների արհեստական
ապահովման դադարեցում 40

III. ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԱՐԳԵԼՔ 41

Ա. Մահապատիժ 41
1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի
մեկնաբանությունը Կոնվենցիային կից 6-րդ և 13-րդ
արձանագրությունների լույսի ներքո 42
2. 2-րդ հոդվածից բխող պետության պատասխանատվությունն
արտահանձնման (էքստրադիցիա) և արտաքսման
վերաբերյալ գործերով 43
Բ. Մահաբեր ուժի գործադրումը պաշտոնատար
անձանց կողմից 44
1. Ապացույցների գնահատում 44
ա. Ապացուցման չափանիշներ 45
բ. Ապացուցման բեռ 46
2. Անձանց պաշտպանությունը պաշտոնատար անձանց կողմից
մահաբեր ուժի գործադրումից 48
ա. Իրավական դաշտ 48
բ. Պաշտոնատար անձանց ուսուցում և ընտրություն 50
գ. Օրինակներ 51
3. Ուժի գործադրումը թույլատրող բացառություններ 52

ա. Հսկողության կիրառելի չափանիշներ 53
բ. Ընդհանուր մոտեցում 54
i. Պաշտոնատար անձանց գործողություններ 55
ii. Գործողության նախապատրաստումն ու դրա նկատմամբ հսկողությունը 56
iii. Օրինակներ 57
Գ. Առանձին ոլորտներ 59
1. Մահվան դեպքեր, որոնք վրա են հասել ձերբակալման հատուկ հնարքների գործադրման հետևանքով 60
2. Մահվան դեպքեր, որոնք վրա են հասել անձին անազատության մեջ պահելու ընթացքում 60
3. Արտադատական մահապատիժներ 61
4. Անվտանգության ապահովման կամ ռազմական բնույթի գործողություններ 62
5. Անհետացումներ 65
ա. Մահվան կանխավարկած 65
բ. Պետության պատասխանատվությունը ենթադրյալ մահվան դեպքերի համար 67
գ. Կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պատասխանատվությունը 67
6. Որպես անհատ հանդես եկող պաշտոնատար անձանց կողմից կատարված սպանություններ 68

VI. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 70

Ա. Ընթացակարգային պարտավորությունների շրջանակը 70
Բ. Կապը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութական և ընթացակարգային տարրերի միջև 72
Գ. Քննության նպատակը 73
Դ. Քննության ձևը 74
Ե. Հսկողության բնույթը և աստիճանը 75
Զ. Քննության չափանիշները 77

1. Անկախություն 77
2. Պատշաճ բնույթ 79
3. Արագություն ու պատշաճ ջանասիրություն 82
4. Հանրային հսկողություն և տուժողների հարազատների մասնակցություն 84
Է. Քրեական հետապնդման, պատժամիջոցների և փոխհատուցման հետ կապված հարցեր 87
Ը. Ընթացակարգային պարտավորությունների վերականգնում 91
Թ. Սեռով պայմանավորված բռնության և ատելության հանցագործությունների քննությունը 92
Ժ. Ընթացակարգային պարտավորություններն անդրսահմանային գործերի համատեքստում 93
Ի. Ընթացակարգային պարտավորությունները անփութությամբ պատճառված մահվան կամ ծանր Վասվածքների դեպքում 96
1. Ընդհանուր սկզբունքներ 97
2. Օրինակներ 102
ա. բուժաշխատողների անփութության վերաբերյալ գործեր 102
բ. դժբախտ պատահարների վերաբերյալ գործեր 104

ՄԵՋԲԵՐՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ 106

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԱՄԱՐ

Սույն ուղեցույցը Մարդու իրավունքների եվրոպական դատա- րանի (հետայսու՝ «Դատարան», «Եվրոպական դատարան» կամ «Ստրասբուրգի դատարան») կողմից հրատարակվող «Կոնվենցիայի վերաբերյալ ուղեցույցներ» (անգլ.՝ «Guides on the Convention») շարքից է՝ նախատեսված պրակտիկ իրավաբաններին Ստրասբուրգի դատարանի կայացրած հիմնարար վճիռների և որոշումների մասին տեղեկացնելու համար: Սույն ուղեցույցում վերլուծվում և ամփոփ- վում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (հետայսու՝ «Կոնվենցիա» կամ «Եվրոպական կոնվենցիա») 2-րդ հոդվածին առնչ- վող նախադեպային իրավունքը: Ընթերցողները հնարավորություն կունենան ծանոթանալու տվյալ ոլորտի հիմնական սկզբունքներին և վերաբերելի նախադեպերին:

Մեջբերված նախադեպային իրավունքի օրինակներն ընտրվել են ուղենիշային, առավել կարևոր և (կամ) վերջերս կայացված վճիռնե- րից և որոշումներից:*

Դատարանի վճիռների և որոշումների միակ նպատակը Դատա- րանին ներկայացված կոնկրետ գործերի լուծումը չէ, այլ նաև Կոնվեն- ցիայով սահմանված կանոնների պարզաբանումը, երաշխավորումը և զարգացումը, ինչը նպաստում է պետությունների՝ որպես Պայմա- նավորվող կողմերի ստանձնած հանձնառությունների կատարմանը (*«Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության»*, 18 հունվարի 1978թ., § 154, սերիա Ա, թիվ 25 և վերջերս՝ *«Յերոնովիչս ընդդեմ Լատ- վիայի»* [ՄՊ], թիվ 44898/10, § 109, ՄԻԵԴ, 2016թ.):

---

* Մեջբերված նախադեպային իրավունքը կարող է լինել Եվրոպական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (հետայսու՝ Հանձնաժողով) պաշտոնական լեզուներից (անգլերեն և ֆրանսերեն) որևէ մեկով կամ միաժամանակ երկուսով: Եթե այլ բան նախատեսված չէ, ապա բոլոր հղումները վերաբերում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճռին: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում «(dec.)» բառը նշանակում է, որ դրանով հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը (հղման անգլերեն տարբերակում՝ «[GC]») նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից: Պալատի այն վճիռները, որոնք ուղեցույցի սույն տարբերակը հրապարակելու պահին դեռևս օրինական ուժի մեջ չեն մտել, նշագրված են աստղանիշով (*):

Այսպիսով, Կոնվենցիայի միջոցով ստեղծված համակարգի նպատակն է ընդհանուր շահերի հաշվառմամբ հանրային քաղաքականության խնդիրները լուծելը՝ այդկերպ վեր հանելով մարդու իրավունքների պաշտպանության չափանիշները և տարածելով մարդու իրավունքներին առնչվող իրավական պրակտիկան Կոնվենցիայի անդամ պետություններում (*«Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի»* [ՄՊ], թիվ 30078/06, § 89, ՄԻԵԴ 2012): Դատարանն իրապես շեշտել է, որ Կոնվենցիան կատարում է «եվրոպական հասարակական կարգի սահմանադրական գործիքի» դերը մարդու իրավունքների բնագավառում (*«Բոսֆորի ավիաուղիների զբոսաշրջության և առևտրի գործակալությունն ընդդեմ Իռլանդիայի»* [ՄՊ], թիվ 45036/98, § 156, ՄԻԵԴ, 2005-VI):

Սույն ուղեցույցը պարունակում է հղումներ Կոնվենցիայից և վերջինիս լրացուցիչ արձանագրություններից մեջբերված հոդվածներից յուրաքանչյուրում օգտագործված «բանալի» բառերին: Յուրաքանչյուր գործով քննարկված իրավական խնդիրներն ամփոփված են *Բանալի բառերի ցանկում* (անգլ.՝ «*List of Keywords*»), որոնք ընտրվել են (հիմնականում) Կոնվենցիայի և Արձանագրությունների տեքստից անմիջականորեն վերցված եզրույթների բառարանից:

Դատարանի նախադեպային իրավունքի *HUDOC database շտեմարանում* հնարավոր է որոնումներ կատարել ըստ բանալի բառերի: Բանալի բառերով որոնելու պարագայում կարելի է գտնել նմանաբնույթ իրավաբանական բովանդակություն ունեցող փաստաթղթեր (բանալի բառերի օգնությամբ ամբողջացվում են յուրաքանչյուր գործի վերաբերյալ Դատարանի պատճառաբանությունները և եզրակացությունները): Առանձին գործերի բանալի բառերը կարելի է գտնել՝ «HUDOC» համակարգում սեղմելով «Case details» կոճակը: «HUDOC» շտեմարանի և բանալի բառերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *«HUDOC»-ի օգտագործման ձեռնարկը (անգլ.՝ «HUDOC user manual»)*:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Կոնվենցիայի 2-րդ հոդված

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը:

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

HUDOC-ի բանալի բառեր

Expulsion (2) – Extradition (2) – Positive obligations (2)

Life (2-1) – Death penalty (2-1): Prescribed by law (2-1); Accessibility (2-1); Foreseeability (2-1);

Safeguards against abuse (2-1); Competent court (2-1) – Effective investigation (2-1)

Use of force (2-2) – Absolutely necessary (2-2): Defence from unlawful violence (2-2); Effect lawful arrest (2-2);

Prevent escape (2-2); Quell riot or insurrection (2-2)

Ա. 2-րդ հոդվածի մեկնաբանությունը

1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածը մեկնաբանելիս Դատարանը պետք է առաջնորդվի այն մոտեցմամբ, որ Կոնվենցիայի՝ որպես անհատի պաշտպանության գործիքի, առարկան և նպատակը պահանջում են մեկնաբանել և կիրառել Կոնվենցիայի դրույթներն այնպես, որ դրանով նախատեսված երաշխիքները դառնան գործնականում կիրառելի և արդյունավետ (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 146):

2. 2-րդ հոդվածը Կոնվենցիայի հիմնարար հոդվածներից մեկն է, որից 15-րդ հոդվածի իմաստով խաղաղ ժամանակներում որևէ շեղում չի թույլատրվում: 3-րդ հոդվածի հետ միասին այն ամրագրում է Եվրոպայի խորհուրդը կազմող ժողովրդավարական հասարակություն-ների հիմնարար արժեքներից մեկը (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 174): Որպես այդպիսին 2-րդ հոդվածի դրույթները պետք է լինեն խիստ մեկնաբանության առարկա (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 147):

Բ. Պետության պարտավորությունները 2-րդ հոդվածի ներքո

3. 2-րդ հոդվածն իր մեջ ներառում է երկու նյութական պարտավորություն, այն է՝ օրենքի հիման վրա կյանքի իրավունքը պաշտպանելու ընդհանուր պարտավորությունը և դիտավորությամբ կյանքից զրկելու արգելքը, որը սահմանափակվում է թվարկված բացառությունների ցանկով (*«Բոսոն ընդդեմ Իտալիայի»* (որոշ.)): Հաշվի առնելով հոդվածի հիմնարար բնույթը՝ այն իր մեջ ներառում է նաև նյութական տարրի ենթադրյալ խախտումների կապակցությամբ արդյունավետ քննություն իրականացնելու ընթացակարգային պարտավորություն: (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագա- վորության»* [ՄՊ], § 229):

Գ. 2-րդ հոդվածի կիրառելիությունը կյանքին սպառնացող իրավիճակներում

4. Դատարանը բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդ- վածը կարող է կիրառելի լինել, նույնիսկ եթե անձը, ում կյանքի իրա- վունքը ենթադրաբար խախտվել է, չի մահացել: Մասնավորապես, Դատարանը նշել է, որ բացառիկ հանգամանքներում և հաշվի առնե- լով այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործադրված ուժի աստիճանը և տեսակը, ինչպես նաև վնասվածքների բնույթը, պաշտոնատար անձանց կողմից ուժի գործադրումը, որը թեև չի հանգեցրել մահվան, կարող է առաջացնել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, եթե վերջիններիս վարքագիծն իր բնույթով լուրջ վտանգի տակ է դրել դիմումատուի կյանքը (*«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 55, *«Սոարեն և այլք ընդդեմ Ռումինիայի»*, §§ 108-109 և *«Տրևալեցն ընդդեմ Բելգիայի»*, §§ 55-61): Մնացած բոլոր դեպքերում, երբ անձը ֆիզիկական բռնության կամ վատ վերաբերմունքի է ենթարկվել պաշտոնատար անձանց կողմից, գանգատը, որպես կանոն, կքննվի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո (*«Մակարացիսն ընդդեմ Հունաս- տանի»,* [ՄՊ], § 51, *«Իլհանն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 76): Այն գործերով, երբ դիմումատուն ողջ է մնացել ոչ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից պոտենցիալ մահաբեր ուժի գործադրու- մից հետո, Դատարանը որդեգրել է նմանատիպ մոտեցում, ինչ այն գործերի դեպքում է, որոնք վերաբերում են պաշտոնատար անձանց կողմից ուժի գործադրմանը (*«Յոտովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 69):

5. Դատարանը նաև գտել է, որ ծանր հիվանդություններ ունեցող անձանց բողոքներն ընդգրկվում են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի տիրույթում, երբ համապատասխան հանգամանքները ենթադրում են պետության պոտենցիալ պատասխանատվությունը (*«Լ.Յ.Բ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, §§ 36-41՝ լեյկեմիայով տառապող դիմու- մատուի վերաբերյալ, *«Գ.Ն.-ն և այլք ընդդեմ Իտալիայի»*՝ դիմումա- տուների վերաբերյալ, ովքեր տառապում էին կյանքի համար վտանգ ներկայացնող հիվանդությամբ՝ հեպատիտով, *«Հրիստոզովը և այլք*

ընդդեմ Բուլղարիայի»՝ վերջին ստադիայի քաղցկեղի տարբեր ձևեր ունեցող դիմումատուների վերաբերյալ, *«Օյալն ընդդեմ Թուրքիայի»* գործը, կյանքի համար վտանգավոր ՄԻԱՎ-ի վիրուսով վարակված դիմումատուի վերաբերյալ, *«Աֆթանաչն ընդդեմ Ռումինիայի»*, § 53, որտեղ բժշկական անձնակազմը հրաժարվել էր ինսուլինային բուժում տրամադրել ծանր վիճակում գտնվող շաքարային դիաբետ ունեցող հիվանդին կամ հակառակը՝ *«Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի»*, § 84, որով Դատարանը գտավ, որ 2-րդ հոդվածը կիրառելի չէ դիմումատուների պարագայում, ովքեր պետական նավաշինական ձեռնարկության նախկին աշխատակիցներ էին և ենթարկվել էին ասբեստի ազդեցության, քանի որ նրանց ընթացիկ առողջական վիճակը չէր վկայում քաղցքեղի այնպիսի հազվադեպ տեսակի ախտանիշների առկայության մասին, որն առաջանում է ասբեստի ազդեցության հետևանքով և ոչ էլ (առողջական վիճակը) վտանգ էր ներկայացնում իրենց կյանքի համար):

6. Դատարանը նաև ըստ էության քննել է 2-րդ հոդվածի հիմքով ներկայացված այնպիսի գանգատներ, որոնցում թեև վտանգը դեռևս չէր իրականացել, սակայն դիմումատուները պնդել են, և Դատարանն էլ համոզված էր, որ փաստացի առկա էր դիմումատուների կյանքին սպառնացող լուրջ վտանգ (*«Ռ.Ռ.-ն և այլք ընդդեմ Հունգարիայի»* §§ 26-32, որում դիմումատուները բողոքում էին վկաների պաշտպանության ծրագրից հեռացվելու վերաբերյալ, *«Մակուչյանն ու Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի»*, §§ 93-94, որտեղ հանցագործը ցանկացել էր սպանել դիմումատուին՝ փորձելով կացնով կոտրել վերջինիս սենյակի դուռը, և հակառակը՝ *«Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 30-36, որում դիմումատուն պնդել էր, որ զանգվածային լրատվության միջոցով հրապարակված հոդվածը վտանգի տակ էր դրել իր կյանքը):

7. Նույն ձևով, պոտենցիալ մահաբեր ելքով դժբախտ պատահարների (*«Ալքինն ընդդեմ Թուրքիայի»*, § 29, *«Չաքմակչին ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 32, *«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 21-24, *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 98, *«Չավիտ Թինարլիօղլուն*

ընդդեմ Թուրքիայի», § 67, *«Մարիուս Ալեքսանդրուն և Մարինելա Ստեֆանն ընդդեմ Ռումինիայի»*, § 75) կամ բնապահպանական աղետների վերաբերյալ գործերի դեպքում (*«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 155) Դատարանը երջանիկ պատահականության արդյունքում ողջ մնացած դիմումատուների գանգատները քննել է 2-րդ հոդվածի ներքո: Սկզբունքն այն է, որ այդպիսի իրավիճակներում 2-րդ հոդվածը կիրառելի է, եթե (ա) խնդրո առարկա գործողություննիր բնույթով վտանգավոր է և առնչություն ունեցող մարդկանց կյանքը ենթարկել է իրական և անխուսափելի վտանգի, կամ եթե (բ) նրանց հասցված վնասվածքները լուրջ վտանգ են ներկայացրել կյանքի համար: Համապատասխան ռիսկի կամ վնասվածքի գնահատումը կախված է տարբեր գործոններից («*Նիկոլաե Վիրջիլիու Տենասեն ընդդեմ Ռումինիայի»,* [ՄՊ], §§ 139-145):

8. *«Ջենթին ընդդեմ Բելգիայի»* գործում, որտեղ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորին բազմաթիվ փորձերից հետո չէր հաջողվել ինքնասպանություն գործել, Դատարանը գտել է, որ, հաշվի առնելով, որ քննության առարկա գործողությունը դիմումատուի կյանքը ենթարկել է իրական և անխուսափելի վտանգի (§ 40), 2-րդ հոդվածը կիրառելի է տվյալ գործի հանգամանքների նկատմամբ՝ անկախ այն փաստից, որ դիմումատուի ստացած վնասվածքները լուրջ չէին:

II. ԿՅԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (…)»

HUDOC-ի բանալի բառեր

Positive obligations (2) – Life (2-1)

Ա. Պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթը

9. 2-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է պետություններին ոչ միայն զերծ մնալ դիտավորությամբ և անօրինական կերպովմահ պատճառելուց, այլև անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար (*«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 130): Լայն առումով այս պոզիտիվ պարտավորությունն ունի երկու տարր, այն է՝ ա) ստեղծել համապատասխան նորմատիվային դաշտ և բ) ձեռնարկել գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ:

Բ. Պետության պոզիտիվ պարտավորությունների շրջանակը

10. Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածով պետությունների վրա դրված իրենց իրավասության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտավորությունն առկա է ցանկացած գործունեության կոնտեքստում (անկախ դրա պետական կամ ոչ պետական լինելու հանգամանքից), որի շրջանակներում կյանքի իրավունքը կարող է վտանգվել

(*«Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 130):

11. Այսպիսով, Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածի ներքո պետության պոզիտիվ պարտավորությունն առկա է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են օրինակ՝

- առողջապահություն (*«Կալվելին և Չիլյոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ]),
- վտանգավոր գործունեություն, ներառյալ՝ արդյունաբերական կամ բնապահպանական աղետները (*«Յոներիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], *«Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի», «Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի», «Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի», «Մ. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի»*),
- միջադեպեր, որոնք տեղի են ունենում նավի վրա (*«Լըրեյը և այլք ընդդեմ Ֆրանսիայի»* (որոշ.)), գնացքում (*«Քալենդերն ընդդեմ Թուրքիայի»*), շինհրապարակում (*«Պերեյրա Էնրիկեսն ընդդեմ Լյուքսեմբուրգի»*), խաղահրապարակում (*«Կոչեցկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության»* (որոշ.), § 26) կամ դպրոցական հաստատությունում (*«Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի»*),
- ճանապարհային անվտանգության ապահովում (*«Ռաջկովսկան ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*), արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայություններ (*«Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի»* (որոշ.)) կամ բաց ծովում սուզման աշխատանքների իրականացում (*«Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»*),
- պետական հաստատություններում պահվող խոցելի անձանց մատուցվող բժշկական խնամքի և օգնության ծառայություններ(*«Նենչևան և այլք ընդդեմ Բուլղարիայի», «Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումի նիայի»* [ՄՊ]),

- երբ պետությունը չի կարողացել պատշաճ կերպով ապահովել զինվորականների կողմից ականապատված գոտու անվտանգությունը (*«Փաշա և Էրքան Էրոլն ընդդեմ Թուրքիայի»*, *«Ալբեկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»*) կամ չպայթած զինամթերքով պալիգոնի պահպանությունը և հսկողությունը (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*) կամ երբ պետությունը բավարար արագությամբ չի արձագանքել կյանքի համար վտանգավոր հանգամանքներում անհետացման դեպքին (*«Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, *«Դոդովն ընդդեմ Բուլղարիայի»*):

12. Մի գործի շրջանակներում, երբ դիմումատուի ամուսինը մահացել էր բուժական կենտրոնի տարածքում իր վրա ընկած ծառի հարվածից, Դատարանը գտել է, որ կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պարտավորությունը ներառում էր հանրային վայրերում քաղաքացիների անվտանգությունն ապահովելուն ուղղված ողջամիտ միջոցների ձեռնարկումը (*«Այեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 67):

13. Այդուհանդերձ, Դատարանը բազմիցս ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես կյանքի իրավունքը վտանգող բոլոր դեպքերում ցանկացած անհատի անվտանգության բացարձակ երաշխիք, մասնավորապես, երբ անձը որոշ չափով ինքն է պատասխանատու իրեն չարդարացված վտանգի ենթարկած դժբախտ պատահարի համար (*«Մոլին ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), § 44, *«Կոսևան ընդդեմ Բուլղարիայի»* (որոշ.), *«Գյոքդեմիրն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 17, *«Չաքմաքն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)):

Գ. Կյանքի պաշտպանությունը տարբեր իրավիճակներում

14. Ինչպես արդեն նշվել է, պետության պոզիտիվ պարտավորությունները ծագում են տարբեր իրավիճակներում, օրինակ՝ ստորև ներկայացված դեպքերում:

1. Անձանց պաշտպանությունը ոչ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից մահաբեր ուժի գործադրումից

15. Դատարանը գտել է, որ որոշ հստակ սահմանված հանգամանքներում Կոնվենցիայի 2-րդ հոդվածը իշխանությունների համար սահմանում է գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտավորություն՝ միտված այն անհատի պաշտպանությանը, ում կյանքը վտանգված է այլ անձանց հանցավոր գործողություններից (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 115, *«Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, § 50):

16. Այդուհանդերձ, նկատի ունենալով ժամանակակից հասարակությունում կարգ ու կանոնի պահպանման, մարդու վարքագծի անկանխատեսելիության, առաջնահերթությունների և առկա ռեսուրսների հաշվառմամբ գործնական միջոցների ընտրության հետ կապված դժվարությունները, այսպիսի պարտավորությունը պետք է մեկնաբանել այնպես, որ իշխանությունների վրա չդրվի անհաղթահարելի կամ անհամաչափ բեռ: Հետևաբար, կյանքի համար ոչ բոլոր պոտենցիալ վտանգներն են իշխանությունների համար առաջացնում այդ վտանգը կանխելու ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու կոնվենցիոն պարտավորություն (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116, *«Չորեֆտակիսը և Չորեֆտակին ընդդեմ Հունաստանի»*, § 46):

17. Այս առումով Դատարանը հաշվի է առնում այնպիսի երաշխիքներ ապահովելու անհրաժեշտությունը, որպեսզի ոստիկանությունը հանցավորության դեմ պայքարի և հանցագործությունների կանխարգելման իր լիազորությունները իրականացնի՝ լիարժեք կերպով հարգելով պատշաճ իրավական ընթացակարգերը և այլ երաշխիքները, որոնք օրենքի ուժով սահմանափակում են հանցագործությունների քննության և մեղավոր անձանց արդարադատության առջև կանգնեցնելու ուղղությամբ ոստիկանության գործողությունների շրջանակը, ներառյալ այն երաշխիքները, որոնք սահմանված են Կոնվենցիայի 5-րդ և 8-րդ հոդվածներում (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

18. Պետության պոզիտիվ պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է ապացուցել, որ տվյալ պահին իշխանություններն իմացել են կամ պետք է իմանային, որ կոնկրետ անձի կամ անձանց կյանքին իրական և անմիջական վտանգ է սպառնում երրորդ անձի հանցավոր գործողությունների արդյունքում, և իրավասու մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում չեն ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք ողջամտորեն կարող էին վերացնել նման վտանգը (*«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 68, *«Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 55):

19. Դատարանի տեսանկյունից բավարար է, որ դիմումատուն հիմնավորի, որ իշխանությունները չեն ձեռնարկել իրենցից ողջամտորեն ակնկալվող անհրաժեշտ միջոցներ կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգը կանխելու համար, որի մասին նրանք իմացել են կամ պետք է իմանային: Դատարանի կարծիքով այս հարցին կարելի է պատասխանել՝ միայն հաշվի առնելով քննվող գործի բոլոր հանգամանքները (*«Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

20. Դատարանը գտել է, որ պետությունը պարտավոր է գործնական բնույթի կանխարգելիչ քայլեր ձեռնարկել նախապես որպես մահաբեր ուժի գործադրման հնարավոր թիրախ նույնականացված մեկ կամ մի քանի անձանց պաշտպանելու համար այնպիսի դեպքե- րում, ինչպիսիք են՝

- դատապարտյալի սպանություն (*«Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 57),
- ընտանեկան բռնություն (*«Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 52-53, *«Օփուզն ընդդեմ Թուրքիայի»*, § 129, *«Քուրթն ընդդեմ Ավստրիայի»**, §§ 67-80),
- քրեական դատավարության ընթացքում վկայի պաշտպանություն (*«Վան Քոլլն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 88 և *«Ա-ն և Բ-ն ընդդեմ Ռումինիայի»*, § 118),
- հակամարտության գոտում քաղաքացիական անձանց սպանություններ (*«Քիլիչն ընդդեմ Թուրքիայի»*, § 63, *«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի»*, § 88),

- ժամկետային զինծառայողի սպանություն զինվորական ծառայության ընթացքում (*«Յաբանսուն և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 91)

- մարդուն առևանգելը (*«Օլևնիկ-Սիեպլինշկան և Օլևնիկն ընդդեմԼեհաստանի»*, §125):

21. Դատարանը կիրառել է վերոնշյալ սկզբունքները նաևայն գործերով, որոնք վերաբերում են բնակչության ընդհանուր պաշտպանությունն ապահովելու պետության պարտավորությանն այնպիսի կոնկրետ դեպքերում, ինչպիսիք են՝

- բանտային արձակուրդում գտնվող կամ կիսաբաց ռեժիմում պատիժը կրող դատապարտյալի կողմից կատարված սպանություն (*«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 69),
- սպանության համար դատապարտված և հատուկ թույլտվությամբ ժամանակավորապես ազատության մեջ գտնվող անձի կողմից կատարված սպանություն (*«Չորեֆտակիսը և Չորեֆտա կին ընդդեմ Հունաստանի»*, §§ 48-49),
- ծառայողական պարտականությունների կատարումից դուրս ոստիկանի կողմից կատարված սպանություն (*«Գորովենկին և Բուգարան ընդդեմ Ուկրաինայի»*, § 32),
- փաստաբանի սպանությունն իր վստահորդի հոգեկան խնդիրներ ունեցող ամուսնու կողմից (*«Բլջակաջը և այլք ընդդեմ Խորվաթիայի»*, § 121),
- ահաբեկիչների կողմից մեծ թվով պատանդներ վերցնելու ընթացքում կատարված սպանություններ (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 482-492, ի հակադրություն՝ *«Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (որոշ.), § 173):

2. Անձանց պաշտպանությունն ինքնավնասումից

22. Դատարանը գտել է, որ որոշ հստակ հանգամանքներում 2-րդ հոդվածը կարող է ենթադրել անձին ինքնավնասումից պաշտպանելու

ուղղությամբ գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտավորություն (*«Ռենոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 81):

23. Մասնավորապես, անազատության մեջ պահվող անձինք գտնվում են խոցելի վիճակում, և իշխանությունները պարտավոր են պաշտպանել նրանց (*«Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 91): Նույն կերպ, քրեակատարողական հիմնարկների պաշտոնատար անձինք իրենց պարտականությունները պետք է կատարեն անձի իրավունքների և ազատությունների հետ համատեղելի եղա- նակով: Կարող են ձեռնարկվել ինքնավնասման հնարավորություն- ները նվազեցնող, մարդու անձնական ինքնավարությունը չխախտող ընդհանուր և նախազգուշական բնույթի միջոցներ: Դատապարտյալի նկատմամբ առավել խիստ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը և հիմնավորվածությունը կախված կլինի կոնկրետ գործի հանգա- մանքներից (*«Ռենոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 83):

24. Նույն տրամաբանությամբ, պարտադիր զինվորական ծառայություն անցնող անձանց վերաբերյալ Դատարանն ընդգծելէ, որ քանի որ ժամկետային զինծառայողները, ինչպես դատապար- տյալների դեպքում է, գտնվում են իշխանությունների բացառիկ հսկո- ղության ներքո, վերջիններս կրում են նրանց պաշտպանելու պարտա- վորություն (*«Բեքերն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 41-42, *«Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի»*, § 92):

25. Հոգեկան խանգարում ունեցող անձինք համարվում են առա- նձնապես խոցելի վիճակում գտնվող խումբ և պահանջում են պաշտ- պանություն ինքնավնասումից (*«Ռենոլդեն ընդդեմ Ֆրանսիայի»*, § 84 և *«Ս. Ֆ -ն ընդդեմ Շվեյցարիայի»*, § 78):

26. Մասնավորապես, իշխանությունները պարտավոր են ձեռ- նարկել գործնական ողջամիտ միջոցներ ինքնավնասումը կանխելու ուղղությամբ՝ անկախ նրանից՝ հոսպիտալացումները եղել են հոժա- րակամ (կամավոր), թե ոչ հոժարակամ: Այս առումով պահանջվող հատուկ միջոցները կախված են կոնկրետ գործի հանգամանքներից, և այդ հանգամանքները հաճախ տարբերվում են՝ կախված պացի-ենտի կամավոր կամ ոչ կամավոր հոսպիտալացումից: Այդուհանդերձ,

այն պացիենտների դեպքում, որոնք հոսպիտալացվել են դատարանի որոշման հիման վրա, հետևաբար՝ ոչ հոժարակամ, Եվրոպական դատարանը, սեփական գնահատմամբ, կարող է կիրառել վերահսկողության ավելի խիստ չափանիշներ («*Ֆերնանդեշ դե Օլիվեյրան ընդդեմ Պորտուգալիայի*» [ՄՊ], § 124):

27. Ի վերջո, այն դեպքերում, երբ վտանգը բխում է ինքնավնասումից, օրինակ՝ ազատազրկման վայրում կամ հոգեբուժական հաստատությունում ինքնասպանություն գործելը, պետության պոզիտիվ պարտավորության առաջացման համար անհրաժեշտ է ապացուցել, որ իրավասու մարմինները տվյալ պահին իմացել են կամ պետք է իմանային կոնկրետ անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի մասին և իրենց լիազորությունների շրջանակներում չեն ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք ողջամտորեն կարող էին չեզոքացնել այդ վտանգը (*«Յանգերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), («*Ֆերնանդեշ դե Օլիվեյրան ընդդեմ Պորտուգալիայի*» [ՄՊ], § 110):

28. Հաստատելու համար, թե արդյոք իշխանությունները տեղ յակ են եղել կամ պարտավոր էին տեղ յակ լինել տվյալ անձի կյանքին իրական և անմիջական վտանգ սպառնալու մասին, ինչն ի հայտ է բերում պատշաճ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պարտականություն, Դատարանը հաշվի է առնում մի շարք գործոններ, այդ թվում՝ i) արդյոք տվյալ անձն ունի հոգեկան առողջության խնդիրների պատմություն, ii) հոգեկան վիճակի ծանրությունը, iii) ինքնասպանության կամ ինքնավնասման նախորդ փորձերը, iv) ինքնասպանություն գործելու մտքերը կամ վտանգները, v) ֆիզիկական կամ հոգեկան խանգարման նշանները («*Ֆերնանդեշ դե Օլիվեյրան ընդդեմ Պորտուգալիայի*» [ՄՊ], § 115):

29. Բացի այդ, Դատարանը վերահաստատել է, որ ազատազրկված անձանց առողջությունն ու բարեկեցությունը պաշտպանելու պարտավորությունն ակնհայտորեն ենթադրում է ձերբակալված և կալանավորված անձանց կյանքը կանխատեսելի վտանգից պաշտպանելու պարտավորություն (*«Յերեմյաշովան և Պեչովան ընդդեմ Չեխիայի»* (վերանայված), § 117, *«Կելերն ընդդեմ Ռուսաստանի»*, § 88):

30. Գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը հիմնականում ծագում է հետևյալ ոլորտներում՝

- ազատազրկում կալանավորված անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում (*«Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի», «Աքդողդուն ընդդեմ Թուրքիայի», «Դե Դոնդերը և Դե Քլիպելն ընդդեմ Բելգիայի», «Քեթրեբն ընդդեմ Ֆրանսիայի», «Վոլկն ընդդեմ Սլովենիայի», «Միտիչն ընդդեմ Սերբիայի», «Կելերն ընդդեմ Ռուսաստանի», «Ս.Ֆ-ն ընդդեմ Շվեյցարիայի»*),
- պարտադիր զինվորական ծառայություն (*«Քիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի», «Աթամանն ընդդեմ Թուրքիայի», «Պերևեդենցևն ընդդեմ Ռուսաստանի», «Մալիք Բաբայևն ընդդեմ Ադրբեջանի»*),
- հոժարակամ կամ ոչ հոժարակամ հոգեբուժական օգնության տրամադրում (*«Ռեյնոլդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, («*Ֆերնանդեշ դե Օլիվեյրան ընդդեմ Պորտուգալիայի*» [ՄՊ], *«Հիլերն ընդդեմ Ավստրիայի»*):

31. Մի գործում, որում դիմումատուի կինն ի նշան արտաքսման դեմ բողոքի ինքնահրկիզվել էր, Դատարանը գտել է, որ, երբ որևէանձ պաշտոնատար անձանց ներկայությամբ սպառնում է ինքնասպանություն գործել և ավելին, երբ դա հուզական արձագանք է պաշտոնատար անձանց գործողություններին կամ պահանջներին, վերջիններս պետք է ծայրահեղ լուրջ վերաբերվեն նման սպառնալիքին՝ այն համարելով տվյալ անձի կյանքին սպառնացող անմիջական վտանգ՝ անկախ նրանից, թե որքան անսպասելի էր այդ սպառնալիքը: Նման դեպքերում, եթե պաշտոնատար անձինք նախապես տեղյակեն եղել այդպիսի վտանգի մասին, 2-րդ հոդվածի համաձայն ծագում է ցանկացած հնարավոր և ողջամիտ միջոցներով սպառնացող վտանգը չեզոքացնելու պետության պոզիտիվ պարտավորությունը (*«Միքայիլ Մամադովն ընդդեմ Ադրբեջանի»*, § 115):

3. Անձանց պաշտպանությունը բնապահպանական և արդյունաբերական աղետներից

32. Արդյունաբերական գործունեության ոլորտում, որը Դատարանը վտանգավոր է համարել իր բնույթով, վերջինս առանձնա- հատուկ շեշտադրել է այնպիսի կանոնակարգումների անհրաժեշ- տությունը, որոնք համահունչ են խնդրո առարկա գործունեության առանձնահատկություններին, մասնավորապես, մարդկանց կյանքի համար նման գործունեությունից բխող պոտենցիալ վտանգի աստի- ճանին: Դատարանը գտել է, որ դրանք պետք է կարգավորեն խնդրո առարկա գործունեության լիցենզավորումը, գործարկումը, շահա- գործումը, անվտանգությունը և այդ գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև շահագրգիռ բոլոր անձանց համար պետք է պարտադիր պահանջ սահմանվի ձեռնարկել գործնական բնույթի միջոցներ, որոնք կոչված կլինեն ապահովել այն անձանց արդյունավետ պաշտպանությունը, ում կյանքը կարող է վտանգվել այդ գործունեությանը բնորոշ վտանգից:

33. Նման կանխարգելիչ միջոցների շարքում առանձնակի կարևո- րություն պետք է տրվի իրազեկված լինելու հանրության իրավունքին, ինչպես սահմանված է կոնվենցիոն մարմինների նախադեպային իրավունքում, և վերաբերելի օրենսդրական կարգավորումները, հաշվի առնելով խնդրո առարկա գործունեության տեխնիկական կողմերը, պետք է նաև նախատեսեն այնպիսի պատշաճ իրավական ընթացակարգեր, որոնք թույլ կտան որոշել խնդրո առարկա գործըն- թացների թերությունները, ինչպես նաև տարբեր մակարդակներում պատասխանատու անձանց սխալները (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուր- քիայի»* [ՄՊ], § 90, *«Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 132, *«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 159):

34. Ինչ վերաբերում է կոնկրետ գործնական միջոցների ընտրու- թյանը, ապա Դատարանը բազմիցս նշել է, որ այն դեպքերում, երբ պետությունը կրում է համապատասխան միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտավորություն, դրանց ընտրությունը սկզբունքորեն

գտնվում է Բարձր պայմանավորվող կողմի հայեցողության տիրույթում: Գոյություն ունեն Կոնվենցիայով սահմանված իրավունքների երաշխավորման բազմաթիվ միջոցներ, և եթե անդամ պետությունըչի ձեռնարկել իր ներպետական իրավունքով նախատեսված որևէ հստակ միջոց, վերջինս կարող է կատարել իր պոզիտիվ պարտավո- րությունը որևէ այլ եղանակով: Այս առումով չի կարելի իշխանություն- ների վրա դնել անհաղթահարելի և անհամաչափ բեռ՝ հաշվի առնելով առաջնահերթությունների և ռեսուրսների հաշվառմամբ օպերատիվ որոշումներ կայացնելու անհրաժեշտությունը. սա արդյունք է այն բանի, որ, ինչպես Դատարանը նախկինում նշել է, պետությունը բարդ սոցիալական և տեխնիկական ոլորտներում օժտված է հայեցողու- թյան լայն շրջանակով (*«Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 134-135, *«Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»*, § 220, *«Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի»*, § 101):

35. Պատասխանող պետության կողմից իր պոզիտիվ պար- տավորությունները կատարած լինելու հանգամանքը Դատարանը գնահատում է՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները՝ պատշաճ ուշադրություն դարձնելով, ի թիվս այլնի, այնպիսի տար- րերի, ինչպիսիք են՝ իրավասու մարմինների գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, որոշումների կայացման ներպե- տական գործընթացը, ներառյալ՝ պատշաճ քննությունները և ուսում- նասիրությունները, ինչպես նաև հարցի բարդությունը, հատկապես, երբ խոսքը Կոնվենցիայի ներքո պաշտպանվող մրցակցող շահերի մասին է: Պետության վրա դրված պոզիտիվ պարտավորությունների ծավալը պայմանավորված է վտանգի բնույթով, ինչպես նաև այս կամ այն սպառնալիքի հնարավոր մեղմացման մակարդակով (*«Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 136-137, *«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 161):

36. Այն դեպքում, երբ պետությունը իրականացնում կամ կազ- մակերպում է վտանգավոր գործունեություն կամ տալիս է այդպիսին իրականացնելու թույլտվություն, պետք է օրենսդրական կարգա- վորումների և պատշաճ վերահսկողության միջոցով ապահովի, որ

այդպիսի գործունեությունից բխող վտանգը հասցվի ողջամիտ նվազագույն մակարդակի (*«Մուչիբաբիջն ընդդեմ Սերբիայի»*, § 126): Եթե, այնուամենայնիվ, վնաս է պատճառվել, ապա պետության պոզիտիվ պարտավորությունների խախտում կարձանագրվի միայն, եթե ոլորտի կանոնակարգումը կամ դրա նկատմամբ հսկողությունը եղել են ոչ բավարար, այլ ոչ այն դեպքում, երբ վնասը պատճառվել է որևէ անձի անփութության կամ միմյանց հաջորդող անբարենպաստ դեպքերի հետևանքով (*«Ստոյանովին ընդդեմ Բուլղարիայի»*, § 61):

37. Բնապահպանական աղետների ոլորտում, որտեղ պետությունը չունի հսկողություն իրականացնելու հնարավորություն, գործնական բնույթի կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու վերջինիս պարտավորությունը ենթադրում է այնպիսի միջոցների ձեռնարկում, որոնք կուժեղացնեն նման տեսակի ուժգին և անսպասելի բնական երևույթներին հակազդելու պետական մարմինների կարողությունները (*«Մ. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 173):

38. Բնապահպանական կամ արդյունաբերական աղետներից մարդկանց պաշտպանելու պարտավորությունը պատասխանող պետության կողմից չկատարելու դեպքեր Դատարանն արձանագրելէ հետևյալ հանգամանքներում՝

- արվարձանային բնակավայրի մոտակայքում գտնվող աղբավայրում պատահական պայթյունից առաջացած մահվան դեպքեր (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ]),
- կանխատեսելի սողանքի հետևանքով առաջացած մահվան դեպքեր, որոնք վրա են հասել իշխանությունների կողմից հողաշինարարական և արտակարգ իրավիճակներում օգնության տրամադրման ոլորտում որոշակի քաղաքականություններ չիրականացնելու պատճառով (*«Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*),
- անսպասելի ուժեղ ջրհեղեղի հետևանքով կյանքին սպառնացող լուրջ վտանգ, որն առաջացել էր ջրամբարից աննախադեպ մեծ ծավալով ջուր բաց թողնելու արդյունքում (*«Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*),

- պետական նավաշինական գործարանում ասբեստի շարունակական ազդեցության հետևանքով առաջացած մահվան դեպք (*«Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի»*):

39. Ի հակադրություն՝ *«Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի»* գործով, որը վերաբերում է Նորվեգիայի մայրցամաքային շելֆի վրա հորատման աշխատանքներ իրականացնող նավթային ընկերությունների կողմից իրականացված սուզման, այդ թվում ՝ փորձնական սուզման աշխատանքների արդյունքում հաշմանդամ դարձած անձանց, Դատարանը համարեց, որ ձեռնարկելով միջոցների լայն շրջանակ՝ պատասխանող պետությունը ջանք է գործադրել Հյուսիսային ծովում սուզման աշխատանքներին ներգրավված ջրասուզակների առողջության և անվտանգության պաշտպանությունն ապահովելու համար: Վերոհիշյալի հիման վրա Դատարանը եզրահանգել է, որ Կոնվեն- ցիայի 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

4. Անձանց պաշտպանությունն առողջապահության ոլորտում

ա. Ընդհանուր բնակչություն

40. Առողջապահության ոլորտում պոզիտիվ պարտավորությունները պահանջում են պետությունից ստեղծել այնպիսի նորմատիվային դաշտ, որով մասնավոր և պետական հիվանդանոցներին կպարտադրվի ձեռնարկել պացիենտների կյանքի պաշտպանության ապահովմանն ուղղված միջոցներ (*«Կալվելին և Չիլոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 49, *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 89, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 166):

41. Այս առումով օրենսդրական կարգավորման պետության պարտավորությունը պետք է ընկալել լայն իմաստով՝ դրանում ներառելով նաև նորմատիվային դաշտի արդյունավետ կատարման ապահովումը: Հետևաբար, կարգավորման պարտավորությունը ենթադրում է իրավական դրույթների իմպլեմենտացիայի, այդ թվում՝

դրանց կատարման նկատմամբ հսկողության և հարկադիր կատարման ապահովմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 190):

42. Այդուհանդերձ, պետության կողմից օրենսդրական կարգավորման պարտավորությունը խախտելու հարցը պահանջում է ենթադրյալ թերությունների հստակ մատնանշում և ոչ վերացական գնահատում: Հետևաբար, միայն այն հանգամանքը, որ նորմատիվային դաշտը որոշ առումներով կարող է թերի լինել, ինքնին բավա- րար չէ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի տեսանկյունից հարց բարձրաց- նելու համար: Հարկավոր է ապացուցել, որ տվյալ թերությունը վնաս է հասցրել պացիենտին (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 188):

43. Դատարանը շեշտել է, որ նույնիսկ այն գործերով, երբ հաստատվում է բուժաշխատողի անփութության փաստը, 2-րդ հոդվածի նյութական տարրի խախտում կարձանագրվի միայն այն դեպքում, երբ կիրառելի օրենսդրական դրույթը պատշաճ կերպով չի ապա- հովում պացիենտի կյանքի պաշտպանությունը (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 187): Այս առումով Դատարանը գտել է, որ քանի դեռ Պայմանավորվող պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել բուժաշխատողների որակավորման բարձր մակարդակն ապահովելու և պացիենտների պաշտպանությունը երաշխավորելու համար, չի կարելի ընդունել, որ այնպիսի հարցերը, ինչպիսիք են՝ բժշկական սխալը կամ հիվանդի բուժման ընթացքում բուժանձնակազմի ոչ պատշաճ համակարգումը, ինքնին բավարար են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն կյանքի իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը չկատարելու համար Պայմանավորվող պետության պատասխանատվության առաջացման համար *«Փաուլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Դոդովն ընդդեմ Բուլղարիայի»*, § 82, *«Կուդրան ընդդեմ Խորվաթիայի»*, § 102, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 187):

44. Այդուհանդերձ, չի բացառվում, որ առողջապահության ոլորտում իրավասու մարմինների գործողություններն ու անգործությունը կարող են որոշակի հանգամանքներում առաջացնել անդամ պետության պատասխանատվությունը 2-րդ հոդվածի նյութական տարրի ներքո (*«Փաուլն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)), և որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի հետ կապված հարց կարող է առաջանալ, եթե ապացուցվի, որ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները վտանգի են ենթարկել անձի կյանքը՝ հրաժարվելով վերջինիս տրամադրել բժշկական այն օգնությունը, որը ներպետա- կան օրենսդրության համաձայն տրամադրվում է բնակչության բոլոր շերտերին (*«Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 219, *«Հրիստոզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»*, § 106):

45. Խիստ բացառիկ երկու դեպքերում Դատարանն ընդունելէ, որ 2-րդ հոդվածի նյութական տարրի տեսանկյունից պետու-թյան պատասխանատվությունն առաջացել է առողջապահական ծառայություններ մատուցողների գործողությունների և անգործության հետևանքով. առաջին՝ երբ հիվանդի կյանքը գիտակցաբար վտանգվել է անհետաձգելի բժշկական օգնության հասանելիության մերժմամբ (*«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*) և երկրորդ՝ երբ բժշկական հաստատության աշխատանքի կազմակերպման համակարգային կամ կառուցվածքային թերություններն հանգեցրել են նրան, որ պացիենտը զրկված է եղել անհրաժեշտ անհետաձգելի բուժման հնարավորությունից, երբ իրավասու մարմիններն իմացել են կամ պետք է իմանային այս վտանգի մասին և անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել դա չեզոքացնելու համար՝ այդպիսով վտանգելով առհասարակ հիվանդների և, մասնավորապես, կոնկրետ հիվանդի կյանքը (*«Այդողդուն ընդդեմ Թուրքիայի»*):

46. Ըստ Դատարանի՝ անհետաձգելի բուժօգնության հասանելիության մերժման փաստն արձանագրելու համար պետք է միաժամանակ բավարարվեն հետևյալ պայմանները՝

- առաջին՝ անհրաժեշտ է, որ առողջապահական ծառայություններ մատուցողների գործողությունները և անգործությունը անցնեն սովորական բժշկական սխալի կամ անփութության

սահմանները, այն է՝ նման ծառայություններ մատուցողները, չնայած իրենց մասնագիտական պարտականություններին, հրաժարվել են հիվանդին տրամադրել անհետաձգելի բժշկական օգնություն՝ ստույգ գիտակցելով, որ այդպիսով վտանգվում է հիվանդի կյանքը,

- երկրորդ՝ պետությանը վերագրելու համար խնդրո առարկա խախտումը պետք է անկողմնակալ և անաչառ քննության արդյունքում ճանաչվի որպես համակարգային կամ կառուցվածքային,
- երրորդ՝ վիճարկվող խախտման և պացիենտին պատճառված վնասի միջև պետք է լինի պատճառահետևանքային կապ,
- և վերջապես, այդ խախտումը պետք է լինի պետության կողմից լայն իմաստով նորմատիվային դաշտ ստեղծելու իր պարտավորության չկատարման հետևանք (*«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], §§ 191-196):

47. Դատարանը քննել է մի շարք գործեր՝ կապված բուժաշխատողների անփութության և (կամ) հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության տրամադրումը մերժելու հետ, օրինակ՝

- հաշմանդամություն ունեցող երեխային դեղորայք նշանակելը՝ չնայած երեխայի մոր կողմից առարկելու հանգամանքին (*«Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)),
- տարեց կնոջ մահը բրոնխային թոքաբորբի հետևանքով (*«Սևիմ Գյունգյորն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)),
- խոցային կոլիտ ունեցող հղի կնոջ մահը (*«Զ.-ն ընդդեմ Լեհաստանի»*),
- հիվանդի մահը հիվանդանոցում, երբ մահը վրա է հասել թոքային հիվանդության բարդացման և հիվանդի կողմից բուժումից հրաժարվելու հետևանքով (*«Արսկայան ընդդեմ Ուկրաինայի»*),
- հղի կնոջ մահն այն պատճառով, որ բժիշկները հրաժարվել էին շտապ վիրահատել նրան, քանի որ նա չէր կարող հոգալ բժշկական ծախսերը (*«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*),
- նորածնի մահը շտապօգնության մեքենայի մեջ այն բանից հետո,

երբ բազմաթիվ պետական հիվանդանոցներում հրաժարվել էին ընդունել նրան (*«Ասիյե Գենչն ընդդեմ Թուրքիայի»*),

- մահվան դեպք՝ դեղորայքային միջամտության հետևանքով առաջացած սիրտ-անոթային անբավարարության պատճառով (*«Ալթուղը և այլք ընդդեմ Թուրքիայի»*)
- դիմումատուի որդու մահը հիվանդանոցում, որտեղ անհրաժեշտ լիցենզիա կամ որակավորում չունեցող բժիշկները, խախտելով ներպետական օրենսդրությունը, նրա նկատմամբ իրականացրել են չթույլատրված բժշկական գործողություններ («*Սարիշվիլի-Բոկվաձեն ընդդեմ Վրաստանի»*):

48. Մի շարք դեպքերում Դատարանը քննել է բուժօգնություն ստանալու հնարավորության բացակայության վերաբերյալ գանգատները, որոնց հիմքում ընկած է եղել պետության կողմից այս կամ այն ավանդական բուժման ծախսերն ամբողջությամբ հոգալու մերժումը: Տե՛ս օրինակ՝ *«Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), *«Պենտյացովան և այլք ընդդեմ Մոլդովայի»* (որոշ.), *«Գեորգեն ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), *«Վյատերն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.):

49. *«Հրիստոզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի»* գործով, քննելով վերջին ստադիայի քաղցկեղ ունեցող պացիենտների բողոքներն առ այն, որ իրենք հնարավորություն չեն ունեցել օգտվել փորձարկման փուլում գտնվող չարտոնագրված դեղորայքից, Դատարանը եզրակացրել է, որ բուժման ավանդական ձևերի անարդյունավետության դեպքում չարտոնագրված դեղորայքի հասանելիության առումով օրենսդրական կարգավորումներում բացեր չկան և համարել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես վերջին ստադիայի որևէ հիվանդություն ունեցող հիվանդների համար չարտոնագրված դեղորայքից օգտվելու հնարավորությունը որևէ առանձնահատուկ եղանակով կանոնակարգելու պարտավորություն (§ 108):

բ. Ազատությունից զրկված անձինք և պետության հսկողության ներքո գտնվող խոցելի անձինք

50. Դատարանը հաստատել է, որ ազատությունից զրկված բոլոր անձինք ունեն մարդկային արժանապատվության հետ համատեղելի պատժի կրման պայմաններ ունենալու իրավունք, և որ նրանց նկատմամբ նշանակված պատժի կատարման պայմաններն ու մեթոդները չպետք է ենթարկեն նրանց բարոյական տանջանքների և այնպիսի դժվարությունների, որոնք իրենց ուժգնության աստիճանով կգերազանցեն կալանքին ներհատուկ տառապանքի անխուսափելի մակարդակը: Դատարանը հավելել է, որ բացի ազատությունից զրկված անձի առողջությունից, հարկավոր է պատշաճ կերպով ապահովել նրա բարեկեցությունը՝ հաշվի առնելով ազատազրկման գործնական պահանջները (*«Ջյեջյական ընդդեմ Լեհաստանի»*, § 91):

51. Դատարանն ընդունել է, որ քրեակատարողական հիմնարկների հիվանդանոցներում մատուցվող բժշկական ծառայությունները չեն կարող միշտ լինել նույն որակի, ինչ հանրությանը բժշկական ծառայություններ մատուցող լավագույն բժշկական հաստատություններում է: Այդուհանդերձ, պետությունը պետք է երաշխավորի, որ ազատությունից զրկված անձանց առողջությունն ու բարեկեցությունը, ի թիվս այլնի, ապահովվի անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով: Իշխանությունները պետք է երաշխավորեն, որ ազատությունից զրկված անձանց ախտորոշումըև հետագա խնամքը լինի արագ և ճշգրիտ, ինչպես նաև, երբ դա պահանջում է առողջական վիճակը, նրանք գտնվեն համակարգային բուժում ենթադրող շուրջօրյա հսկողության ներքո, որը նպատակ կունենա բուժել ազատազրկված անձին կամ կանխել նրա առողջական վիճակի վատթարացումը (*«Պիտալևն ընդդեմ Ռուսաստանի»*, § 54): Այնուամենայնիվ, Կոնվենցիան չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակով պայմանավորված ազատազրկված անձին ազատ արձակելու ընդհանուր պարտավորություն սահմանող փաստաթուղթ (*«Ջյեջյական ընդդեմ Լեհաստանի»*, § 91):

52. Քանի որ պետությունն ուղղակիորեն պատասխանատու է ազատազրկված անձանց բարեկեցության համար, ուստի, եթե նման անձը մահանում է առողջական խնդրի պատճառով, ապա պետությունը

պարտավոր է բացատրություններ տալ ինչպես մահվան պատճառների, այնպես էլ մահվան վրա հասնելուց առաջ նրան տրամադրված բուժման վերաբերյալ (*«Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի»*, § 27, *«Կաթսը և այլք ընդդեմ Ուկրաինայի»*, § 104):

53. Դատարանն արձանագրել է ազատազրկված անձանց տրամադրված բժշկական օգնության թերություններ, օրինակ, հետևյալ դեպքերում՝

- թեև իրավասու մարմինները քաջատեղյակ են եղել ազատազրկված անձի քրոնիկ հիվանդությունների մասին, չեն ապահովել նրա պատշաճ հետազոտությունն ու բժշկական օգնության տրամադրումը: Նա հիվանդանոց է տեղափոխվել ուշացումով, իսկ տրամադրված վիրահատական բուժումը եղել է անորակ: Նրան դուրս են գրել հիվանդանոցից, մինչդեռ բժիշկներն իմացել են, որ հետվիրահատական բարդացումների պատճառով առկա էր անհապաղ կրկնակի վիրահատության անհրաժեշտություն: Նրանք նաև թաքցրել են վիրահատության և դրանից առաջացած բարդացումների վերաբերյալ էական կարևորություն ունեցող մանրամասներ: Քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմը շարունակել է դատապարտյալին բուժել որպես հետվիրահատական սովորական խնամք ստացող պացիենտի և չի դիտարկել նրա դեպքը որպես չափազանց ուշ կատարված վիրահատության արդյունքում առաջացած հրատապ դեպք: Ավելին, քրեակատարողական հիմնարկի հիվանդանոցը հագեցված չէր առատ արյունահոսությունը կանգնեցնելու համար անհրաժեշտ սարքավորումներով (*«Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 88-89):
- տարբեր պետական մարմինների միջև համագործակցության և համակարգման բացակայություն. դիմումատուն չի տեղափոխվել հիվանդանոց պլանային երկու վիրահատությունների

ենթարկվելու համար, առաջին ատյանի դատարանը պատշաճ կերպով և ժամանակին չի ստացել տեղեկատվություն դիմումատուի առողջական վիճակի մասին, դիմումատուն հնարավորություն չի ունեցել հետազոտվել բժիշկների կողմից իր կյանքի վերջին օրերին և նրա առողջական վիճակը հաշվի չի առնվել կալանքի ժամկետը ավտոմատ կերպով երկարաձգելիս (*«Ձյեցյական ընդդեմ Լեհաստանի»*, § 101):

- մի շարք ծանր հիվանդություններով տառապող ՄԻԱՎ դրական ախտորոշում ունեցող անձին չի տրամադրվել բժշկական խնամք. իշխանությունները հրաժարվել են նրան տեղափոխել բժշկական հաստատություն և քննել նրա միջնորդությունը առողջական վիճակի էական վատթարացմամբ պայմանավորված վաղաժամկետ ազատ արձակվելու վերաբերյալ, այնուհետև տվյալ անձը ուշացումով ազատ է արձակվել, որից հետո մահացել է ՄԻԱՎ-ի հետ կապված հիվանդություններից (*«Կաթսը և այլք ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 105-112):
- բազմաթիվ դեղերի նկատմամբ կայունություն (ռեզիստենտություն) ունեցող տուբերկուլիոզով հիվանդ առաջին դիմումատուին տրամադրված բժշկական օգնությունը եղել է անբավարար, քանի որ ախտորոշումը և երկրորդ գծի դեղորայքային բուժումն իրականացվել են ուշացումով, իսկ բժշկական անձնակազմը չի ունեցել տվյալ հիվանդությունը բուժելու համար անհրաժեշտ փորձ և գիտելիքներ (*«Մախարաձեն և Սիխարուլիձեն ընդդեմ Վրաստանի»*, §§ 90-93):

54. Դատարանը որդեգրել է համանման մոտեցում պետության խնամքի տակ գտնվող խոցելի անձանց բժշկական օգնության կապակցությամբ, երբ ներպետական իշխանությունները, չնայած նրան, որ տեղ յակ են եղել այն սարսափելի պայմանների մասին, որոնք հետագայում հանգեցրել են սոցիալական խնամքի հաստատություններում կամ հիվանդանոցներում տեղավորված անձանց մահվան, այնուամենայնիվ, անհիմն վտանգի են ենթարկել այդ մարդկանց կյանքը (տե՛ս մասնավորապես՝ «*Իրավական ռեսուրսների կենտրոնն*

ի շահ Վալենտին Կեմպեանուի ընդդեմ Ռումինիայի» [ՄՊ], §§ 131 և 143-144, որը վերաբերում է մտավոր հաշմանդամություն ունեցող և ՄԻԱՎ դրական ախտորոշում ունեցող գնչուական ծագմամբ մի երիտասարդ ռոմայի մահվան դեպքին հոգեբուժական հիվանդանոցում պատշաճ խնամքի, ներառյալ՝ բժշկական օգնության բացակայության պատճառով, և ի հակադրություն՝ «*Դումպեն ընդդեմ Լատվիայի*» (որոշ.), §§ 56 և 57, որը վերաբերում է դիմումատուի մի շարք ծանր հիվանդություններով տառապող որդուն պետական սոցիալական խնամքի հաստատությունում բժշկական օգնություն ցուցաբերելիս բժիշկների անփութության մասին պնդումներին):

5. Անձանց պաշտպանությունը դժբախտ պատահարների դեպքում

55. Դատարանը գտել է, որ 2-րդ հոդվածից բխող պոզիտիվ պարտավորությունը պահանջում է պետությունից սահմանել հանրային վայրերում մարդկանց անվտանգությունն ապահովող իրավական դաշտ և ապահովել այդ իրավակարգավորումների արդյունավետ կատարումը (*«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 69, *«Բանելնընդդեմ Լիտվայի»*, § 68):

56. Այս առումով չի կարելի բացառել, որ որոշակի հանգամանքներում հանրային վայրերում անվտանգության ապահովման քաղաքականության համատեքստում իշխանությունների գործողությունները և անգործությունը կարող են ի հայտ բերել նրանց պատասխանատվությունը՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութական տարրի ներքո: Այնուամենայնիվ, երբ անդամ պետությունը տարբեր տեսակի հանրային վայրերի առանձնահատկությունների հաշվառմամբ ընդունել է համապատասխան օրենսդրություն՝ դրանցից օգտվող անձանց պաշտպանելու նպատակով, Դատարանը չի կարող ընդու-նել, որ այնպիսի խնդիրները, ինչպիսիք են առանձին անձանց սխալ դատողությունը կամ մասնագետների միջև անփույթ համակարգումը, լինի դա հանրային, թե մասնավոր ոլորտում, ինքնին բավարար են

Կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի պաշտպանու- թյան պոզիտիվ պարտավորության համաձայն Պայմանավորվող պետության պատասխանատվությունն արձանագրելու համար («*Մա- րիուս Ալեքսանդրուն և Մարինելա Շտեֆանն ընդդեմ Ռումինիայի*», § 100):

57. Դատարանն այնուհետև ընդգծել է, որ պոզիտիվ պարտավո- րությունը չպետք է մեկնաբանել որպես պետության համար ավելորդ բեռ առաջացնող պարտավորություն, մասնավորապես, պետք է հաշվի առնել մարդկային վարքագծի անկանխատեսելիությունը և առաջնահերթությունների և առկա ռեսուրսների հաշվառմամբ օպերատիվ որոշումներ կայացնելու անհրաժեշտությունը («*Չեխոնս- կայան ընդդեմ Լեհաստանի*», § 64, «*Մարիուս Ալեքսանդրուն և Մարի- նելա Շտեֆանն ընդդեմ Ռումինիայի*», § 100):

58. Բացի այդ, Եվրոպական դատարանը վերահաստատել է,որ 2-րդ հոդվածով սահմանված պոզիտիվ պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների ընտրությունը սկզբունքորեն այն հարցն է, որը գտնվում է Պայմանավորվող պետության սեփա-կան հայեցողության տիրույթում: Կոնվենցիայով սահմանված իրավունքները երաշխավորելու համար կան տարբեր միջոցներ, և նույնիսկ եթե պետությունը չի կիրառել ներպետական օրենսդրու- թյամբ նախատեսված որևէ կոնկրետ միջոց, այն կարող է կատարելիր պոզիտիվ պարտավորությունն այլ միջոցներով («*Չեխոնսկայան ընդդեմ Լեհաստանի*», § 65, «*Մարիուս Ալեքսանդրուն և Մարինելա Շտեֆանն ընդդեմ Ռումինիայի*», § 102):

59. Ի վերջո, պետության կողմից իրավական դաշտ ապահովելու պարտավորության կատարման կամ չկատարման հարցը պահան- ջում է ենթադրյալ բացթողումների կոնկրետ, այլ ոչ թե վերացական գնահատում («*Մարիուս Ալեքսանդրուն և Մարինելա Շտեֆանն ընդդեմ Ռումինիայի*», § 103):

60. Երբ խոսքն այնպիսի գործունեության մասին է, որն իր բնույթով կարող է վտանգ ներկայացնել մարդու կյանքի համար, օրինակ՝ շինհրապարակում իրականացվող գործունեությունը,

ապա անհրաժեշտության դեպքում անձանց անվտանգությունը երաշխավորելու նպատակով պետությունը պարտավոր է ձեռ-նարկել ողջամիտ միջոցներ, այդ թվում՝ հաշվի առնելով վերոհիշյալ գործունեության առանձնահատկությունները՝ սահմանել օրենսդրա-կան կարգավորումներ (*«Չևրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 57, այլ մեջբերումներով): Մասնավորապես, անվտանգության անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում ցանկացած շինհրապարակ, հատկապես՝ բնակելի տարածքում գտնվող, կարող է կյանքի համար վտանգավոր դժբախտ պատահարների վայր հանդիսանալ՝ վտանգելով ոչ միայն պրոֆեսիոնալ շինարարներին, ովքեր ավելի լավ են ծանոթ հնարավոր ռիսկերին, այլև ընդհանուր առմամբ հասարակությանը, ներառյալ՝ այնպիսի խոցելի խմբերի, ինչպիսիք են երեխաները, որոնք կարող են հեշտությամբ ենթարկվել այդ ռիսկերին («*Չինատուլինն ընդդեմ Ռուսաստանի»*, § 28):

61. Դատարանը եզրակացրել է, որ պատասխանող պետությունը չի կատարել կյանքի իրավունքը պաշտպանելու իր պարտավորու-թյունը հետևյալ դեպքերում՝ *«Քալենդերն ընդդեմ Թուրքիայի»*, § 49, որը վերաբերում է երկաթուղային տրանսպորտի վթարի պատճառով երկու անձանց մահվան դեպքին, *«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 69, որում դիմումատուի որդին մահացել էր դպրոցում խաղալիս ստացած վնասվածքներից, երբ պատշգամբի մի մաս անջատվել էր շենքից և ընկել նրա վրա, *«Չևրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 72, որը վերաբերում է դիմումատուի 10 տարեկան որդու մահվան դեպքին, ով խեղդվել էր շինարարական հրապարակում գտնվող չծածկված և ջրով լի փոսն ընկնելու պատճառով, տե՛ս նաև՝ *«Բինբուր Ուզուն և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 49, որտեղ դիմումատուների հայրն ընկելէր լքված շենքի վերելակի հորանը:

62. Ի հակադրություն՝ Դատարանը չի արձանագրել Պատասխա-նող պետության կողմից կյանքի իրավունքը պաշտպանելու իր պար-տավորության խախտում հետևյալ գործերով կայացված վճիռներում՝

- *«Սեսիլիա Պերեյրա Էնրիկեսը և այլք ընդդեմ Լյուքսեմբուրգի»* (որոշ.), որտեղ բանվորը մահացել էր աշխատանքային դժբախտ պատահարից՝ մնալով քանդվող շենքի փլված պատի տակ,
- *«Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի»* (որոշ.), որը վերաբերում է լեռներում փրկարարական աշխատանքների իրականացմանը, *«Մոլին ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), որը վերաբերում է դպրոցի մարզասրահում տեղի ունեցած մահվան ելքով դժբախտ պատահարին,
- *«Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի»* § 107, որը վերաբերում է շարժիչային նավակի հետ բախումից հետո դիմումատուի մահվան դեպքին, ով լողալիս էր եղել չսահմանանշված լողափում,
- «*Մարիուս Ալեքսանդրուն և Մարինելա Շտեֆանն ընդդեմ Ռումինիայի»*, § 109, որը վերաբերում է հանրային գլխավոր ճանապարհով երթևեկելու ընթացքում դիմումատուների մեքենայի վրա ծառի ընկնելու պատճառով առաջացած ճանապարհատրա- նսպորտային պատահարին,
- «*Սուարես Կամպոն ընդդեմ Պորտուգալիայի»*, § 172, որը վերաբերում է դիմումատուի որդու մահվան դեպքին, ով ընկել էր ծովը՝ ծովափին անցկացվող ավանդական ուսանողական հավաքույթին մասնակցելիս, որի ընթացքում կազմակերպվում էին վտանգավոր խաղեր,
- «*Վարդոսանիձեն ընդդեմ Վրաստանի»*, § 61 որը վերաբերում է դիմումատուի որդու մահվան դեպքին. մահը վրա էր հասել շմոլ գազից թունավորման պատճառով, քանի որ, չնայած գազա-մատակարարող ընկերության նախազգուշացմանը, սխալ տեղադրված գազային ջրատաքացուցիչը կրկին միացվել էր:

Դ. Ժամանակային սահմանափակումներ

1. Կյանքի սկիզբ

63. Ի տարբերություն *Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի* 4-րդ հոդվածի, որով ամրագրվում է, որ կյանքի իրավունքը պետք է պաշտպանվի «առհասարակ սաղմնավորման պահից», Կոնվենցիայի 2-րդ հոդվածը լռում է կյանքի իրավունքի ժամանակային սահմանափակումների մասին և, մասնավորապես, չի սահմանում, թե ով է այն «անձը», ում «կյանքը» պաշտպանված է Կոնվենցիայով (*«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 75):

64. Դատարանը, հաշվի առնելով եվրոպական երկրներում կյանքի սկզբի մասին գիտական և իրավական սահմանումների վերաբերյալ միասնական կարծիքի բացակայությունը, գտել է, որ այն հարցը, թե երբ է ծագում կյանքի իրավունքը, պետք է որոշի անդամ պետությունը սեփական հայեցողության շրջանակներում (*«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 82):

65. *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ] գործով վճռում, որտեղ դիմումատուն բժիշկների անփութության պատճառով ստիպված էր թերապևտիկ նկատառումներով ենթարկվել հղիության արհեստա- կան ընդհատման, Դատարանը հարկ չհամարեց վերլուծել՝ արդյոք հղիության հարկադրված ընդհատումը գտնվում էր 2-րդ հոդվածի կիրառման տիրույթում՝ նշելով, որ անգամ ենթադրելով հանդերձ, որ այդ հոդվածը կիրառելի է, Պատասխանող պետությունը չի խախտել հանրային առողջապահության ոլորտում կյանքի պահպանությանը վերաբերող պահանջները (§ 85, նմանատիպ մոտեցում տե՛ս նաև *«Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի»*, § 109):

66. *«Էվանս ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ] գոր- ծում, որտեղ դիմումատուն բողոքել էր, որ Մեծ Բրիտանիայի օրենսդրությունը թույլ էր տալիս իր նախկին զուգընկերոջը ետ կանչել զույգի կողմից ստեղծված սաղմերի պահուստավորման և

օգտագործման վերաբերյալ իր համաձայնությունը, Դատարանն արձանագրեց, որ անգլիական օրենսդրության համաձայն՝ սաղմը չի հանդիսանում իրավունքի ինքնավար սուբյեկտ և սաղմն ինքնին չէր կարող պահանջել, ինչպես նաև իր անունից այլ անձ չէր կարող պահանջել 2-րդ հոդվածով սահմանված կյանքի իրավունք, ուստի, սաղմը, 2-րդ հոդվածի իմաստով, չէր օգտվում կյանքի իրավունքից (§§ 54-56):

2. Կյանքի ավարտին վերաբերող հարցեր

ա. Էվթանազիա

67. Դատարանը եզրահանգել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածից որևէ կերպ հնարավոր չէ բխեցնել մահանալու իրավունք՝ լինի դա այլ անձի ձեռքով, թե պետական մարմնի աջակցությամբ: Դատարանը շեշտել է, որ իր կողմից քննված բոլոր գործերում սկզբունքային հիմքը եղել է կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պարտավորությունը (*«Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 39):

68. Վերջերս քննված մի գործում, որը վերաբերում է իրավասու մարմինների կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձին ինքնասպանություն գործելուն օժանդակելու համար դեղորայք չտրամադրելուն, Դատարանը, վերահաստատելով, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի իր ամբողջության մեջ, ողջամիտ է համարել գանգատը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում քննության առնելիս հղում կատարել 2-րդ հոդվածին: Դատարանը վճռել է, որ Կոնվենցիայի այս դրույթը պարտավորեցնում էր ազգային իրավասու մարմիններին խոչընդոտել անհատին ինքնասպանություն գործել, եթե նա իր որոշումը չի կայացրել ազատորեն և ամբողջությամբ գիտակցելով իր գործողությունների նշանակությունը (*«Հաասն ընդդեմ Շվեյցարիայի»*, § 54):

բ. Կենսական ֆունկցիաների արհեստական ապահովման դադարեցում

69. *«Լամբերը և այլք ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ] գործի շրջանակներում, որը վերաբերում է կոմայի մեջ գտնվող պացիենտին կենսական ֆունկցիաների ապահովման համար անհրաժեշտ արհեստական սնուցման և օրգանիզմում ջրի բալանսավորման սարքերն անջատելու վերաբերյալ իրավասու մարմինների որոշմանը, Դատարանը նշելէ, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների միջև գոյություն չունի փոխհամաձայնություն կենսաապահովման արհեստական համակարգի միջոցով բուժման դադարեցումը թույլատրելու հարցի վերաբերյալ, չնայած որ պետությունների մեծ մասը թույլատրում է դա: Այս առումով Դատարանը նշել, որ թեև բուժման դադարեցման վերաբերյալ կարգավորումները տարբերվում են պետությունից պետություն, այնուամենայնիվ, գոյություն ունի որոշումների կայացման հարցում հիվանդի կամքի առանցքային դերակատարման վերաբերյալ միասնական մոտեցում՝ անկախ կամքի արտահայտման եղանակից: Հետևաբար, Դատարանը համարել է, որ ինչպես կյանքի ավարտին, այնպես էլ կյանքի սկզբին վերաբերող ոլորտում հարկ է պետություններին վերապահել հայեցողության որոշակի շրջանակ ոչ միայն որոշելու՝ արդյոք թույլատրել արհեստական կենսաապահովման միջոցով բուժման դադարեցումը և սահմանել այդպիսի դադարեցման մանրակրկիտ կարգավորումը, այլև հավասարակշռել պացիենտի կյանքի իրավունքի պաշտպանությունը և նրա անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի և անձնական ինքնավարության պահպանումը: Դատարանն, այնուամենայնիվ, ընդգծել է, որ սեփական հայեցողության այս շրջանակն անսահմանափակ չէ, և Դատարանն իրեն իրավունք է վերապահում ստուգել՝ արդյոք պետությունը կատարել է 2-րդ հոդվածից բխող իր պարտավորությունները (§§ 147-148):

70. Քննության առնելով բժշկական օգնության տրամադրմանկամ դադարեցման հարցը՝ Դատարանը հաշվի է առնում հետևյալ տարրերը՝ ներպետական իրավունքում և պրակտիկայում 2-րդ

հոդվածի պահանջներին համապատասխանող նորմատիվային դաշտի առկայությունը, դիմումատուի և նրա հարազատների կողմից նախկինում արտահայտված ցանկությունները և բուժանձնակազմի անդամների կարծիքը հաշվի առնելու հանգամանքը, ինչպես նաև դատական իրավական պաշտպանության միջոցի առկայությունն այն դեպքում, երբ կան կասկածներ կայացված որոշման՝ հիվանդի լավագույն շահերից բխելու վերաբերյալ (*«Գարդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 83):

III. ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ԱՐԳԵԼՔ

Ա. Մահապատիժ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»:

HUDOC-ի բանալի բառեր

Expulsion (2) – Extradition (2)

Life (2-1) – Death penalty (2-1): Prescribed by law (2-1); Accessibility (2-1); Foreseeability (2-1); Safeguards against abuse (2-1); Competent court (2-1)

1. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանությունը Կոնվենցիային կից 6-րդ և 13-րդ արձանագրությունների լույսի ներքո

71. Կոնվենցիայի նախագծի մշակման ժամանակ մահապատիժըչէր համարվում միջազգային նորմերին հակասող երևույթ: Հետևա-բար, կյանքի իրավունքը ներառում էր բացառություն, այնպես, որ 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»: Այնուամենայնիվ, հետագայում Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում տեղի է ունեցել մահապատժի *de facto* և *de jure* ամբողջական վերացմանն ուղղված զարգացում (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116):

72. Կոնվենցիային կից *6-րդ արձանագրությունը*, որով մահապատիժը վերացվել է բացառությամբ «պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների», բացվել է ստորագրության համար 1983 թվականի ապրիլի 28-ին և ուժի մեջ է մտել 1985 թվականի մարտի 1-ին: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները ստորագրել են և, բացառությամբ Ռուսաստանի, բոլորն էլ վավերացրել են այն (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 116): *13-րդ արձանագրությունը*, որով մահապատիժը վերացվեց բոլոր հանգամանքներում, ստորագրության համար բացվել էր 2002 թվականի մայիսի 3-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հուլիսի 1-ին: 2010 թվականին Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, բացառությամբ երկուսի՝ Ադրբեջանի և Ռուսաստանի, ստորագրել են այն, և բոլոր այն ստորագրած պետությունները, բացառությամբ երեքի, վավերացրել են այն (*նույն տեղում*, § 117):[1]

1 Սույն ուղեցույցի վերջին թարմացման պահի դրությամբ 6-րդ արձանագրությունը ստորագրածև վավերացրած և 13-րդ արձանագրությունը ստորագրած պետությունների թիվը մնացել է անփոփոխ: Ինչ վերաբերում է թիվ 13 Արձանագրությունը վավերացրած պետությունների

73. Դատարանի տեսանկյունից վերոշարադրյալ հանգամանք- ները և պետությունների կողմից մահապատժի մարատորիումը պահպանելուն ուղղված շարունակական գործելակերպը վկայում են այն մասին, որ 2-րդ հոդվածը փոփոխվել է այնպես, որ մահապատիժը արգելվի բոլոր հանգամանքներում (*«Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 120):

2. 2-րդ հոդվածից բխող պետության պատասխանատվությունն արտահանձնման (էքստրադիցիա) և արտաքսման վերաբերյալ գործերով

74. Կոնվենցիայի 2-րդ հոդվածն արգելում է անձի արտահանձնումը և արտաքսումը մեկ այլ պետություն, եթե էական հիմքեր կան կարծե- լու, որ այդ անձն այնտեղ հայտնվելու է մահապատժի ենթարկվելուիրական վտանգի տակ (*«Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի»*, § 577, *«Ֆ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի»* [ՄՊ], § 110):

75. Առավել մանրակրկիտ տեղեկատվություն կարելի է գտնել *«Միգրացիայի վերաբերյալ նախադեպային իրավունքի ուղեցույցում»* (*Case-Law Guide on Immigration*)

թվին, ապա այն ստորագրած պետություններից միայն մեկն (Հայաստանը) այն դեռևս չի վավերացրել:

Բ. Մահաբեր ուժի գործադրումը պաշտոնատար անձանց կողմից

Կոնվենցիայի 2-րդ հոդված

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար:»

HUDOC-ի բանալի բառեր

Life (2-1) – Use of force (2-2) – Absolutely necessary (2-2): Defence from unlawful violence (2-2); Effect lawful arrest (2-2); Prevent escape (2-2); Quell riot or insurrection (2-2)

1. Ապացույցների գնահատում

76. Եվրոպական դատարանը պետք է խիստ զգուշավորություն ցուցաբերի առաջին ատյանի դատարանի դեր ստանձնելիս, երբդա անխուսափելիորեն անհրաժեշտ է քննվող գործի հանգամանք- ներից ելնելով (*«ՄըկՔերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)): Ընդհանուր կանոնն այն է, որ, եթե տեղի են ունեցել ներպետական ընթացակարգեր, ապա Եվրոպական դատարանը չպետք է ազգային դատարանների եզրահանգումները փոխարինի

փաստերի սեփական գնահատմամբ, քանի որ հենց ներպետական դատարաններին է սկզբունքորեն վերապահված ներկայացված ապացույցների հիման վրա գործի փաստական հանգամանքների հաստատման լիազորությունը (ի թիվս բազմաթիվ այլ նախադե- պերի՝ տե՛ս *«Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 34, *«Կլաասն ընդդեմ Գերմանիայի»*, § 29): Թեև Եվրոպական դատա- րանը կաշկանդված չէ ներպետական դատարանի եզրահանգումնե- րով և ազատ է իր տրամադրության տակ եղած գործի բոլոր նյութերի հիման վրա իրականացնել իր սեփական գնահատումը, այնուամե- նայնիվ սովորական պայմաններում ներպետական դատարանների կողմից փաստերի հիման վրա արված եզրահանգումները վերանայելու համար Եվրոպական դատարանին անհրաժեշտ են անհերքելի փաստեր (*«Ավշարն ընդդեմ Թուրքիայի»*, § 283, *«Բար- բու Անգելեսկուն ընդդեմ Ռումինիայի»*, § 52):

ա. Ապացուցման չափանիշներ

77. Եվրոպական դատարանը մշակել է մի շարք սկզբունքներ՝ կիրառելի այն գանգատների նկատմամբ, որոնք քննելիս Դատա- րանը պետք է հաստատի գործի այն փաստական հանգամանքները, որոնց հետ կապված կողմերի միջև առկա են տարաձայնություն- ներ. փաստերի այսպիսի արձանագրումը պետք է հիմնված լինի ապացուցման «ողջամիտ կասկածից վեր» չափանիշի վրա, և նման ապացույցը կարող է բխել բավարար չափով հիմնավոր, ակնհայտ և համահունչ ենթադրություններից կամ եզրակացություններից կամ անհերքելի կանխավարկածներից: Այս առումով, կարող է հաշվի առնվել ապացույցների ձեռք բերման ընթացքում կողմերի դրսևո- րած վարքագիծը (*«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 160, *«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի», «Կուխալաշվիլին և այլք ընդդեմ Վրաստանի»*, § 148):

բ. Ապացուցման բեռ

78. Որևէ կոնկրետ եզրակացության հանգելու համար անհրաժեշտ վստահության մակարդակը և այս առումով ապացուցման բեռի բաշխումն ըստ էության կախված են փաստերի առանձնահատկություններից, ներկայացված մեղադրանքի և Կոնվենցիայի խնդրո առարկա հոդվածով երաշխավորված իրավունքի բնույթից (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 586):

79. Այն դեպքում, երբ խնդրո առարկա իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծամասամբ ընկնում են պետության իրավա- սու մարմինների բացառիկ իրավասության ներքո, ինչպես, օրինակ, անազատության մեջ պահվող անձանց պարագայում, ապա այս ժամանակահատվածում ստացված վնասվածքը կամ վրա հասած մահը դեպքի փաստերի վերաբերյալ հիմնավոր ենթադրություններիտեղիք է տալիս: Ապացուցման բեռն այս դեպքում ընկնում է իրավասու մարմինների վրա, որոնք պետք է ներկայացնեն բավարար և համոզիչ բացատրություն (*«Սալմանն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 100):

80. Այս սկզբունքը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ թեև չի ապացուցվել, որ անձը կալանավորվել է իրավասու մարմինների կողմից, սակայն հնարավոր է հաստատել, որ վերջինս պաշտոնապես կանչվել է ռազմական մարմինների կամ ոստիկանության կողմից, մտել է վերջիններիս վերահսկողության տակ գտնվող տարածք,և այդ պահից ի վեր նրան այլևս չեն տեսել: Նման իրավիճակում Պատասխանող պետությունը պետք է ներկայացնի այդ տարածքում տեղի ունեցածի վերաբերյալ համոզիչ և բավարար բացատրությունև ապացուցի, որ տվյալ անձը չի կալանավորվել իրավասու մարմին- ների կողմից, այլ լքել է տարածքն առանց հետագա ազատազրկման (*«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 160):

81. Նույն կերպ, զինված հակամարտություններին վերաբերող գործերում Եվրոպական դատարանն ընդլայնել է այս սկզբունքը՝ տարածելով այն այնպիսի իրավիճակների նկատմամբ, երբ անձանց գտել են վիրավոր կամ մահացած կամ անձինք անհետ կորել են

պետության բացառիկ իրավասության ներքո գտնվող գոտում, և կան *prima facie* ապացույցներ պաշտոնատար անձանց ներգրավվածության վերաբերյալ (*«Աքումը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 211, *«Ասլախանովան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 97 և հետագա հղումները):

82. Ընդ որում Դատարանն ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չէ հաստատել գործի փաստական հանգամանքները պետության իրավասու մարմիններին օբյեկտիվորեն վերագրելի պատճառներով, Պատասխանող կառավարության պարտականությունն է բավարար և համոզիչ կերպով բացատրել իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնել դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ (*«Մանսուրօղլունընդդեմ Թուրքիայի»*, § 80): Դատարանն արձանագրել է նաև այն դժվարությունները, որոնց հետ բախվում են դիմումատուներն իրենց բողոքները հիմնավորող անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերելիս, երբ անհրաժեշտ փաստաթղթերը գտնվել են բացառապես Պատաս- խանող պետության իրավասու մարմինների տրամադրության տակ և վերջիններս հրաժարվել են դրանք տրամադրել դիմումատուին: Եթե Պատասխանող կառավարությունը չի բացահայտում էական նշանակություն ունեցող այնպիսի փաստաթղթեր, որոնք կարող են թույլ տալ Դատարանին հաստատել փաստերի իսկությունը, կամ եթե չի ներկայացնում բավարար և համոզիչ բացատրություն, ապա Դատարանը կարող է անել համապատասխան եզրակացություններ (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 184): Ներպետական մակարդակում իրականացված քննության ընթացքում հավաքված ապացույցների և հաստատված փաստերի նկատմամբ Դատարանի վստահությունը մեծապես պայմանավորված է այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են՝ ներպետական մակարդակում իրականացված քննության որակը, դրա մանրակրկիտ և հետևողական բնույթը (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 586):

83. Եվ վերջապես, այն գործերով, որոնք վերաբերում են ներպետական ատյաններում նույն մեղադրանքի վերաբերյալ իրականացված քրեական դատավարությանը, պետք է հաշվի առնել այն

հանգամանքը, որ քրեական պատասխանատվությունը տարբերվումէ Կոնվենցիայի ներքո պետության կրած միջազգային իրավական պատասխանատվությունից: Դատարանի լիազորությունները սահմանափակվում են այս երկրորդ՝ միջազգային իրավական պատասխանատվության որոշմամբ: Կոնվենցիայի ներքո պատասխանատվությունը բխում է դրա դրույթներից, որոնք պետք է մեկնաբանվեն և կիրառվեն Կոնվենցիայի առարկայի և նպատակի լույսի ներքո՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի վերաբերելի սկզբունքները: Պետք չէ շփոթել պետության իրավասու մարմինների, պաշտոնատար անձանց կամ պետական ծառայողների գործողություններից բխող պետության պատասխանատվությունը ներպետական քրեական դատարանների քննության ներքո գտնվող անձնական քրեական պատասխանատվությանը վերաբերող ներպետական իրավական խնդիրների հետ: Եվրոպական դատարանի իրավասությունը չէ անձի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ եզրահանգումներ անելը (*«Թանլին ընդդեմ Թուրքիայի»*, § 111, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 182):

2. Անձանց պաշտպանությունը պաշտոնատար անձանց կողմից մահաբեր ուժի գործադրումից

ա. Իրավական դաշտ

84. Պաշտոնատար անձանց կողմից ուժի գործադրման համատեքստում կյանքի իրավունքը երաշխավորելու պետության հիմնական պարտավորությունը ենթադրում է, մասնավորապես, պատշաճ իրավական և վարչական դաշտի նախատեսում՝ սահմանելով այն սահմանափակ իրավիճակները, որոնց դեպքում իրավապահ մարմինների ներկայացուցիչները կարող են ուժ և հրազեն գործադրել՝ հաշվի առնելով վերաբերելի միջազգային ստանդարտները (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209, *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], §§ 57-59):

85. Կոնվենցիայի 2-րդ հոդվածին բնորոշ խիստ համաչափության սկզբունքին համահունչ՝ ներպետական օրենսդրական դրույթները հրազենի գործադրումը պետք է պայմանավորեն իրավիճակի մանրակրկիտ գնահատմամբ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209), որը պետք է հիմնված լինի կատարված հանցագործության բնույթի և հանցագործություն կատարած անձից բխող վտանգի աստիճանի վրա (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 96): Ավելին, իրավապահ մարմինների գործունեությունը կանոնակարգող ազգային օրենսդրությունը պետք է ապահովի պատշաճ և արդյունավետ երաշխիքների համակարգ՝ կամայականության, ուժի չարաշահման և նույնիսկ խուսափելի դժբախտ պատահարների դեմ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 209, *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ], § 58):

86. Տարբերակելով իրավապահ մարմինների «սովորական ոստիկանական գործողությունները» և հակահաբեկչական լայնամասշտաբ գործողությունները՝ Եվրոպական դատարանը գտել է, որ վերջինի պարագայում և հաճախ սուր ճգնաժամային իրավիճակներում, երբ պահանջվում են «անհատականացված» պատասխան գործողություններ, պետությունը պետք է կիրառի այնպիսի լուծում-ներ, որոնք համահունչ են ստեղծված հանգամանքներին: Այսպիսով, Դատարանը նաև ընդգծել է, որ երրորդ անձանց կողմից ոչ իրավա- չափ բռնության արդյունքում սպառնալիքի ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանությանն ուղղված օրինական գործողությունների շրջանակներում մահաբեր ուժի գործադրումը շարունակում է կարգավորվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով «բացարձակ անհրաժեշտության» խիստ կանոններով: Հետևաբար, առաջնահերթ կարևորություն ունի այն, որ ներպետական կարգավորումները բխեն այս նույն սկզբունքից և նախատեսեն հստակ ցուցումներ՝ ներառելով անհարկի վնասի վտանգը նվազեցնելու և անցանկալի հետևանքներ առաջացնող զենքի ու զինամթերքի գործադրումը բացառելու պարտավորություն (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 595):

բ. Պաշտոնատար անձանց ուսուցում և ընտրություն

87. Դատարանն ընդգծել է, որ իրավակիրառ մարմինների ներկայացուցիչները պետք է պատրաստված լինեն, որպեսզի ի վիճակի լինեն կոնկրետ հանգամանքներում գնահատել, թե արդյոք հրազենի գործադրումը բացարձակապես անհրաժեշտ է՝ ոչ միայն հետևելով համապատասխան օրենքի տառին, այլև պատշաճ կերպով հաշվի առնելով մարդկային կյանքի՝ որպես հիմնարար արժեքի նկատմամբ հարգանքի գերակայությունը (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 97, *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»*, § 110):

88. Օրինակ, այն գործերում, որոնք վերաբերում են խռովու- թյունը կամ ապստամբությունը ճնշելու համար ուժի գործադրմանը, Դատարանի գնահատականը կախված է այնպիսի հանգամանքների ուսումնասիրությունից, ինչպիսիք են՝ արդյոք իրավապահ մարմինների ներկայացուցիչները ճիշտ են սպառազինված եղել (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 71, *«Շիմշեկը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 117), արդյոք նրանք անցել են արդյունավետ ուսուցում մարդու իրավունքների և հասարակական կարգի պահպանության ոլորտում միջազգային նորմերի պահպանման վերաբերյալ, արդյոք նրանք ստացել են պարզ և հստակ հրահանգներ հրազենի գործադրման եղանակներիև թույլատրելի հանգամանքների վերաբերյալ (*նույն տեղում*, § 109): Մասնավորապես, Դատարանն ընդգծել է, որ հնարավորության դեպքում կրակ բացելուց առաջ հարկավոր է արձակել նախազգուշական կրակոցներ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 177):

89. Ավելին, պետությունները պետք է սահմանեն բարձր մասնագիտական չափանիշներ իրենց իրավապահ մարմինների համակարգերի համար և ապահովեն, որ իրավապահ մարմինների աշխատակիցները բավարարեն սահմանված չափանիշներին: Մասնավորապես, իրավապահ մարմինների աշխատակիցներին հրազենով զինելիս պետք է ոչ միայն իրականացվի անհրաժեշտ տեխնիկական պատրաստում, այլև հատուկ մանրակրկտությամբ պետք է ընտրվեն այն աշխատակիցները, ովքեր պետք է կրեն այդ զենքը

(*«Սաշո Գորգիևն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության»*, § 51):

գ. Օրինակներ

90. Կիրառելով այս սկզբունքները՝ Դատարանը, օրինակ, թերի է համարել Բուլղարիայի օրենսդրությունը, որը ոստիկանությանը թույլատրում էր կրակ բացել զինված ուժերից փախուստի դիմած ցանկացած անձի վրա, ով չի հանձնվում բանավոր զգուշացումից և օդում նախազգուշական կրակոցից անմիջապես հետո: Նախատեսված չէր կամայական մահ պատճառելը կանխող որևէ հստակ երաշխիք (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], §§ 99-102):

91. Նույն կերպ, Դատարանը նաև արձանագրել է թերություն- ներ Թուրքիայի իրավական կարգավորումներում (ընդունված՝ 1934 թվականին), որոնք թվարկում էին բազմաթիվ դեպքեր, երբ ոստիկանին իրավունք էր վերապահված գործադրել հրազեն՝ չկրելովդրա հետևանքների պատասխանատվությունը (*«Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, §§ 77-79): Փոխարենը՝ մեկ այլ գործում Դատա- րանը Կոնվենցիային համապատասխանող համարեց մի դրույթ, որը սպառիչ սահմանում էր այն իրավիճակները, երբ ոստիկանները կարող էին հրազեն գործադրել: Այս կարգավորումը հստակեցնում էր, որ հրազենի գործադրումը պետք է լինի բացառիկ միջոց, և ոտքերի ուղղությամբ կամ անկանոն կրակ բացելուց առաջ պետք է արձակվեն նախազգուշական կրակոցներ (*«Բականն ընդդեմ Թուրքիայի»*, § 51):

92. *«Մակարացիսն ընդդեմ Հունաստանի»* [ՄՊ] գործով վճռում, որը վերաբերում է ոստիկանության կողմից լուսացույցի արգելող ազդանշանին չենթարկված անձի հետապնդման դեպքին, որի ընթացքում դիմումատուն ծանր հրազենային վիրավորում էր ստա- ցել, Դատարանը գտավ, որ Հունաստանի ներպետական իրավունքն իրավապահ մարմինների աշխատակիցներին չի տրամադրել հստակ ուղեցույցներ և չափանիշներ խաղաղ պայմաններում ուժի գործադրման վերաբերյալ: Դատարանը հավելել է, որ պատշաճ

ուսուցման և հրահանգավորման բացակայության պայմաններում դիմումատուին հետապնդած և վերջապես ձերբակալած ոստիկանները անխուսափելիորեն կարող էին գործել մեծ ինքնուրույնությամբ և դիմել անխոհեմ քայլերի (§ 70):

93. *«Գորովենկին և Բուգարան ընդդեմ Ուկրաինայի» գործով կայացրած վճռում* (§ 39), որտեղ ծառայության մեջ չգտնվող ոստիկանը վիճաբանության ընթացքում իր ծառայողական զենքով սպանել էր դիմումատուների հարազատներին, Եվրոպական դատարանը գտել է, որ իշխանությունները պատշաճ կերպով չեն իրականացրել ոստիկանի ընտրությունը՝ նախքան նրան զենք տրամադրելը: Տե՛ս նաև *«Սաշո Գորգիևն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավա- կան Հանրապետության» վճիռը*, § 52:

3. Ուժի գործադրումը թույլատրող բացառություններ

94. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված բացառությունները ցույց են տալիս, որ այս հոդվածը տարածվում է դիտավորությամբ մահ պատճառելու դեպքերի վրա, սակայն դա այդ հոդվածի կարգավորման միակ առարկան չէ: 2-րդ հոդվածի տեքստը՝ ամբողջական դիտարկմամբ, վկայում է, որ 2-րդ մասով ոչ թե սահմանվում են այն իրավիճակները, երբ թույլատրվում է դիտավորությամբ մահ պատճառել, այլ նկարագրվում են այն իրավիճակները, երբ թույլատրվում է «ուժ գործադրել», ինչը, որպես չնախատեսված հետևանք, կարող է առաջացնել մահ: Այդուհանդերձ, ուժի գործադրումը պետք է լինի «բացարձակապես անհրաժեշտ», որպեսզի համապատասխանի ա), բ) և գ) ենթակետերում հիշա- տակված նպատակներից մեկին (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 148, *«Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուր- քիայի»*, § 86, *«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդերլանդների»* [ՄՊ], § 286, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 17)):

ա. Հսկողության կիրառելի չափանիշներ

95. Որպես կանոն, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում «բացարձակապես անհրաժեշտ» ձևակերպման կիրառումը վկայում է այն մասին, որ այս դեպքում հարկավոր է անհրաժեշտության չափանիշի ավելի խիստ և համապարփակ ստուգում, քան այն դեպքում,երբ որոշվում է, թե արդյոք պետության գործողությունը «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» Կոնվենցիայի 8-11-րդ հոդվածների 2-րդ մասի իմաստով: Մասնավորապես, գործադրված ուժը պետք է խստորեն համաչափ լինի 2-րդ հոդվածի 2-րդ մասի ա), բ) և գ) ենթակետերում հիշատակված նպատակներին (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 149):

96. Դրանով հանդերձ՝ Դատարանն ընդգծել է, որ ամբողջությամբ գիտակցում է ահաբեկչության դեմ պայքարում ժամանակակից պետությունների առջև ծառացած դժվարությունները և ռետրոսպեկտիվ վերլուծության վտանգները: Այս առումով Դատարանն ընդգծել է, որ անհրաժեշտ է տարբերակել ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում կայացված քաղաքական որոշումները, որոնք չեն գտնվում իր վերահսկողության տիրույթում, իշխանությունների այն գործողություններից, որոնք անմիջական ազդեցություն ունեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների վրա: Հետևաբար, 2-րդ հոդվածում կիրառվող բացարձակ անհրաժեշտության հարցը որոշելիս անհրաժեշտ է կիրառել հսկողության տարբեր մակարդակներ՝ կախված այն հանգամանքից, թե ինչ չափով են իշխանությունները վերահսկել իրավիճակը, ինչպես նաև հաշվի առնելով այս զգայուն ոլորտում օպերատիվ որոշումների կայացման հետ կապված համապատասխան այլ սահմանափակումները (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 481):

97. Այնպիսի առանձնահատուկ ոլորտում, ինչպիսին պատանդների ազատ արձակման գործողություններն են, Դատարանը գտել է, որ սովորաբար նման գործողությունները կարող են մանրակրկիտ վերահսկողության առարկա դառնալ: Այս առումով

Դատարանը հաշվի է առել հետևյալ գործոնները. i) արդյոք տվ յալ գործողությունը եղել է հանկարծակի, թե իրավասու մարմինները հնարավորություն են ունեցել ազդել իրավիճակի վրա և ձեռնարկել հատուկ նախապատրաստական միջոցներ, ii) արդյոք իշխանու-թյունները կարող էին կիրառել արտակարգ իրավիճակների համար արդեն իսկ նախատեսված ընդհանուր բնույթի գործողությունների ծրագիր, որը կապված չէր այդ կոնկրետ արտակարգ իրավիճակի հետ, iii) արդյոք իրավիճակի վերահսկողության աստիճանն ավելի բարձր է այն շենքից դուրս, որտեղ տեղի են ունենում փրկարարա-կան բնույթի միջոցառումների մեծ մասը, և iv) որքան ավելի կան- խատեսելի է վտանգը, այնքան ավելի մեծ է դրանից պաշտպանվե- լու պարտավորությունը (*«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 563).

բ. Ընդհանուր մոտեցում

98. Հաշվի առնելով այս դրույթի կարևորությունը ժողովրդա-վարական հասարակությունում՝ Դատարանը գնահատականներ տալիս պետք է հնարավորինս մանրակրկիտ ուսումնասիրի մահ պատճառելու հանգամանքները, հատկապես այն դեպքում, երբ խոսքը դիտավորությամբ մահաբեր ուժի գործադրման մասին է՝ հաշվի առնելով ոչ միայն այդ ուժը գործադրած պաշտոնատար անձանց գործողությունները, այլև գործի բոլոր հանգամանքները, ներառյալ՝ քննության առարկա գործողությունների նախապատրաս- տումն ու դրա իրականացման նկատմամբ հսկողությունը (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 150, *«Էրգին ընդդեմ Թուրքիայի»*, § 79):

99. Հասկանալի է, որ հետապնդվող նպատակի և դրան հասնե-լու համար օգտագործված միջոցների միջև պետք է լինի հավասա-րակշռություն (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 71):

100. Օրինակ, Դատարանն ընդգծել է, որ օրինական ձերբա-կալություն իրականացնելու իրավաչափ նպատակ հետապնդելով

մարդկանց կյանքը վտանգելը կարող է արդարացվել միայն բացար- ձակ անհրաժեշտության դեպքում: Այսպիսով, սկզբունքորեն բացար- ձակ անհրաժեշտության մասին խոսք լինել չի կարող, եթե հայտնի է,որ ձերբակալման ենթակա անձը որևէ մեկի կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության համար վտանգ չի ներկայացնում և չի կասկած- վում բռնի հանցագործություն կատարելու մեջ, նույնիսկ եթե մահա- բեր ուժ չգործադրելը կարող է անհնարին դարձնել հետապնդվող անձի ձերբակալումը (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 95, *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»*, § 108):

i. Պաշտոնատար անձանց գործողություններ

101. Պաշտոնատար անձանց կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվա-ծի 2-րդ մասում հռչակված նպատակներից մեկին հասնելու համար ուժի գործադրումն այս դրույթի ներքո կարող է արդարացվել, երբ դա բխել է իրադարձությունների պահին ծանրակշիռ պատճառներով հիմնավոր համարվող ազնիվ համոզմունքից, սակայն հետագայում պարզվել է հակառակը: Հակառակը պնդելու դեպքում՝ պետության և իրավապահ մարմինների անձնակազմի վրա կդրվեր չափազանց մեծ բեռ, որը կարող էր վտանգել պաշտոնատար անձանց կամ երրորդ անձանց կյանքը (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագա- վորության»*, § 200, *«Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպ- րոսի»*, § 192, *«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 138, *«Հուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 96):

102. Բացի այդ, Դատարանը հավելել է, որ քննության առարկա իրադարձությունների և գործի քննության պահի միջև ժամանակային խզման պայմաններում Դատարանը չի կարող սեփական գնա- հատմամբ փոխարինել իրավիճակին պաշտոնատար անձի կողմից տրված գնահատականը, ով ստիպված է եղել արագ արձագանքել արտակարգ իրավիճակում՝ իր համոզմամբ իր կամ երրորդ անձանց կյանքին սպառնացող վտանգը կանխելու համար (*«Բաբինսն ընդդեմ*

Միացյալ Թագավորության», § 139, *«Յուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 97):

103. Երբ Դատարանը քննության է առնում պաշտոնատար անձանց գործողությունները, հիմնական հարցադրումն այն է՝ արդյոք տվյալ անձն ունեցել է համոզմունք առ այն, որ ուժի գործադրումն անհրաժեշտ է: Այս հարցը քննելիս Դատարանը պետք է ստուգի՝ արդյոք նշված համոզմունքը եղել է սուբյեկտիվորեն ողջամիտ՝ հաշվի առնելով տվյալ պահին առկա բոլոր հանգամանքները: Եթե Դատա- րանը եզրակացնում է, որ նման համոզմունքը չի եղել սուբյեկտիվորեն ողջամիտ (այսինքն՝ այն հիմնված չի եղել սուբյեկտիվորեն համոզիչ պատճառների վրա), հավանական է, որ Դատարանը կդժվարանա ընդունել նման համոզմունքի ազնիվ և անկեղծ լինելը (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 248, թեպետև ընթացակարգային պարտավորությունների համատեքստում):

ii. Գործողության նախապատրաստումն ու դրա նկատմամբ հսկողությունը

104. Որոշելու համար՝ արդյոք ուժի գործադրումը համապատաս- խանել է 2-րդ հոդվածին, անհրաժեշտ է պարզել, թե արդյոք իրավա- պահ մարմինների գործողությունները նախապատրաստվել և դրանց նկատմամբ հսկողությունն իրականացվել է այնպես, որ հնարավո- րինս նվազագույնի հասցվեն մահաբեր ուժի հնարավոր գործադրումը կամ անզգուշությամբ մահ պատճառելու դեպքերը (*«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 136, *«Յուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի»*, § 94):

105. 2-րդ հոդվածի տեսանկյունից իրականացված գործողության նախապատրաստման և հսկողության վերաբերյալ իր գնահատա- կանը տալիս Եվրոպական դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում միջադեպի կոնտեքստին, ինչպես նաև այն հանգամանքին, թե ինչպես են զարգացել իրադարձությունները (*«Անդրոնիկուն և*

Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի», § 182, *«Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 86):

106. Դատարանի միակ խնդիրն է պարզել՝ արդյոք գործողության նախապատրաստման ու իսկողության ժամանակ իշխանություն-ները դրսևորել են պատշաճ ջանասիրություն կյանքին սպառնացող վտանգը նվազեցնելու համար և արդյոք վերջիններս անփութություն չեն դրսևորել ձեռնարկված միջոցների ընտրության հարցում (*«Բա-բինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 141):

iii. Օրինակներ

107. Եվրոպական դատարանը համարել է, որ ուժի գործադրումը չի եղել խիստ համաչափ կամ բացարձակապես անհրաժեշտ Կոնվեն-ցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակված նպատակներից որևէ մեկին հասնելու համար հետևյալ դեպքերում՝

- *«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»* (§ 71), որը վերաբերում է ցույցի ժամանակ դիմումատուի որդու սպանությանը, երբ անվտանգության ուժերը, հանդիպելով դիմադրության և իրենց տրամադրության տակ չունենալով մահակներ, վահաններ, ջրցաններ, ռետինե գնդակներ կամ արցունքաբեր գազ, օգտագործել էին գնդացիրներ: Տե՛ս նաև *«Էվրիմ Օքտեմն ընդդեմ Թուրքիայի»*, որի շրջանակներում մի անչափահաս ծանր վիրավորվել էր ցույցը ցրելու գործողության ընթացքում ոստիկանի զենքից պատահա- բար արձակված գնդակից:
- *«Կակուլին ընդդեմ Թուրքիայի»* (§ 121), որը վերաբերում է թուրք զինվորների կողմից Կիպրոսի հյուսիսային և հարավային հատվածները բաժանող բուֆերային գոտի ներթափանցած անզեն կիպրոսցու սպանությանը:
- *«Վասիլևսկան և Կալուցկան ընդդեմ Լեհաստանի»* (§ 57), որը վերաբերում է ոստիկանական գործողության ընթացքում կասկածյալի սպանությանը:
- *«Տրևալեցն ընդդեմ Բելգիայի»* (§ 87), որտեղ ոստիկանության հատուկ ստորաբաժանման ծառայողները տեղեկացված չլինելով,

որ տվյալ անձի ներկայությունը ոստիկանական գործողությանը եղել է թույլատրված, կրակոցներ էին արձակել լրագրողի վրա:

- *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], (§ 109), որում երկու անզեն դասալիք գնչուներ սպանվել էին ռազմական ոստիկանության ծառայողների կողմից նրանց ձերբակալելու փորձի ժամանակ:
- *«Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (§ 611), որտեղ մեծ թվով պատանդներ էին սպանվել Հյուսիսային Օսեթիայի Բեսլան քաղաքի դպրոցում ահաբեկիչների կողմից բազմաթիվ պատանդների վերցման կապակցությամբ իրականացված հակաահաբեկչական գործողության ընթացքում: Համեմատության համար տե՛ս *«Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 226 և 236), որում բազմաթիվ պատանդներ սպանվել են մոսկովյան թատրոնում ահաբեկիչների կողմից պատանդներ վերցնելու կապակցությամբ իրականացված հակաահաբեկչական գործողության ընթացքում:

108. Փոխարենը՝ հետևյալ գործերում Դատարանը համարել է, որ ուժի գործադրումը խիստ համաչափ է եղել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում հռչակված նպատակներից որևէ մեկին հասնելու տեսանկյունից՝

- *«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 141), որտեղ դիմումատուի եղբայրը սպանվել էր ոստիկանների կողմից իր բնակարանի երկու ժամ տևած շրջափակումից հետո: Տե՛ս նաև *«Հուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի»* վճիռը (§ 107):
- *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], (§ 194), որը վերաբերում է վերաբերում է Մեծ ութնյակի գագաթնաժողովի ընթացքում անվտանգության աշխատակցի կողմից ցուցարարի սպանությանը:
- *«Փերքն և այլք ընդդեմ Թուրքիայի»* (§ 73), որը վերաբերում է արմատական զինված շարժման դեմ իրականացված ոստիկանական գործողության ընթացքում դիմումատուների հարազատների սպանությանը (տե՛ս նաև *«Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, (§ 100), որը վերաբերում է

ոստիկանության հետ զինված բախման ընթացքում դիմումատուների հարազատների սպանության դեպքին):

Գ. Առանձին ոլորտներ

Կոնվենցիայի 2-րդ հոդված

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)

2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

HUDOC-ի բանալի բառեր

Positive obligations (2) – Life (2-1)

Use of force (2-2) – Absolutely necessary (2-2): Defence from unlawful violence (2-2); Effect lawful arrest (2-2); Prevent escape (2-2); Quell riot or insurrection (2-2)

1. Մահվան դեպքեր, որոնք վրա են հասել ձերբակալման հատուկ հնարքների գործադրման հետևանքով

109. Մի շարք գործերում, որոնցում մահը վրա է հասել իրենց բնույթով ոչ մահաբեր ձերբակալման հատուկ հնարքների կիրառման հետևանքով, Դատարանը ուսումնասիրել է այն հարցը, թե արդյոք գոյություն է ունեցել պատճառահետևանքային կապ գործադրված ուժի և անձի մահվան միջև, և արդյոք պաշտոնատար անձինք պաշտպանել են կյանքի իրավունքը՝ տրամադրելով անհրաժեշտ բժշկական օգնություն (*«Սկավուձո-Հագերն ընդդեմ Շվեյցարիայի»* (§ 55), որը վերաբերում է ոստիկանների կողմից թմրամիջոցների ազդեցության տակ գտնվող թմրամոլի ձերբակալությանը, ով այնուհետև մահացել էր, *«Սաուդն ընդդեմ Ֆրանսիայի»*, որը վերաբերում է դանդաղ շնչահեղձության հետևանքով երիտասարդի մահվան դեպքին, երբ ոստիկանները ավելի քան երեսուն րոպեների ընթացքում վերջինիս ձեռնաշղթաներով բերանքսիվայր պառկեցրել էին գետնին, *«Բուքրուրուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի»*, որում դիմումատուների հարազատը, ով ուներ հոգեկան առողջության խանգարում, մահացել էր ոստիկանական գործողության ընթացքում առաջացած սիրտ-անոթային անբավարարությունից):

2. Մահվան դեպքեր, որոնք վրա են հասել անձին անազատության մեջ պահելու ընթացքում

110. Ազատությունից զրկված անձինք գտնվում են խոցելի վիճակում և իրավասու մարմինները նրանց պաշտպանելու պարտավորություն են կրում: Հետևաբար, երբ անձը ազատությունից զրկվելու պահին գտնվել է առողջական լավ վիճակում և ազատ արձակվելիս ունեցել է վնասվածքներ, ապա պետության վրա դրվում է այդ վնասվածքների առաջացման վերաբերյալ ողջամիտ բացատրություն ներկայացնելու պարտավորությունը: Ազատազրկված անձի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի վերաբերյալ հաշվետվություն

ներկայացնելու պետության պարտավորությունը հատկապես պարտադիր է այն դեպքերում, երբ այդ անձը մահացել է (*«Սալմանն ընդդեմ Թուրքիայի»*, [ՄՊ], § 99, *«Թանլին ընդդեմ Թուրքիայի»*, § 141, *«Թեքին և Արսլանն ընդդեմ Բելգիայի»*, § 83):

111. Եվրոպական դատարանը համոզիչ չի համարել Պատասխանող պետության բացատրությունները դիմումատուների մահվան հանգամանքների վերաբերյալ հետևյալ դեպքերում՝

- *«Անգելովան ընդդեմ Բուլղարիայի»* (§ 121), որում դիմումատուի հարազատը կալանքի տակ առնվելուց երկու ժամ անց մահացել էր գանգուղեղային վնասվածքից:
- *«Քիշմիրն ընդդեմ Թուրքիայի»* (§ 105), որում դիմումատուի որդին մահացել էր Դիարբեքիրի ոստիկանության բաժանմունքում թոքերի այտուցի հետևանքով առաջացած շնչառականանբավարարությունից:
- *«Աքտաշն ընդդեմ Թուրքիայի»* (§ 294), որում դիմումատուի հարազատը կալանքի տակ գտնվելու ընթացքում մահացել էր մեխանիկական շնչահեղձությունից:
- *«Մոյզիևն ընդդեմ Լեհաստանի»* (§ 65), որում դիմումատուի որդին մահացել էր սթափարանում:
- *«Խայրուլինան ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 84-85), որում դիմումատուի ամուսինը մահացել էր ոստիկանության բաժնում ապօրինի կալանքի տակ գտնվելու ընթացքում ստացած վնասվածքներից:

3. Արտադատական մահապատիժներ

112. Դատարանը նաև քննության է առել գործեր, որոնցում անվիճելի է եղել, որ դիմումատուների հարազատները մահացել են այնպիսի հանգամանքներում, որոնք չեն ներառվում 2-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված որևէ բացառության շրջանակում: Այդպիսի գործերում, եթե Դատարանը գործում եղած ապացույցների հիման վրա հաստատված է համարում, որ դիմումատուների հարազատները սպանվել են պաշտոնատար անձանց կողմից կամ վերջիններիս թողտվության

կամ լուռ համաձայնության պայմաններում, ապա Դատարանը Պատասխանող պետությանն այդ անձանց մահվան համար պատասխանատու է համարում (*«Ավշարն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 413-416, *«Խաշիևը և Ակաևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 147, *«Էստամիրովն և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 114, *«Մուսաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 155, *«Ամուևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 83-84 և հակառակը՝ *«Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի»*, § 373, *«Բուլդանն ընդդեմ Թուրքիայի»*, § 81, *«Նուրայ Շենն ընդդեմ Թուրքիայի» (թիվ 2)*, § 173, *«Սեյհանն ընդդեմ Թուրքիայի»*, § 82):

113. Այնուամենայնիվ, նույնիսկ երբ Դատարանը ի վիճակի չէ ողջամիտ կասկածից վեր հաստատել քննության առարկա մահվան դեպքին պաշտոնատար անձի ներգրավված լինելու հանգամանքը, Դատարանը, այնուամենայնիվ, կարող է արձանագրել Պատասխանող կառավարության պատասխանատվությունը, եթե գտնում է, որ իշխանությունները չեն ձեռնարկել իրենց հասանելի ողջամիտ միջոցներ կյանքի իրավունքը պաշտպանելու համար (*«Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի»*, §§ 87 և 101, *«Քիլիչն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 64 և 77, *«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 170-171 և հակառակը՝ *«Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի»*, §§ 374 և 377):

4. Անվտանգության ապահովման կամ ռազմական բնույթի գործողություններ

114. Անվտանգության ապահովման գործողությունների համատեքստում Դատարանը գտել է, որ պետության պատասխանատվությունը չի սահմանափակվում այնպիսի իրավիճակներով, երբ ապացուցվում է, որ պաշտոնատար անձանց կողմից սխալ ուղղությամբ արձակված կրակոցներն առաջացրել են քաղաքացիական անձի մահ: Պետության պատասխանատվությունը կարող է առաջանալ նաև այն դեպքերում, երբ իշխանությունները անվտանգության ապահովման գործողության իրականացման միջոցներն ու մեթոդներն ընտրելիս չեն ձեռնարկել հնարավոր բոլոր կանխարգելիչ միջոցառումները՝

քաղաքացիական անձանց անզգուշությամբ մահ պատճառելուց խուսափելու կամ նման դեպքերը հնարավորինս նվազեցնելու նպատակով (*«Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 297):

115. Օրինակ, այս ոլորտում Դատարանը եզրակացրել է, որ՝

- զինվորականները չեն ձեռնարկել բավարար նախազգուշական միջոցներ քաղաքացիական անձանց կյանքը պաշտպանելու համար (*«Էրգին ընդդեմ Թուրքիայի»* (§ 81), որում դիմումատուի քույրը սպանվել էր անվտանգության ուժերի կողմից «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» դեմ իրականացված գաղտնի գործողության ընթացքում):

- չնայած անվտանգության ուժերի կողմից ինտենսիվ կրակ բացելու որոշումը ի պատասխան գյուղից իրենց ուղղությամբ արձակած կրակոցների եղել է բացարձակապես անհրաժեշտ կյանքի պաշտպանության տեսանկյունից, սակայն Թուրքիան չի կատարել 2-րդ հոդվածի ներքո կյանքը պաշտպանելու իր պարտավորությունը, քանի որ անվտանգության ուժերն այնուհետև չեն ստուգել, թե արդյոք քաղաքացիական անձանց շրջանում եղել էին զոհեր (*«Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (§§ 306-308), որը վերաբերում է գյուղում գտնվող ահաբեկիչներին ձերբակալելու նպատակով իրականացված ռազմական գործողությանը, որը երկու երեխաների մահվան պատճառ էր դարձել):
- ռազմական գործողությունը նախապատրաստելիս և իրականացնելիս պատշաճ շրջահայացություն չի ցուցաբերվել քաղաքացիական բնակչության կյանքը պաշտպանելու ուղղությամբ (*«Իսաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»* (§ 199), որը վերաբերում է Չեչնիայի պատերազմի ժամանակ ռուսական ռազմական օդուժի կողմից փախստականների շարասյան ռմբակոծմանը, ինչը հանգեցրել էր քաղաքացիական անձանց մահվան, տե՛ս նաև *«Աբուևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, (§ 203) և *«Բեն- զերը և այլք ընդդեմ Թուրքիայի»* (§ 184), որոնցում Դատարանը վերահաստատել է, որ քաղաքացիական բնակչության և նրանց գյուղերի զանգվածային ռմբակոծումն

օդուժի կողմից անընդունելի է ժողովրդավարական հասարակությունում և անհամատեղելի է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում ուժի գործադրման վերաբերյալ ամրագրված նպատակներից որևէ մեկի, միջազգային մարդասիրական իրավունքի սովորութային նորմերի կամ զինված հակամարտություններում ուժի գործադրումը կարգավորող միջազգային պայմանագրերի հետ:

- *«Շիրին Յիլմազն ընդդեմ Թուրքիայի»* գործով, որի շրջանակներում դիմումատուի կինը մահացել էր հրետանային կրակից, Դատարանը չի կարողացել հանգել ողջամիտ կասկածից վեր եզրահանգման, որ անվտանգության ուժերը նրան սպանել են դիտավորությամբ կամ անփութությամբ (§ 76, տե՛ս նաև *«Չենգինն ընդդեմ Թուրքիայի»*, § 44):

116. Դատարանն այնուհետև ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետք է հնարավորինս մեկնաբանվի միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների, ներառյալ՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լույսի ներքո, որոնք համընդհանուր ընդունելի և անգնահատելի դերակատարում ունեն զինված հակամարտությունների ժամանակ դաժանության և անմարդկային վերաբերմունքի մեղմացման հարցում: Միջազգային հակամարտության գոտում անդամ պետությունները պետք է պաշտպանեն այն անձանց կյանքը, ովքեր չեն մասնակցում կամ այլևս չեն մասնակցում ռազմական գործողություններին: Սա ներառում է վիրավորներին բժշկա- կան օգնության տրամադրումը: Ինչ վերաբերում է մարտերում կամ ստացված վնասվածքներից մահացած զինծառայողներին, ապա հաշվետվողականության պարտավորությունը ենթադրում է, որ նրանց մարմինները պետք է պատշաճ կերպով հողին հանձնվեն, և իշխանությունները պետք է հավաքեն և հաղորդեն տեղեկություն- ներ այդ անձանց ինքնության և ճակատագրի վերաբերյալ կամ լիազորեն զբաղվել դրանով այնպիսի մարմինների, ինչպիսին է Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 185): Այսպիսով, նույնիսկ միջազգային զինված

հակամարտության դեպքում Կոնվենցիայով ամրագրված երաշխիքները շարունակում են կիրառվել, թեպետև մեկնաբանվում են միջազգային մարդասիրական իրավունքի կանոնների հաշվառմամբ (*«Հասանն ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 104):

5. Անհետացումներ

ա. Մահվան կանխավարկած

117. Երբ անձը ազատությունից զրկվելու պահին գտնվել է առողջական լավ վիճակում և ազատ արձակվելիս ունեցել է վնասվածքներ, ապա պետությունը պարտավոր է այդ վնասվածքների առաջացման վերաբերյալ ներկայացնել ողջամիտ բացատրություններ, հակառակ դեպքում հարց է առաջանում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից: Նույն տրամաբանությամբ՝ 5-րդ հոդվածը պետության վրա դնում է անազատության մեջ պահվող ցանկացած անձի գտնվելու վայրը և իրավասու մարմինների հսկողության տակ գտնվելու հանգամանքը հայտնելու պարտավորություն: Այն հարցը, թե արդյոք իրավասու մարմինների կողմից ողջամիտ բացատրություն չներկայացնելը ազատազրկված անձի մարմնի բացակայության պայմաններում կարող է հարցեր հարուցել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի առումով, կախված է գործի բոլոր հանգամանքներից, մասնավորապես՝ կոնկրետ փաստերի վրա հիմնված բավարար անուղղակի ապացույցների առկայությունից, որոնցից ելնելով ապացուցման անհրաժեշտ չափանիշների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ազատազրկված անձը մահացել է ազատությունից զրկված լինելու ընթացքում (*«Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի»*, § 82):

118. Այս առումով անձի կալանավորման պահից անցած ժամանակահատվածը թեպետև ինքնին որոշիչ չէ, սակայն պետք է հաշվի առնվի որպես գործոն: Հարկ է ընդունել, որ որքան երկար ժամանակ է անցնում առանց ազատությունից զրկված անձի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, այնքան ավելի հավանական է, որ նա մահացել

է: Այսպիսով, ժամանակ անցնելու հանգամանքը կարող է որոշակի ազդեցություն ունենալ անուղղակի ապացույցների այլ տարրերին տրվող կարևորության վրա, նախքան հնարավոր լինի եզրակացնել,որ խնդրո առարկա անձը ենթադրաբար պետք է մահացած համար-վի: Ըստ Դատարանի՝ նման իրավիճակը դուրս է գալիս 5-րդ հոդվածի խախտում ենթադրող անօրինական կալանքի շրջանակներից: Նման մեկնաբանությունը համապատասխանում է 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի արդյունավետ պաշտպանության պահանջին, որը Կոնվենցիայի հիմնարար դրույթներից մեկն է (*«Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 201):

119. Այնուամենայնիվ, մահվան կանխավարկածը չի հաստատվում ավտոմատ կերպով. այն առաջ է քաշվում միայն գործի հանգամանքների քննությունից հետո, ընդ որում էական գործոն է համարվում այն ժամանակահատվածը, որն անցել է տվյալ անձին վերջին անգամ տեսնելու կամ նրանից տեղեկություն ունենալու պահից սկսած (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 143, *«Ասլախանովան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 100):

120. Ավելին, որևէ անձի անհետացման հարցում պետության մասնակցության հաստատումը պարտադիր (*sine qua non*) պայման չէ ապացուցելու համար, որ տվյալ անձը կարող է մահացած համարվել. որոշ հանգամանքներում ինքնին անհետացման փաստը կարող է համարվել որպես կյանքին սպառնացող վտանգ (*«Մեդովան ընդդեմ Ռուսաստանի»*, § 90):

121. Օրինակ, Չեչնիայի հակամարտության համատեքստում Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ երբ անձը ձերբակալվել է ինքնությունը չպարզված զինվորականների կողմից, և հետագայում նրա՝ կալանքի տակ գտնվելու հանգամանքը չի հաստատվել, ապաայդ իրավիճակը կարող է դիտարկվել որպես կյանքի սպառնալիք (*«Բայսաևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 119, *«Բեկսուլտանովան ընդդեմ Ռուսաստանի»*, § 83):

122. Նույն կերպ, Դատարանը համարել է, որ Թուրքիայի հարավարևելքում 1992-1996թթ. ընկած ժամանակահատվածում անձի

անհետացումը կարող էր դիտարկվել որպես կյանքի համար վտանգ ներկայացնող իրավիճակ (*«Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 57-58, *«Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 58), մասնավորապես, եթե իշխանությունները նրան կասկածել են «Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» հետ կապեր ունենալու մեջ (*«Էն-զիլ Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի»*, § 45):

բ. Պետության պատասխանատվությունը ենթադրյալ մահվան դեպքերի համար

123. Այն դեպքում, երբ Դատարանը ոչ պաշտոնական կալանքի հետևանքով անհետացած անձի ենթադրյալ մահը հաստատված է համարում ողջամիտ կասկածից վեր, ապա կարող է ծագել պետու- թյան պատասխանատվության հարցը: Քանի որ նման հանգամանքը չի կարող Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված որևէ հիմքով արդարացվել, ուստի Դատարանը Պատասխանող պետու- թյանը անհետացած անձի ենթադրյալ մահվան համար պատասխանատու է համարում (*«Աքդենիզը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 101, *«Օհանն ընդդեմ Թուրքիայի»*, § 331, *«Իփեքն ընդդեմ Թուրքիայի»*, § 168, *«Բազորկինան ընդդեմ Ռուսաստանի»*, § 111, *«Մագոմադովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 99, *«Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 60, *«Միկիևան և այլք ընդդեմ Ռուսաստանի»*, § 160, *«Կուշտովան և այլք ընդդեմ Ռուսաստան»*, § 83 և հակառակը՝ *«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 217-219, *«Նեսիբե Հարան ընդդեմ Թուրքիայի»*, § 68, *«Շաֆիևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 79, *«Կագիրովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 97):

գ. Կյանքի իրավունքը պաշտպանելու պետության պատասխանատվությունը

124. Կյանքին վտանգ սպառնացող հանգամանքներում անձի անհետացումը պետությունից պահանջում է Կոնվենցիայի 2-րդ

հոդվածից բխող պոզիտիվ պարտավորության համաձայն կոնկրետ միջոցներ ձեռնարկել անհետացած անձի կյանքի իրավունքը պաշտպանելու ուղղությամբ (*«Քոքուն ընդդեմ Թուրքիայի»*, § 132, *«Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 75):

125. Այս առումով քննչական կամ դատախազության մարմինների կողմից պաշտոնեական լիազորությունների սահմանազանցմամբ ցանկացած անփութության դրսևորում, որը կոնկրետ անձի կյանքի համար իրական և անմիջական վտանգ է ներկայացնում, կարող է առաջացնել կյանքը պաշտպանելու պոզիտիվ պարտավորության խախտում (*«Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի»*, § 170, *«Տուրլուևան ընդդեմ Ռուսաստանի»*, §§ 100-101):

6. Որպես անհատ հանդես եկող պաշտոնատար անձանց կողմից կատարված սպանություններ

126. Կոնվենցիայի անդամ պետությունը պատասխանատվություն կկրի Կոնվենցիայով երաշխավորված մարդու իրավունքների խախտման համար, որոնք տեղի են ունեցել պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս (*«Կրաստանովն ընդդեմ Բուլղարիայի»*, § 53): Այն հարցը, թե արդյոք այս կամ այն անձը հանդիսանում է պաշտոնատար անձ Կոնվենցիայի իմաստով, պետք է քննության առարկա դառնա մի շարք չափանիշ- ների լույսի ներքո, որոնցից մեկը ֆունկցիոնալ չափանիշն է (*«Ֆեր- գեչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 36): Դատարանը գտել է նաև, որ երբ պաշտոնատար անձը գործում է անօրինական կերպով, ապա այն հարցը, թե արդյոք վերջինիս գործողությունները կարող են վերա- գրվել պետությանը, պահանջում է բոլոր հանգամանքների, ինչպես նաև խնդրո առարկա վարքագծի բնույթի և հանգամանքների ամբող- ջական քննություն (*«Սաշո Գորգիևն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության»*, §§ 47-48):

127. Մասնավորապես, Դատարանը համարել է, որ պետությունը որպես կանոն ուղղակի պատասխանատվություն չի կրում որպես

անհատ հանդես եկող պաշտոնատար անձանց կողմից կատարված սպանության կամ մարմնական վնասվածք պատճառելու դեպքի համար, բացառությամբ, երբ այդ պաշտոնատար անձինք հակաօրինական արարք գործելիս իշխանությունների թողտվությամբ կամ լուռ համաձայնությամբ օգտագործում են իրենց պաշտոնական դիրքը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ դեպքը տեղի ունենալու պահին այդ պաշտոնատար անձինք կատարելիս են եղել իրենց պաշտոնական լիազորությունները, թե ոչ (*«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, § 290, *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 93, *Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի*, § 36):

128. Այնուամենայնիվ, նման դեպքերում պահպանվում է իր իրավասության ներքո գտնվող անձանց կյանքը պաշտպանելու համար պատշաճ միջոցներ ձեռնարկելու պետության վրա դրված պարտավորությունը (տե՛ս, օրինակ, *«Գորովենկին և Բուգարան ընդդեմ Ուկրաինայի»* (§§ 31-40) վճռում արտացոլված մոտեցումը):

129. Վերջերս քննված մի գործով, երբ Բուդապեշտում ՆԱՏՕ-ի շրջանակներում անցկացված դասընթացներին մասնակցելու ժամանակ ադրբեջանցի սպան սպանել էր հայ սպային և սպառնացել սպանել մեկ այլ հայ զինվորի, Դատարանը համարել է, որ Ադրբե- ջանը չի կարող պատասխանատվություն կրել տվյալ գործողություն- ների համար: Այդ առումով Դատարանը վճռորոշ նշանակություն է տվել այն փաստին, որ հանցագործը չի գործել իր ծառայողական պարտականությունների շրջանակում կամ իր վերադասի հրամանով: Դատարանը նաև մերժել է դիմումատուների փաստարկը՝ հիմնված ՄԱԿ-ի Միջազգայնորեն ոչ իրավաչափ գործողությունների համար պետությունների պատասխանատվության վերաբերյալ հոդվածների նախագծի 11-րդ հոդվածի վրա. թեև Ադրբեջանի կառավարության ձեռնարկած միջոցներն ակնհայտորեն ցույց են տվել նրա կողմից հանցագործի հանցավոր գործողությունների «հաստատումը» և «հավանությունը», համոզիչ կերպով ցույց չի տրվել, որ Ադրբեջանը «հստակ» և «միանշանակ» կերպով «ճանաչել» և «ընդունել» է նրա գործողությունները «որպես իր սեփական»՝ այդպիսով ուղղակիորեն

և ամբողջությամբ ստանձնելով մեկ զոհի փաստացի սպանությանև մյուսի սպանության փորձի համար պատասխանատվությունը (*«Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի»*, §§ 111-118):

VI. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին մաս

«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: (...)»

HUDOC-ի բանալի բառեր

Effective investigation (2-1)

Ա. Ընթացակարգային պարտավորությունների շրջանակը

130. Պաշտոնատար անձանց կողմից մահաբեր ուժի գործադրման համատեքստում պետության ընթացակարգային պարտավորություններն առաջին անգամ սահմանվեցին, երբ Դատարանը վճռեց, որ պաշտոնատար անձանց կողմից կամայական սպանությունների ընդհանուր իրավական արգելքը գործնականում կլինի անարդյունավետ, եթե չլինի վերջիններիս կողմից մահաբեր ուժի գործադրման օրինականությունը ստուգող ընթացակարգ: Դատարանն ընդգծեց, որ այս դրույթով սահմանվող կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորությունը, ընդհանրության մեջ Կոնվենցիայի 1-ին հոդվածով պետության վրա դրված ընդհանուր պարտավորության հետ՝ ապահովել «իր իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները», պահանջում է արդյունավետ քննության իրականացում,

երբ պաշտոնատար անձանց կողմից ուժի գործադրումն առաջացրել է, *inter alia*, մարդու մահ (*«Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 161):

131. Այնուհետև Եվրոպական դատարանը ընդունել է, որ նշված պարտավորությունն ի հայտ է գալիս մի շարք իրավիճակներում, երբ անձը ստացել է կյանքին սպառնացող վնասվածքներ, մահացել է կամ անհետացել բռնի կամ կասկածելի հանգամանքներում՝ անկախ այն բանից, թե ենթադրյալ պատասխանատուները հանդիսանում են պետության ներկայացուցիչներ, թե մասնավոր անձինք, ինչպես նաև անկախ այն բանից, թե արդյոք վերջիններիս ինքնությունը հայտնի է, թե ոչ, կամ այն բանից, թե արդյոք տուժողն ինքն է իրեն պատճառել այդ վնասվածքները, թե ոչ (օրինակ, ազատազրկված անձանց միջև տեղի ունեցած բռնության դեպքերի վերաբերյալ՝ *«Փոլ և Օդրի Էդվարդն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 69), վաղաժամկետ ազատված կամ սոցիալական վերաինտեգրման ծրագրում ընդգրկված դատապարտյալների կողմից կատարված սպանություններ՝ *«Մայորանոն և այլք ընդդեմ Իտալիայի»* (§§ 123-26), հայտնի կամ բարձրաստիճան անձանց սպանություններ՝ *«Կոլեվին ընդդեմ Բուլղարիայի»* (§§ 191-215), ընտանեկան բռնության դեպքեր՝ *«Օփուզն ընդդեմ Թուրքիայի»* (§§ 150-150), կասկածելի մահվան դեպքեր կամ անհետացումներ՝ *«Լորգան ընդդեմ Մոլդովայի»* (§ 26), *«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], (§ 226), ինքնասպանություն՝ *«Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի»*, *«Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի»* (§ 92)): Այս պարտավորությունը բխում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածից, որով պետության վրա դրվում է արդյունավետ քրեաիրավական նորմեր սահմանելու միջոցով կյանքի իրավունքը պաշտպանելու պարտավորություն, ինչը կզսպի անձի դեմ ուղղված ոտնձգությունների կատարումը և հիմնված կլինի այդ նորմերի խախտումները կանխարգելող, զսպող և այդպիսի նորմերի խախտման համար պատիժ նախատեսող իրավակիրառ մեխանիզմի վրա: Նշված պարտավորությունն իր ենթատեքստով պահանջում է արդյունավետ պաշտոնական քննության իրականա- ցում այն դեպքերում, երբ հիմքեր կան կարծելու, որ անձը կյանքին

սպառնացող վնասվածքներ է ստացել կասկածելի հանգամանքնե- րում, նույնիսկ եթե ենթադրյալ կատարողը պաշտոնատար անձ չէ (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 171):

132. Դատարանը հետագայում ընդլայնել է այս պարտավորության շրջանակը՝ դրանում ներառելով այնպիսի իրավիճակներ, որոնցում անձը ստացել է կյանքին սպառնացող վնասվածքներ կամ մահացել է այնպիսի հանգամանքներում, որոնք մատնանշում են պետության պոտենցիալ պատասխանատվությունը՝ ենթադրյալ անփութություն դրսևորելու հանգամանքով պայմանավորված (տե՛ս, օրինակ, առողջապահության ոլորտում՝ *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], (§ 214) և ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ՝ *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*, (§ 72)): Այս գործերով Եվրոպական դատարանը վճռել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը պետության վրա դնում է փաստերը հաստատելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և տուժողներին պատշաճ փախհատուցում տրամադրելու իրավական միջոցներով ապահովված արդյունավետ և անկախ դատական համակարգ ունենալու պարտավորություն (*«Սինիմն ընդդեմ Թուրքիայի»*, § 59, *«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 66): Դատարանն աստիճանաբար և որոշակի շտկումներով այս տեսակի գործերի շրջանակ է տեղափոխել հետաքննություն անցկացնելու պարտավորության ընդհանուր սկզբունքները, մասնավորապես՝ դրանց նվազագույն պարտադիր չափորոշիչները:[1]

Բ. Կապը Կոնվենցիայի 2-րդ հոդվածի նյութական և ընթացակարգային տարրերի միջև

133. Դատարանի նախադեպային իրավունքի շրջանակնե- րում քննություն անցկացնելու պետության պարտավորությունըդիտարկվում է որպես 2-րդ հոդվածին ներհատուկ պարտավորություն,

1 Տե՛ս «Ընթացակարգային պարտավորություններն անփութությամբ պատճառված մահվան կամ ծանր վնասվածքների դեպքում» բաժինը

որը, *inter alia,* պահանջում է, որ կյանքի իրավունքը «պաշտպանված լինի օրենքով»: Թեև այս պարտավորությունը չկատարելը կարող է հետևանքներ ունենալ 13-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքի տեսանկյունից, այնուամենայնիվ 2-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտավորությունը դիտվում է որպես առանձին պարտավորություն (*«Իլհանն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 91-92, *«Շիլհին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], §§ 153-154): Այն կարող է առան- ձին և անկախ «միջամտության» արձանագրման տեղիք տալ: Նման եզրակացությունը բխում է այն հանգամանքից, որ ընթացակարգային պարտավորությունների հարցը Դատարանը միշտ քննել է նյութական պարտավորության կատարման հարցից առանձին (իսկ անհրաժեշ- տության դեպքում՝ եզրակացրել է, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի առանձին խախտում), ընդ որում տարբեր առիթներով ընթացակար- գային պարտավորության խախտման մասին պնդումն արվել է այս դրույթի նյութական տարրի վերաբերյալ գանգատի բացակայության պայմաններում (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորու- թյան»* [ՄՊ], § 231):

Գ. Քննության նպատակը

134. 2-րդ հոդվածի համաձայն իրականացվող քննության հիմ- նական նպատակն է ապահովել կյանքի իրավունքը պաշտպանող ներպետական օրենսդրական դրույթների արդյունավետ կիրա- ռումը և մահվան դեպքերին պաշտոնատար անձանց կամ պետա- կան մարմինների ներգրավվածության դեպքում նրանց պատաս- խանատվության երաշխավորումը (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 105, *«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 110, *«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորու- թյան»* [ՄՊ], § 163):

Դ. Քննության ձևը

135. Թե քննության ինչ ձևով հնարավոր կլինի հասնել 2-րդ հոդվածով հետապնդվող նպատակներին, կախված է գործի հանգամանքներից: Անկախ քննության ընտրված ձևից՝ իրավասու մարմինները դեպքի մասին իրազեկվելուց հետո պետք է որոշումներ կայացնեն սեփական նախաձեռնությամբ: Նշված մարմինները չպետք է սպասեն մինչև մահացածի հարազատները պաշտոնական հաղորդում կներկայացնեն կամ իրենց վրա կվերցնեն քննչական որևէ գործողություն կատարելու պատասխանատվությունը (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 165):

136. Ենթադրաբար պաշտոնատար անձանց կողմից կամ նրանց հետ հանցավոր համաձայնությամբ կատարված սպանությունների համատեքստում սպանվածի հարազատների (և ոչ իշխանությունների) նախաձեռնությամբ քաղաքացիական դատավարության կարգով ձեռնարկված գործընթացները, որոնք չեն ենթադրում հանցագործության ենթադրյալ կատարողի նույնականացում կամ պատիժ, չեն կարող հաշվի առնվել պետության կողմից Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 141) իր ընթացակարգային պարտավորությունների կատարման հարցը քննելիս, քանզի պարզապես կրած վնասի համար փոխհատուցման տրամադրումը չի կարող համարվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո պետության ընթացակարգային պարտավորության կատարում (*«Մըկքերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 121, *«Բազորկինան ընդդեմ Ռուսաստանի»*, § 117, *«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 165):

137. Եվրոպական դատարանը սա բացատրում է նրանով, որ կանխամտածված սպանությունների դեպքում 2-րդ հոդվածի այնպիսի մեկնաբանությունը, որով սահմանվում է պաշտոնա- կան քննություն անցկացնելու պարտավորություն, հիմնավորվում է ոչ միայն այն հանգամանքով, որ նման տեսակի խախտման մասին ցանկացած պնդում սովորաբար ենթադրում է քրեական

պատասխանատվության առաջացում, այլև այն հանգամանքով,որ հաճախ գործնականում, երբ խոսքը պաշտոնատար անձանց կողմից կամ վերջիններիս հետ հանցավոր համաձայնությամբ ենթադրաբար կատարված սպանությունների մասին է, այդ պաշ- տոնատար անձինք և իշխանությունները գրեթե միակն են, որ գիտեն կամ կարող են իմանալ մահվան իրական հանգամանքները, այնպես որ քրեական հետապնդման, կարգապահական վարույթի, ինչպես նաև տուժողներին և նրանց ընտանիքներին իրավական պաշտպանության միջոցների իրացման հնարավորությունննապահովող պատշաճ ընթացակարգերը կախված են պաշտոնական քննության պատշաճությունից: (*«Մակարացիան ընդդեմ Հունաս- տանի»* [ՄՊ], § 73, *«Խաշիևը և Ակաևան ընդդեմ Ռուսաստանի»*,
§§ 120-121):

Ե. Հսկողության բնույթը և աստիճանը

138. Քննության արդյունավետության նվազագույն չափանիշը բավարարող հսկողության բնույթն ու աստիճանը կախված է յուրաքան- չյուր կոնկրետ դեպքի հանգամանքներից և պետք է գնահատվի գործի բոլոր փաստական հանգամանքների լույսի ներքո՝ հաշվի առնելով քննչական աշխատանքի գործնական կողմերը (*«Վալենտին Կամպե- նուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումի- նիայի»* [ՄՊ], § 147): Անհնար է իրավիճակների ողջ բազմազանության հաշվառմամբ ձևավորել քննչական գործողությունների ցուցակ կամ պարզեցված այլ չափորոշիչներ (*«Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 80):

139. Երբ անձը կասկածելի հանգամանքներում զրկվել է կյանքից պաշտոնատար անձի գործողությունների հետևանքով, իրավասու ներպետական մարմինները պետք է այս փաստերի առնչությամբ անցկացվող քննությունը ենթարկեն առանձնակի խիստ հսկողության (*«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, § 277, *«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 234):

140. Անհետացումների դեպքում, հաշվի առնելով դրանց հատուկ բնույթը, որը դրսևորվում է անորոշության և անվերահսկելիության շարունակվող իրավիճակով, երբ պատահածի վերաբերյալ տեղեկությունները չեն ներկայացվում կամ դիտավորյալ թաքցվում կամ խեղաթյուրվում են՝ դրանով իսկ երկարացնելով տուժողի հարազատների տառապանքը՝ պայմանավորված անհետացած անձի և նրա գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկությունների բացակայությամբ, առաջացնում է շարունակական իրավիճակ: Հետևաբար, նման դեպքերում ընթացակարգային պարտավորությունը տեսականորեն պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ անձի ճակատագիրը պարզ չէ: Տևական ժամանակով անհրաժեշտ քննություն չիրականացնելը դիտվում է որպես շարունակական խախտում: Սա կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ ի վերջո գործում է անձի մահացած լինելու կանխավարկածը (*«Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 148):

141. Պատվիրված սպանության դեպքերում Դատարանը գտել է, որ քննությունը չի կարող համարվել պատշաճ, եթե չեն իրականաց- վել իրական և լուրջ քննչական գործողություններ՝ ուղղված հանցագործության կազմակերպչի, այսինքն՝ սպանության պատվիրատու անձի կամ անձանց բացահայտմանը: Նման դեպքերում ներպետա- կան իշխանությունների քննությունը չպետք է սահմանափակվի միայն սպանողի՝ հանցագործությունը կատարողի ինքնության նույնականացմամբ («*Մազեպան և այլք ընդդեմ Ռուսաստանի*», §§ 75-79):

142. Եթե սպանության զոհը լրագրող է, Դատարանը, հիմնվելով Լրագրության պաշտպանության և լրագրողների և մեդիա ոլորտի այլ դերակատարների անվտանգության մասին Նախարարների կոմի- տեի CM/Rec (2016) 4 հանձնարարականի վրա, համարել է, որ խիստ կարևոր է ստուգել հանցագործության հնարավոր կապը լրագրողի մասնագիտական գործունեության հետ («*Մազեպան և այլք ընդդեմ Ռուսաստանի*», § 73):

Զ. Քննության չափանիշները

1. Անկախություն

143. Որպեսզի ենթադրաբար պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի սպանության կապակցությամբ իրականացվող քննությունը համարվի արդյունավետ, անհրաժեշտ է, որ քննություն իրականացնող անձինք անկախ լինեն քննվող հանցագործության մեջ ներգրավված անձանցից: Սա ենթադրում է ոչ միայն հիերար- խիկ կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև փաստացի անկախություն: Այստեղ նժարին դրված է ուժի գործադրման հարցում պետության մենաշնորհի նկատմամբ հանրային վստահությունը (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 232):

144. 2-րդ հոդվածը պահանջում է քննության անկախությանհարցը քննել ամբողջության մեջ, այլ ոչ թե տալ վերացական գնահա- տական (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիրե Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 222):

145. Ավելին, 2-րդ հոդվածը չի պահանջում, որ քննության համար պատասխանատու անձինք և մարմիններն ունենան բացարձակ անկախություն, այլ անհրաժեշտ է, որ դրանք բավարար չափով անկախ լինեն այն անձանցից և մարմիններից, ում պատասխա- նատվությունը ենթադրաբար կհաստատվի քննության արդյունքում: Անկախության աստիճանի պատշաճ բնույթը գնահատվում է յուրա- քանչյուր կոնկրետ դեպքի բոլոր հանգամանքների հաշվառմամբ (*նույն տեղում*, § 223):

146. Այնուամենայնիվ, երբ հարցականի տակ են քննության անկա- խությունը կամ ինստիտուցիոնալ անկախությունը, այսպիսի իրավի- ճակում, վճռորոշ նշանակություն չունենալով հանդերձ, Դատարանի մանրակրկիտ քննության առարկա պետք է դառնա այն հարցը, թե արդյոք քննությունն անցկացվել է աննկախ եղանակով: Երբ ի հայտ է գալիս քննության անկախության և անկողմնակալության հարցը, հարկավոր է փորձել պարզել, թե արդյոք և ինչ չափով է վիճահարույց

հանգամանքը ազդել քննության արդյունավետության, ինչպես նաև մահվան հանգամանքների վրա լույս սփռելու և հնարավոր մեղավորներին պատժելու քննության կարողության վրա (*նույն տեղում*, § 224):

147. Այս առումով Դատարանն ընդգծել է, որ տեղեկատվություն և աջակցություն ստանալու հարցում դատախազներն անխուսափելիորեն հիմնվում են ոստիկանության վրա, և այս իրողությունը ինքնին բավարար չէ եզրակացնելու, որ դատախազությունը չունի բավարար անկախություն ոստիկանությունից: Այդուհանդերձ, խնդիրներ կարող են առաջանալ, եթե որևէ դատախազ սերտ աշխատանքային հարաբերություններ ունի ոստիկանության որևէ կոնկրետ ստորաբաժանման հետ (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 344):

148. Դատարանն արձանագրել է, որ քննությունը չի իրականացվել անկախ, օրինակ, այն դեպքերում, երբ քննություն իրականացնող անձինք՝

- եղել են հնարավոր կասկածյալներ (*«Բեկթաշը և Յոզալփն ընդդեմ Թուրքիայի»*, § 66, *«Օրհանն ընդդեմ Թուրքիայի»*, § 342),
- եղել են այն անձի անմիջական գործընկեր, ում նկատմամբ իրականացվում է կամ կարող է իրականացվել քրեական հետապնդում (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], §§ 335-341, *«Էմարսն ընդդեմ Լատվիայի»*, §§ 85 և 95),
- հնարավոր կասկածյալների հետ գտնվել են ենթակայական կապի մեջ (*«Շանդրուն և այլք ընդդեմ Ռումինիայի»*, § 74, *«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»*, §§ 247 և հաջորդող պարբերությունները):

149. Որոշ դեպքերում Դատարանը քննչական մարմինների կոնկրետ գործողությունները համարել է անկախության բացակայության հատկանիշներ, օրինակ՝

- գործի հանգամանքները բացահայտելու հնարավորություն ընձեռող որոշակի միջոցներ չձեռնարկելը (*«Սերգեյ Շևչենկոն ընդդեմ Ուկրաինայի»*, §§ 72-73),
- կասկածյալների հայտարարություններին չափազանց մեծ կարևորություն տալը (*«Քայան ընդդեմ Թուրքիայի»*, § 89),
- քննչական մարմինների կողմից որոշակի ակնհայտ և

անհրաժեշտ գործողություններ չկատարելը (*«Օջյուրն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], §§ 90-91),

- անգործությունը (*«Ռուպան ընդդեմ Ռումինիայի» (թիվ 1)*,

§§ 123-124):

150. Դատարանը քննության անկախության խնդիր չի արձանագրել հետևյալ հանգամանքներում, երբ՝

- քննիչները և քրեական հետապնդման ենթարկվող անձինք արտերկրում իրականացվող ռազմական գործողությունների ընթացքում բնակվում էին նույն զորանոցում (*«Ջալուդն ընդդեմ Նիդերլանդների»* [ՄՊ], § 189),
- քննության նկատմամբ հսկողություն իրականացնող զինվորական դատարանը օրենքի ուժով չուներ լիարժեք անկախություն, բայց դրա հետ մեկտեղ բացակայում էին հիերարխիկ, ինստիտուցիոնալ կամ այլ բնույթի ուղղակի կապերը դատարանի և հիմնական պոտենցիալ կասկածյալի միջև, իսկ մյուս կողմից՝ դատարանի կոնկրետ գործողություններից չէր բխում գործի քննության ընթացքում անկախության և անկողմնակալության բացակայությունը (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 254):

2. Պատշաճ բնույթ

151. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով «արդյունավետ» համարվելու համար՝ անհրաժեշտ է, որ նշված դրույթի ներքո Պայմանավորվող պետության պատասխանատվությունն առաջաց- նող մահվան դեպքի քննությունը, նախ և առաջ, լինի պատշաճ (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 324): Սա նշանակում է, որ քննությունը պետք է հնարավորություն տա պարզելու, թե արդյոք ուժի գործադրումն արդարացված է եղել գործի կոնկրետ հանգամանքներում, ինչպես նաև հայտնաբերել և անհրաժեշտու- թյան դեպքում՝ պատասխանատվության ենթարկել մեղավորներն

(*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 233): Այստեղ խոսքը ոչ թե արդյունքի, այլ միջոցի պարտավորու- թյան մասին է (*«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 223, *Ջալուդն ընդդեմ Նիդեռլանդների* [ՄՊ], § 186):

152. Իշխանությունները պետք է հնարավոր ողջամիտ միջոցներ ձեռնարկեն դեպքի հետ առնչվող ապացույցների պահպանության համար, ներառյալ, *inter alia,* ականատեսների ցուցմունքները, փոր- ձագիտական եզրակացությունները, իսկ անհրաժեշտության դեպ- քում՝ դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը, որի օգնությամբ հնարավոր կլինի ստանալ վնասվածքների ամբող- ջական և ճշգրիտ նկարագրությունը, ինչպես նաև կլինիկական տվյալների վերլուծությունը, այդ թվում՝ մահվան պատճառը (*«Արմա- նի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 233): Այս առումով Եվրոպական դատարանը նշել է, որ պատշաճ քննությունը որոշակի հանգամանքներում կարող է պահանջել դիակների արտա- շիրիմում՝ անկախ մահացածի ընտանիքի առարկությունների (*«Սոլս- կան և Ռիբիկան ընդդեմ Լեհաստանի»,* §§120-121): Ավելին, պաշտո- նատար անձանց կողմից ուժի գործադրման դեպքում քննությունը պետք է լինի արդյունավետ այն իմաստով, որ հնարավորություն տա պարզելու՝ արդյոք գործադրված ուժը եղել է արդարացված, թեոչ (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ],
§ 233): Քննության ցանկացած թերացում, որը կթուլացնի մահվան պատճառը պարզելու և դրա համար պատասխանատուներին որոշե- լու կարողությունը, կարող է հանգեցնել այս չափանիշի պահանջների խախտման (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 166):

153. Մասնավորապես, քննության արդյունքում եզրակացություն- ները պետք է հիմնված լինեն գործին վերաբերող բոլոր տարրերի ման- րակրկիտ, անկողմնակալ և անաչառ վերլուծության վրա: Ակնհայտ անհրաժեշտ ուղղությամբ քննություն չիրականացնելն էականորեն նվազեցնում է գործի հանգամանքները և պատասխանատու անձանց

ինքնությունը պարզելու քննության կարողությունը (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 175):

154. Եվրոպական դատարանը քննությունը համարել է ոչ պատշաճ հետևյալ դեպքերում՝

- ձերբակալության փորձի ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից արձակված մահացու կրակոցների վերաբերյալ քննությունն ունեցել է այնպիսի թերություններ, ինչպիսիք են՝ ոստիկանության ծառայողի ձեռքերի վրա վառոդի հետքերի հայտնաբերման նպատակով դրանք չզննելը, դեպքի տեսարանները չվերականգնելը, ոստիկանության ծառայողների զենքը և զինամթերքը չզննելը, տուժողին հասցված վնասվածքը պատշաճ կերպով նկարագրող գծանկար չկազմելը, ինչպես նաև դեպքի մասնակից ոստիկաններին հարցաքննությունից առաջ միմյանցից չառանձնացնելը (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], §§ 326-332),
- դատաբժշկական փորձաքննությունը եղել է թերի (*«Թանլին ընդդեմ Թուրքիայի»*, § 153),
- իշխանությունները հիմք են ընդունել որպես մեղադրյալ հանդես եկող պաշտոնատար անձանց ներկայացրած փաստերի տարբերակը՝ առանց որևէ այլ վկայի լսելու (*«Օզալփը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 45) կամ զգալի կարևորություն են հաղորդել նրանց կողմից կազմված զեկույցին (*«Իկինչիսոյն ընդդեմ Թուրքիայի»*, § 78),
- չի իրականացվել օդանավի մատյանների ուսումնասիրություն, ինչը, այդուհանդերձ, էական հանգամանք էր ռազմական օդանավերից քաղաքացիական գյուղերը ռմբակոծելու համար պատասխանատուներին որոշելու և նրանց մեղադրանք ներկայացնելուհամար (*«Բենգերը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 196):
- հետաքննող լրագրողի պատվիրված սպանության վերաբեր-յալ քննության ընթացքում, չհետազոտելով այլ պնդումներ, քննարկման առարկա է դարձվել միայն մեկ վարկած:

155. Փոխարենը՝ հաշվի առնելով ներպետական մարմինների կողմից ձեռնարկված տարբեր միջոցառումները, Դատարանը քննությունը համարել է պատշաճ հետևյալ դեպքերում՝

- *«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], (§ 209), որը վերաբերում է զինվորական ծառայության ընթացքում դիմումատուների որդու և եղբոր մահվան դեպքի կապակցությամբ իրականացված քննությանը:
- *«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], (§ 286), որը վերաբերում է սխալմամբ որպես ենթադրյալ ահաբեկիչ նույնականացված անձի վրա մահաբեր կրակոցների դեպքի կապակցությամբ իրականացված քննությանը:
- *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], (§ 309), որը վերաբերում է Մեծ ութնյակի գագաթնաժողովի ընթացքում անվտանգության ծառայողի կողմից ցուցարարի սպանության դեպքի կապակցությամբ իրականացված քննությանը:
- *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* (§§ 64-66), որը վերաբերում է Բոսնիա և Հերցեգովինայում պատերազմի ընթացքում դիմումատուի ամուսնու անհետացման դեպքի կապակցությամբ իրականացված քննությանը:

3. Արագություն ու պատշաճ ջանասիրություն

156. 2-րդ հոդվածը պահանջում է, որ քննություններն անցկաց-վեն առանց հապաղումների (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միա- ցյալ Թագավորության»* [ՄՊ], § 237) և պատշաճ ջանասիրությամբ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 305):

157. Դատարանն ընդունում է, որ կարող են գոյություն ունենալ առանձին իրավիճակում քննության ընթացքը խոչընդոտող արգելքներ կամ դժվարություններ, այդուհանդերձ, մահաբեր ուժի գործադրման դեպքերին իշխանությունների արագ արձագանքը կարող է ընդհանուր առմամբ էական համարվել օրինականության սկզբունքի նկատմամբ հանրության վստահությունը պահպանելու և ապօրինի

գործողություններին պետության հանցակցության կամ պետության կողմից այդպիսի գործողությունների նկատմամբ հանդուրժողականություն դրսևորելու ցանկացած տպավորությունից խուսափելու համար (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 167, *«Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 224, *«Ար- մանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 237):

158. Դատարանը նշել է, որ դեպքից որոշակի ժամանակահատ-ված անցնելու փաստը կարող է ոչ միայն բացասաբար անդրադառ-նալ քննության վրա, այլև կասկածի տակ դնել քննությունն ավարտին հասցնելու շանսերը (*«Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 337):

159. Մասնավորապես, Դատարանը հետևյալ դեպքերում համա- րել է, որ ներպետական մարմինները քննությունը չեն անցկացրել, *inter alia,* բավարար արագությամբ և պատշաճ ջանասիրությամբ՝

«Քելլին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության» (§ 136), որում անվտանգության ուժերի կողմից իրականացված հատուկ գործողության ընթացքում դիմումատուների հարազատների մահվան վերաբերյալ քննությունը մեկնարկել էր այդ իրադարձություններից ութ տարի անց:

«Նաֆիյե Չեթինը և այլք ընդդեմ Թուրքիայի» (§ 42), որում քրեական հետապնդումը, որը հարուցվել էր կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմումատուների հարազատի մահվան հանգամանք- ների պարզելու և դրա համար պատասխանատու անձանց հայտնա- բերելու և պատժելու նպատակով, շարունակվել էր մոտավորապես 15 տարի:

«Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի» [ՄՊ], (§ 348), որում 1990 թվականի Ռումինիայի վարչակարգի դեմ ուղղված ցույցերի ընթացքում պարոն Մ. Մականուի մահվան դեպքի կապակցությամբ հարուց-ված քրեական հետապնդումը մեծ հաշվով դեռևս ընթանում է ավելի քան քսաներեք տարի անց:

«Հեմսվորթն ընդդեմ Միացյալ Թագավորության» (§ 74), որում Հյուսիսային Իռլանդիայում ենթադրաբար անվտանգության ուժերի

կողմից դիմումատուի հարազատների սպանության գործով դատական քննությունը մեկնարկել էր դեպքից 13 տարի անց:

«Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի» (§ 91), որում 1991 թվականին տեղի ունեցած դիմումատուի ամուսնու առևանգման և սպանության վերաբերյալ քննությունն իրականացվել էր անհիմն ձգձգումներով:

160. Այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ քրեական հետապնդման և (կամ) դրան հաջորդած դատավարության տևողությունը չափազանց երկար չի եղել «Հեզբոլլահի» շարժմանը վերագրվող սպանությունների դեպքում: Հաշվի առնելով հանցագործության բնույթը (սպանություն անհայտ անձանց կողմից) և հանցավոր կազմակերպությանը չեզոքացնելու համար անհրաժեշտ քայլերը՝ Դատարանը համարել է, որ թեև այս գործերով անցկացված քննությունները տևել են երկար, սակայն պակաս արդյունավետ չեն եղել, ընդ որում չէր կարելի պնդել, որ իրավասու մարմինները որևէ միջոցառում չեն ձեռնարկել դիմումատուների հարազատների մահվան հանգամանքների բացահայտման առնչությամբ (*«Բայրաքը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, §§ 54-55, *«Ադիյաննն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.)): Տե՛ս նաև *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»*(§ 70), *«Ջջելարը և այլք ընդդեմ Խորվաթիայի»* (§§ 91-94)՝ զինված հակամարտությունների ընթացքում մահվան դեպքերի և անհետացումների կապակցությամբ իրականացվող քննության վերաբերյալ:

4. Հանրային հսկողություն և տուժողների հարազատների մասնակցություն

161. Քննության ընթացքի և դրա արդյունքների նկատմամբ պետք է լինի բավարար հանրային հսկողություն, որպեսզի ինչպես գործնական, այնպես էլ տեսական մակարդակում հնարավոր լինի ապահովել կատարված արարքի համար պատասխանատվության հարցի լուծումը: Այս պահանջն, այնուամենայնիվ, չի ենթադրում, որ բռնի մահվան դեպքերի կապակցությամբ անցկացված քննությունների բոլոր ասպեկտները հասանելի լինեն հանրությանը: Օրինակ,

ոստիկանական հաղորդումները և քննության նյութերը կարող են պարունակել զգայուն տեղեկատվություն և դրանց հրապարակումը կարող է բացասական հետևանքներ առաջացնել մասնավոր անձանց կամ այլ վարույթներ համար, հետևաբար, այն չի կարող համարվել որպես ինքնաբերաբար 2-րդ հոդվածից բխող պահանջ: Հանրային հսկողության աստիճանը կարող է տարբերվել՝ կախվածիրավիճակից (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 353, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 304):

162. Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում տուժողի հարազատները պետք է իրենց օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ չափով ներգրավված լինեն գործի քննությանը (*«Ալ-Սկեյինին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 167): Սա չի նշանակում, որ քննություն իրականացնող մարմինները պետք է բավարարեն քննության ընթացքում տուժողի հարազատի կողմից որևէ քննչական գործողության վերաբերյալ ներկայացված բոլոր միջնորդությունները (*«Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների»* [ՄՊ], § 348, *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 304): Ավելին, ոստիկանական քննության նկատմամբ հանրային հսկողության բացակայությունը կարող է փոխհատուցվել նրանով, որ վարույթի այլ փուլերի ընթացքում գործի նյութերը հասանելի դարձվեն հանրությանը կամ տուժողի հարազատներին (*«Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 121):

163. Դատարանը համարել է, որ քննությունը հասանելի չի եղել տուժողի հարազատներին կամ չի թույլատրվել իրականացնել պատշաճ հանրային հսկողություն հետևյալ գործերում՝

- տուժողի ընտանիքը հասանելիություն չի ունեցել քննության նյութերին կամ դատավարական փաստաթղթերին (*«Օղյուրլն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 92) կամ չի տեղեկացվել քննության կարևոր զարգացումների մասին (*«Բետաևը և Բետաևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 88):
- տուժողի կինը որևէ տեղեկատվություն չի ստացել քննության ընթացքի մասին, նա հնարավորություն չի ունեցել ուսումնասիրել գործի նյութերը, և նրան որևէ փաստաթուղթ չի տրամադրվել

վկաների ցուցմունքների կամ վարույթի շրջանակներում իրականացված այլ գործողությունների վերաբերյալ (*«Մեժիևան ընդդեմ Ռուսաստանի»*, § 75):

- տուժողի հայրը չի տեղեկացվել գործը կարճվելու վերաբերյալ (*«Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի»*, § 82):
- տուժողի հարազատների մասնակցությունը քննությանը կախվածության մեջ է դրվել նրանց կողմից բողոք ներկայացնելուն զուգահեռ որպես քաղաքացիական հայցվոր ներգրավվելու միջնորդություն ներկայացնելու հանգամանքից (*«Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի»*, § 47):
- դատախազությունը փորձել է թաքցնել նախաքննության նյութերը դիմումատուներից (*«Բենզերը և այլք ընդդեմ Թուրքիայի»*, § 193):
- մահացածի հայրը հասանելիություն չէր ունեցել քրեական գործի նյութերին կամ վարչական վարույթին և իր որդու մահվան մասին տեղեկացվել էր դիահերձումից հետո միայն՝ չնայած սպանվածի մարմինը նույնականացվել էր ավելի վաղ (*«Ֆոունտասն ընդդեմ Հունաստանի»*, § 96):

164. Հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել որևէ խնդիր տուժողի հարազատների կամ հանրության համար քննության նյութերի հասանելիության առումով՝

- *«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], (§ 315), որը վերաբերում է Մեծ ութնյակի գագաթնաժողովի ընթացքում անվտանգության աշխատակցի կողմից ցուցարարի սպանության դեպքի առթիվ իրականացված քննությանը:
- *«Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (§ 161), որում դիմումատուի եղբայրը սպանվել էր ոստիկանների կողմից իր բնակարանի՝ երկու ժամ տևած շրջափակումից հետո:
- *«Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի»* (§ 69), որը վերաբերում է Բոսնիա և Հերցեգովինայում պատերազմի ընթացքում դիմումատուի ամուսնու անհետացմանը:

- *«Վարեսիական ընդդեմ Լեհաստանի»* (§ 95), որը վերաբերում է տուժողի անչափահաս հարազատի նկատմամբ քրեական դատավարությունում կիրառելի սահմանափակումներին:

Է. Քրեական հետապնդման, պատժամիջոցների և փոխհատուցման հետ կապված հարցեր

165. Գոյություն չունի որևէ մեղադրանք ներկայացնելու կամ դատավճռի կայացման, ոչ էլ այս կամ այն պատիժը նշանակելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունք, և այն հանգամանքը, որ քննությունը չի տվել որևէ կոնկրետ արդյունք կամ արդյունքները եղել են սահմանափակ, ինքնին չի վկայում, որ թույլ են տրվել խախ- տումներ (*«Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 306):

166. Այդուհանդերձ, 2-րդ հոդվածի ընթացակարգային տարրից բխող պահանջներն ընդգրկում են ավելի լայն տիրույթ, քան պաշտո- նական քննության փուլն է: Այսպիսով, եթե նախնական քննության արդյունքում ներպետական դատարաններում հարուցվել է գործի դատական քննություն, ապա ամբողջ գործընթացը, այդ թվում՝ դատական քննության փուլը, պետք է համապատասխանի օրենքով սահմանված կյանքի իրավունքը պաշտպանելու պոզիտիվ պարտա- վորության պահանջներին (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 95, *Ալի և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի*, § 61):

167. Այս առումով Դատարանը նշել է, որ դեպքերի սովորական ընթացքի պայմաններում անկախ և անկողմնակալ դատավորի կողմից իրականացվող դատաքննությունը պետք է համարվի լուրջ և արդյունավետ երաշխիք գործի փաստերի հաստատման և քրեա- կան պատասխանատվության հարցը որոշելիս (*«ՄըկՔերն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 134): Այդուհանդերձ, չի կարելի բացառել, որ, օրինակ, թերություններով իրականացված նախնական քննությունը կարող է բացասաբար անդրադառնալ մահվան դեպքի համար պատասխանատուներին որոշելու Դատարանի կարողության վրա (*«Աղդաշն ընդդեմ Թուրքիայի»*, § 102):

168. Եվրոպական դատարանը մեծապես հարգում է վատ վերաբերմունքի և սպանության համար պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակվող պատժամիջոցների ընտրության ներպետական դատարանների իրավունքը: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը պետք է իրացնի հսկողության և միջամտության իր լիազորությունն այն դեպքերում, երբ առկա է ակնհայտ անհամաչափություն կատարված հանցագործության և նշանակված պատժի միջև (*«Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության»* [ՄՊ], § 285):

169. Օրինակ, Դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներից բխող ընթացակարգային պարտավորությունները չեն կարող կատարված համարվել, երբ քննությունն ավարտվել է իրավասու մարմինների անգործության պատճառով քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը լրանալու հիմքով (*«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռումինիայի»*, § 144):

170. Նույն կերպ, պաշտոնատար անձանց կողմից վատ վերաբերմունքի արդյունքում վրա հասած մահվան դեպքի համատեքստում Եվրոպական դատարանը համարել է, որ ազատազրկման դատապարտված ոստիկանների նկատմամբ նշանակված պատժի կատարումը կասեցնելը որոշ չափով նույնանում է համաներման հետ, և որ սա անթույլատրելի է Դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում, քանի որ նշված պաշտոնատար անձինք, չնայած իրենց նկատմամբ կայացրած դատավճիռներին, փաստացի օգտվում էին անպատժելիությունից (*«Ալի և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի»*, § 69):

171. Ավելին, Եվրոպական դատարանի կողմից գործի վերանայումը չի սահմանափակվում ներպետական ատյանների կողմից ի սկզբանե նշանակված պատիժների խստության նկատմամբ հսկողությամբ, այլ ընդգրկում է նաև հետագայում դրանց կատար- ման եղանակը (*«Էնուկիձեն և Գիրգվիլիանին ընդդեմ Վրաստանի»* (§§ 269 և 275) գործով կայացրած վճռի շրջանակներում Դատարանն արձանագրել է 2-րդ հոդվածի ընթացակարգային տարրի խախ-տում, *inter alia*, պայմանավորված այն հանգամանքով, որ պատժի

կրումից վաղաժամկետ ազատելով՝ դատապարտյալների նկատ- մամբ դրսևորվել է անհիմն մեղմ վերաբերմունք, *«Կիտանովսկա Ստանոյկովիչը և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլա- վական Հանրապետության»* (§ 33) գործով կայացրած վճռի շրջա- նակներում Դատարանը ազատազրկման ձևով նշանակված պատժի կատարումն անհիմն ձգձգելու պատճառով արձանագրել է 2-րդ հոդվածի ընթացակարգային տարրի խախտում): Այս կապակցու- թյամբ Դատարանը շեշտել է, որ արդյունավետ քննություն իրակա- նացնելու վերաբերյալ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով սահմանված պահանջը կարող է նաև մեկնաբանվել որպես պետությունների վրա դրվող պարտականություն առանց անհարկի ձգձգումների կատա- րել իրենց վերջնական դատավճիռները: Դատարանը գտել է, որ կյանքի իրավունքի համատեքստում նշանակված պատժի կատա- րումը պետք է դիտարկվի որպես պետության՝ սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային պարտավորության անբաժա- նելի մաս (*«Կիտանովսկա-Ստանոյկովիչը և այլք ընդդեմ Մակեդո- նիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության»*, § 32, «*Ակե- լիենեն ընդդեմ Լիտվայի»*, § 85 գործերը, երբ Դատարանը, հաշվի առնելով մեղադրական դատավճռի կայացումից հետո փախուստի դիմած դատապարտյալին հայտնաբերելու և նրան արտահանձնե- լու նպատակով պետության ձեռնարկած միջոցները, խախտում չի արձանագրել 2-րդ հոդվածի ընթացակարգային տարրի մասով):

172. Հետևաբար, Դատարանը համարել է, որ քաղաքացիների սպանության կամ նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի համար մեղավոր անձանց համաներումը հակասում է Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներով սահմանված պետության պարտավորություննե- րին, քանի որ դա կխոչընդոտի այդպիսի արարքների պատշաճ քննու- թյանը և անպայմանորեն կհանգեցնի դրանց համար պատասխանա- տու անձանց անպատժելիությանը («*Մարգուշն ընդդեմ Խորվաթիայի»*[ՄՊ], § 127): Նմանապես, նույն սկզբունքով, միանգամայն անտեղի կլիներ և հասարակությանը սխալ ազդակ կուղղվեր, եթե շատ ծանր հանցագործություններ կատարած անձը հետագայում պահպաներ

պետական պաշտոններ զբաղեցնելու իրավունքը («*Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի*», § 171):

173. Վերջերս քննված գործով, որում բարձրացվել էր դատապարտված անձանց էքստրադիցիայի համատեքստում պետությունների համապատասխան պարտավորությունների հարցը, Եվրոպական դատարանը գտել է, որ թեև պատիժ նշանակած պետությունը (Հունգարիա) ձեռնարկել է հնարավոր բոլոր միջոց- ները՝ երաշխավորելու դատապարտյալի պատժի մինչև վերջ կրումը մեկ այլ պետություն (Ադրբեջան) տեղափոխվելուց հետո, վերջինի գործողությունները փաստացի հանգեցրել են անպատժելիության, ուստի և համատեղելի չեն եղել 2-րդ հոդվածով նախատեսված՝ անձանց կյանքի դեմ ուղղված հանցագործությունների կատա- րումն արդյունավետորեն կանխարգելելու պետության պարտա- վորության հետ (*«Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի»*, §§ 195-197 և §§ 163-173 պարբերությունները, համապատասխանաբար):

174. Ի վերջո, վերջերս քննված գործով, երբ ներպետական դատարանները մերժել էին դիմումատուի դիմումը մասնավոր անձի կողմից իր եղբոր սպանության դեպքի կապակցությամբ իրականաց- վող քրեական դատավարությանը որպես քաղաքացիական հայցվոր ներգրավվելու և փոխհատուցում ստանալու վերաբերյալ, Եվրոպա- կան դատարանը համարել է, որ 2-րդ հոդվածի նպատակների համար «պատշաճ փոխհատուցում» ապահովելու ունակ դատական համա- կարգ ստեղծելու պետության պարտավորությունը պահանջում է այն- պիսի միջոց, որը հնարավորություն կընձեռեր դիմումատուին՝ որպես իր ընտանիքի միակ անդամ և իր մահացած եղբոր միակ ժառանգորդ, որի հետ ունեցել է մտերիմ հարաբերություններ, պահանջել փոխհա- տուցում իրեն պատճառված ոչ նյութական վնասի համար (*«Վանյո Թոդորովն ընդդեմ Բուլղարիայի»*, § 66):

Ը. Ընթացակարգային պարտավորությունների վերականգնում

175. Պետության ընթացակարգային պարտավորությունը շարունակում է գոյություն ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ կարելի է իրավասու մարմիններից ողջամտորեն ակնկալել, որ վերջիններս միջոցներ կձեռնարկեն մահվան հանգամանքները պարզելու և հնարավոր մեղավորներին գտնելու համար (*«Շիլիհին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 157): Այդուհանդերձ, որոշ դեպքերում ավելի ուշ փուլում կարող է ի հայտ գալ այնպիսի տեղեկատվություն, որը թույլ կտա բացահայ- տել մահվան հանգամանքները: Այս դեպքում առաջանում է, կրկին քննություն անցկացնելու ընթացակարգային պարտավորության և այդ քննության ձևի ընտրության հարցը: Այս առումով Դատարանը վճռել է, որ այն դեպքում, երբ ի հայտ է գալիս ճշմարտանման կամ հիմնավոր պնդում, ապացույց կամ տեղեկատվություն, որը կարողէ թույլ տալ գտնել և վերջին հաշվով մեղադրանք առաջադրել կամ պատժել սպանության համար պատասխանատուներին, իշխանու- թյունները պարտավոր են ձեռնարկել քննչական հետագա լրացուցիչ միջոցառումներ (*«Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 71):

176. Ընթացակարգային պարտավորության համաձայն՝ պահանջվող ցանկացած լրացուցիչ քննության բնույթն ու աստիճանը անխուսափելիորեն կախված են յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից և կարող են միանգամայն տարբերվել այն քննությունից, որն ակնկալվում է մահվան վրա հասնելուց անմիջապես հետո (*«Հարիսոնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), § 51): Դեպքի և քննության միջև ժամանակային խզումն անխուսափելիորեն խոչընդոտներ կառաջացնի, օրինակ, վկաների հայտնաբերման և իրադարձությունները վերհիշելու վերջիններիս կարողության առումով: Այս նոր քննությունը կարող է որոշ դեպքերում ողջամիտ կերպով սահմանափակվել տեղեկատվության աղբյուրի կամ նոր ապացույցի հուսալիության ստուգմամբ (*«Սերֆն ընդդեմ Թուրքիայի»*, § 65): Ավելին, այսպիսի դեպքերում քննության արագությանը

ներկայացվող պահանջի բովանդակությունն էապես տարբերվում է քննությունից կարճ ժամանակ առաջ տեղի ունեցած դեպքի առթիվ իրականացվող քննության արագությանը ներկայացվող պահանջից, երբ արագ գործելը չափազանց կարևոր է դեպքի վայրում կարևոր ապացույցների պահպանման տեսանկյունից կամ վկաներին հարցաքննելիս, երբ վերջիններս դեռ լավ են հիշում դեպքի բոլոր մանրամասները (*«Գուրթեքինը և այլք ընդդեմ Կիպրոսի»* (որոշ.), § 21 և մեջբերվող հղումները):

177. Նկատի ունենալով ցանկացած քննչական գործողության վերսկսման առաջնային նպատակը՝ իշխանություններն իրավունք ունեն հաշվի առնել քննության հաջողության հասնելու հեռանկար- ները (*«Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության»*, § 71):

178. Այդուհանդերձ, ամենևին էլ հարկ չկա ավելորդ անգամ նախատեսել ապօրինի սպանություններից շատ տարիներ անց դրանց վերաբերյալ քննություն անցկացնելու պարտավորություն, քանի դեռ քրեական հանցագործություններ կատարած անձանց մեղադրանք առաջադրելու և դատապարտելու հանրային շահը հետևողականո- րեն ճանաչվում է, մասնավորապես, պատերազմական և մարդկու- թյան դեմ ուղղված հանցագործությունների դեպքում (*«Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 52):

Թ. Սեռով պայմանավորված բռնության և ատելության հանցագործությունների քննությունը

179. Եթե հարձակման հանգամանքները կրում են սեռով պայմա- նավորված բռնության հատկանիշներ, քննություն իրականացնելիս իշխանությունները պետք է առանձնահատուկ ջանասիրություն գոր- ծադրեն: Եթե կասկած կա, որ հարձակումը կարող էր տեղի ունենալ գենդերային շարժառիթով, հատկապես կարևոր է, որ քննությունն իրականացվի մեծ վճռականությամբ (*«Տյորշանան ընդդեմ Ալբա- նիայի»**, § 160):

180. Երբ առկա են ռասիստական մղումներով բռնության մասին հայտարարություններ, վճռական և անկողմնակալ քննության անցկացումն ունի առանձնահատուկ կարևորություն՝ հաշվի առնելով հասարակության կողմից ռասիզմը դատապարտելու փաստը շարունակաբար վերահաստատելու և ռասիստական մղումներով բռնության վտանգից փոքրամասնություններին պաշտպանելու իշխանությունների կարողության նկատմամբ վստահությունը պահպանելու անհրաժեշտությունը (*«Մենսոն ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Գյիկոնդին և այլք ընդդեմ Հունաստանի»*, § 118):

181. Եթե ռասիստական մղումներով բռնության և դաժանության դեպքերն արժանանան նույն վերաբերմունքին, ինչ ռասիստական ենթատեքստ չունեցող գործերը, ապա դա հավասարազոր կլինի հիմնարար իրավունքների համար առանձնապես կործանարար արարքների հատուկ բնույթի վրա աչք փակելուն: Ըստ էության, տարբեր իրավիճակների նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելու հնարավորության բացակայությունը կարող է համարվել չհիմնավորված և անհամատեղելի Կոնվենցիայի 14-րդ հոդվածի հետ՝ 2-րդ հոդվածի համադրությամբ (*«Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի»* [ՄՊ], § 160):

Ժ. Ընթացակարգային պարտավորություններն անդրսահմանային գործերի համատեքստում

182. Դատարանն ընդգծել է, որ 2-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունը սկզբունքորեն դրվում է այն անդամ պետության վրա, որի իրավազորության ներքո գտնվել է տուժողը իր մահվան պահին (*«Էմին և այլք ընդդեմ Կիպրոսի»* (որոշ.))՝ բացառությամբ այն դեպքերի, երբ որոշակի կոնկրետ հանգամանքներ պահանջում են շեղում այս ընդհանուր կանոնից (*«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, §§ 241-242):

183. Ավելին, 2-րդ հոդվածը չի պահանջում, որ անդամ պետությունների քրեական օրենսդրությամբ սահմանվի համընդհանուր

իրավասություն իրենց քաղաքացիների մահվան դեպքերի համար (*«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, § 244):

184. Այնուամենայնիվ, նույնիսկ հատուկ հանգամանքների բացակայության դեպքում Դատարանը գտել է, որ այլ պետության իրավազորության ներքո գտնվող ապացույցները ձեռք բերելու պետության պարտավորությունը իր հերթին հանգեցնում է իրավական օգնություն տրամադրելու դիմումի հիման վրա և իր իրավասության և հնարավորությունների սահմաններում ապացույցների ձեռքբերման հարցում օժանդակություն տրամադրելու այն պետության փոխադարձ պարտավորության առաջացմանը, որի տարածքում գտնվում են դրանք (*«Ռանցևն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի»*, § 245):

185. Մասնավորապես, երբ մահ առաջացրած ապօրինի բռնության դեպքն ունի անդրսահմանային տարր, այն պետության իրավասու մարմինները, որտեղ թաքնվում են հանցագործությունը կատա-րած անձինք և որի տարածքում կարող են գտնվել հանցագործության ապացույցները, 2-րդ հոդվածի ուժով կարող են կրել այս առումով արդյունավետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն (*«Քամինզը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.), *«Օ՛Լուգլինը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության»* (որոշ.)):

186. Այն դեպքերում, երբ մեկ Պայմանավորվող պետության իրավասության շրջանակներում կատարված անօրինական սպանության արդյունավետ քննությունը պահանջում է մեկից ավելի Պայմանավորվող պետությունների ներգրավում, Կոնվենցիայի հատուկ բնույթը՝ որպես կոլեկտիվ կատարվող պայմանագիր, սկզբունքորեն ենթադրում է շահագրգիռ պետությունների պարտավորությունը՝ միմյանց հետ արդյունավետ համագործակցել սպանության հանգամանքները պարզելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար: Այսպիսով, 2-րդ հոդվածով պետությունների վրա կարող է դրվել միմյանց հետ համագործակցելու փոխադարձ պարտավորություն՝ միաժամանակ ենթադրելով աջակցություն խնդրելու և աջակցություն տրամադրելու պարտավորություն:

Այդուհանդերձ, այս պարտավորությունների բնույթը և շրջանակը կախված են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանգամանքներից (*«Գյուզելյուրթլուն և այլոք ընդդեմ Կիպրոսի և Թուրքիայի»* [ՄՊ], §§ 232-233): Օրինակ՝ վերջերս քննված գործով վճռվել է, որ Եվրոպական միության անդամ պետությունը պետք է համագործակցի մեկ այլ անդամ պետության հետ ձերբակալման եվրոպական օրդերի համակարգի շրջանակներում և պատշաճ կերպով քննարկի փախուստի մեջ գտնվող ենթադրյալ ահաբեկչին քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու կամ չհանձնելու հարցը (*«Ռոմեո Կաստանյոն ընդդեմ Բելգիայի»*, §§ 41-42 և 79-82):

187. Այս առումով Դատարանն ընդգծել է, որ համագործակցե- լու այդ պարտավորությունը կարող է լինել միայն միջոցի, ոչ թե արդյունքի: Դա նշանակում է, որ շահագրգիռ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ քայլերը միմյանց հետ համա- գործակցելու համար՝ բարեխղճորեն սպառելով քրեական գործե-րով փոխադարձ իրավական օգնության և համագործակցության մասին կիրառելի միջազգային գործիքների շրջանակներում իրենց հասանելի հնարավորությունները: Այսպիսով, համագործակցե- լու ընթացակարգային պարտավորությունն այս համատեքստում խախտվում է համագործակցություն հայցող պետության կողմից, եթե այն չի կարողացել գործարկել համապատասխան միջազ- գային պայմանագրերով նախատեսված համագործակցության համապատասխան մեխանիզմը, իսկ հայցվող պետությունն իր հերթին խախտում է համագործակցելու պարտավորությունը, եթե այդ պետությունը պատշաճ կերպով չի արձագանքել իրեն ուղղված խնդրանքին կամ չի կարողացել վկայակոչել հայցվող համագործակցությունը մերժելու օրինական հիմքեր (*«Գյուզելյուրթլուն և այլոք ընդդեմ Կիպրոսի և Թուրքիայի»* [ՄՊ], §§ 235-236): Օրի- նակ՝ ձերբակալելու եվրոպական օրդերի շրջանակներում անձին արտահանձնելու վերաբերյալ դիմումը ոչ լիարժեք և հնացած տեղեկատվության հիման վրա պատասխանող պետության կողմից մերժելն այն պատճառաբանությամբ, որ հայցող պետությունում

ազատազրկման պայմանները կլինեն անմարդկային կամ նվաս-տացնող, համագործակցությունը մերժելու իրավաչափ հիմք չէ (*«Ռոմեո Կաստանյոն ընդդեմ Բելգիայի»*, §§ 85-90): Այն դեպքե- րում, երբ համագործակցելու փոխադարձ պարտավորություն ունեցող երկու Պայմանավորվող կողմերի միջև չկան պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ, այդ պետություններիցկարող է պահանջվել կիրառել համագործակցության այլ՝ ավելի ոչ ֆորմալ կամ անուղղակի ուղիներ, օրինակ՝ երրորդ երկրների կամ միջազգային կազմակերպությունների միջոցով: Այդպիսի հանգա- մանքներում Դատարանը հաշվի է առնում, թե արդյոք շահագրգիռ պետությունները, համապատասխան միջազգային պայմանագրե- րով նախատեսված համագործակցության մեխանիզմներից բացի, օգտագործել են համագործակցության բոլոր ոչ ֆորմալ կամ *ad hoc* ուղիները՝ միևնույն ժամանակ ուղղորդվելով այդ պայմանագրերի դրույթներով՝ որպես միջազգային իրավունքում կիրառվող նորմե- րի և սկզբունքների դրսևորում (*«Գյուզելյուրթլուն և այլոք ընդդեմ Կիպրոսի և Թուրքիայի»* [ՄՊ], §§ 237-238):

Ի. Ընթացակարգային պարտավորությունները անփութությամբ պատճառված մահվան կամ ծանր վնասվածքների դեպքում

188. Ինչպես արդեն նշվել է վերևում, Դատարանը 2-րդ հոդվա-ծից բխող ընթացակարգային պարտավորությունները տարածելէ այն հանգամանքների վրա, երբ անձը ստացել է կյանքին վտանգ սպառնացող վնասվածքներ կամ մահը վրա է հասել անփութու- թյան արդյունքում: Այս քայլով Դատարանը փոփոխել է ընդհանուր սկզբունքները, մասնավորապես, քննության չափանիշները՝ հարմա-րեցնելով դրանք նման գործերի հանգամանքներին:

1. Ընդհանուր սկզբունքներ

189. Եվրոպական դատարանը վճռել է, որ 2-րդ հոդվածի հիմքով պետության պարտավորության հարցը կարող է առաջանալ, երբ ներպետական իրավական համակարգն ի վիճակի չէ երաշխավորել անփութությամբ կյանքի համար վտանգավոր կամ մահ առաջացրած արարքների մեղավորներին պատասխանատվության ենթարկումը (*«Բանելլն ընդդեմ Լիտվայի»*, § 70):

190. Այսպիսով, Եվրոպական դատարանը վճռել է, որ այն գործերում, երբ տուժողի մահը կամ նրա ստացած ծանր վնասվածքները հետևանք են ֆիզիկական անձի անփութության, ապա իր իրավազորության ներքո գտնվող անձանց կյանքի պաշտպանության համար բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման պարտավորությունը պետությունից պահանջում է ստեղծել արդյունավետ և անկախ դատական համակարգ, որն իրավական ուղիներ կառաջարկի կարճ ժամկետներում փաստերը պարզելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և տուժողներին պատշաճ փոխհատուցում տրամադրելու համար (*«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»* (§ 32), որը վերաբերում է պիցցերիայում նռնակի պայթյունի դեպքի կապակցությամբ իրականացված քննության արդյունավետությանը, *«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»* (§ 66), որը վերաբերում է բուժական կենտրոնի տարածքում ընկած ծառի հարվածից դիմումատուի ամուսնու մահվան դեպի կապակցությամբ տարվող քննությանը, *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»* (§ 72), որը վերաբերում է ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում դիմումատուի որդու մահվան դեպքի հետ կապված քննությանը, *«Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի»* (§ 38), որը վերաբերում է ծնաբքի ժամանակ տուն վերադառնալու ճանապարհին սառցակալման արդյունքում դիմումատուների յոթ տարեկան որդու մահվան դեպքին, *«Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի»* (§§ 99-101), որտեղ դիմումատուն ծանր վնասվածք էր ստացել ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում):

191. Առողջապահության ոլորտում Դատարանը 2-րդ հոդվածից բխող ընթացակարգային պարտավորությունը մեկնաբանել է այնպես, որ դրանով պետությունների վրա դրվում է արդյունավետ և անկախ գործուն դատական համակարգ ստեղծելու պարտավորություն, որը թույլ կտա պարզել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր բժշկական հաստատություններում պացիենտների մահվան հանգամանքները և պատասխանատվության ենթարկել մեղավորներին (*«Շիլիհին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 192, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 214):

192. Այս առումով Դատարանն ընգծել է, որ եթե կյանքի կամ ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը խախտվել է անզգուշությամբ, ապա արդյունավետ դատական համակարգ ստեղծելու պոզիտիվ պարտավորությունը կհամարվի կատարված, եթե այդպիսի իրավա-կան համակարգը երաշխավորում է տուժողի համար քաղաքացիական դատավարության կարգով առանձին կամ պատասխանատուներին որոշելու հնարավորություն ընձեռող քրեական բնույթի իրավական պաշտպանության միջոցի հետ միասին ստանալ քաղաքացիական բնույթի պատշաճ փոխհատուցում (*«Կալվելին և Չիլյոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 51, *«Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի»* [ՄՊ], § 90, *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 90, *«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 73, *«Չեվրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 54, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], §§ 137 և 215): Երբ դեպքին ներգրավված են պաշտոնատար անձինք կամ որոշակի մասնագիտություններ ունեցող անձինք, ապա կարող են ձեռնարկվել նաև կարգապահական բնույթի միջոցներ (*«Նիկոլա Վիրջիլյու Տանասեն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 159 և *«Չինատուլինն ընդդեմ Ռուսաստանի»*, § 32):

193. Այս առումով Դատարանը նաև ընդգծել է, որ 2-րդ հոդվածից բխող պարտավորությունների կատարումն ապահովող միջոցների ընտրությունը սկզբունքորեն Կոնվենցիայի անդամ պետության սեփական հայեցողության տիրույթում է: Գոյություն ունեն Կոնվենցիայով սահմանված իրավունքների երաշխավորման բազմաթիվ

միջոցներ, և եթե անդամ պետությունը չի ձեռնարկել իր ներպետա- կան իրավունքով նախատեսված որևէ հստակ միջոց, վերջինս կարող է կատարել իր պոզիտիվ պարտավորությունը որևէ այլ եղանակով: Այդուհանդերձ, այս պարտավորության կատարման համար հարկա- վոր է, որ ներպետական իրավունքով նախատեսված պաշտպանա- կան մեխանիզմները ոչ միայն գոյություն ունենան տեսականորեն, այլև արդյունավետ աշխատեն գործնականում (*«Չեվրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 53 և 55, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 216):

194. Այսպիսով, Դատարանը կոչված է ուսումնասիրել, թե արդյոք օրենքով նախատեսված և գործնականում առկա իրավական պաշտ- պանության միջոցներն իրենց ամբողջության մեջ կարող են համարվել այնպիսիք, որոնք թույլ են տալիս պարզել դեպքի հանգամանքները, մեղավորներին ենթարկել պատասխանատվության և տուժողներին առաջարկել փոխհատուցում: Այլ կերպ ասած, իրավական դաշտը վերացականորեն գնահատելու փոխարեն Դատարանը պետք է քննի այն հարցը, թե որքան արդյունավետ է առկա իրավական համակարգը հնարավորություն տալիս լուծել քննության առարկա գործը (*«Վալերի Ֆուկլևն ընդդեմ Ուկրաինայի»*, § 67):

195. Այնուամենայնիվ, նույնիսկ կյանքի իրավունքի նկատմամբ ոչ դիտավորյալ ոտնձգությունների դեպքում կարող են լինել բացառիկ հանգամանքներ, որոնցում Կոնվենցիայի 2-րդ հոդվածի պահանջ- ները բավարարելու համար հարկավոր է անցկացնել արդյունավետ քննություն (*«Չեվրիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 54, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 215): Օրինակ, Դատա- րանը համարել է, որ այդպիսի հանգամանքներն առկա են եղել, երբ կյանքի իրավունքի նկատմամբ ոտնձգության հիմքում ընկած անփու- թությունը, *inter alia,* գերազանցել է հասարակ դատողության սխալի կամ անզգուշության սահմանները հետևյալ գործերում՝

- վտանգավոր արդյունաբերական գործունեություն (*«Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 71),

- բժշկական օգնության չտրամադրում (*«Ասիյե Գենչն ընդդեմ Թուրքիայի»*, § 73),
- ռազմական գործողություններ (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 50 և 65),
- վտանգավոր ապրանքների փոխադրում (*«Օրուքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 62-64):

196. Նույն կերպ, Դատարանն ընդունում է, որ այն դեպքերում, երբ միանգամից և միանշանակ չի պարզվում, որ մահն առաջացել է դժբախտ պատահարի կամ մեկ այլ ոչ դիտավորյալ արարքի արդյունքում, և երբ սպանության վարկածը հանգամանքների բերումով առնվազն հիմնավոր է, Կոնվենցիան պահանջում է, որ մահվան հանգամանքները պարզելու նպատակով անցկացվի արդյունավետության նվազագույն չափանիշներին համապատասխանող քննություն: Այն հանգամանքը, որ քննությունը վերջին հաշվով չի հրաժարվում դժբախտ պատա- հարի վարկածից, ոչ մի ազդեցություն չունի այս հարցի վրա, քանի որ քննություն անցկացնելու պարտավորության նպատակն է հերքել կամ հիմնավորել առկա վարկածները (*«Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի»* [ՄՊ], § 133):

197. Երբ այդպիսի նախնական քննության ընթացքում հաստատվում է, որ կյանքին սպառնացող վնասվածքը միտումնավոր չի հասցվել, քաղաքացիական պաշտպանության միջոցը սովորաբար համարվում է բավարար, բացառությամբ այն դեպքերի, երբ բացառիկ հանգամանքների առկայությամբ պայմանավորված՝ անհրաժեշտ է իրականացնել արդյունավետ քննություն (*«Նիկոլաե Վիրջիլիու Տենասեն ընդդեմ Ռումինիայի»* [ՄՊ], § 163, *«Զինատուլինն ընդդեմ Ռուսաստանի»*, § 35):

198. Առողջապահության ոլորտում Դատարանը նշել է, որ առողջապահության ոլորտի մասնագետների պատասխանատվության ներքո գտնվող անձանց մահվան պատճառների որոշման նպատա- կով ազգային մակարդակում ստեղծված համակարգի անկախ լինելու պահանջն անվերապահ է: Սա ենթադրում է ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլև որ պացիենտի

մահվան հանգամանքների գնահատմանը մասնակցող բոլոր կողմերը ֆորմալ առումով և փաստացի անկախ լինեն այն անձանցից, ովքեր ներգրավված են եղել դեպքին (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, § 90): Այս պահանջը հատկապես կարևոր է փորձագետ-վկաներից բժշկական եզրակացություններ ստանալիս (*«Կարպիսևիչն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.)), քանի որ հավանական է, որ բժշկական փորձագետների եզրակացությունները որոշիչ կշիռ կունենան Դատարանի կողմից բժշկական անփութության խիստ բարդ հարցերի գնահատ- ման շրջանակներում, ինչը վերջիններիս վերապահում է առանձնակի կարևոր դերակատարում (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, § 95, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 217):

199. Անփութության դեպքում գործի քննությունը պետք է ավարտվի ողջամիտ ժամկետներում (*«Շիլիհն ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 196, *«Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 115, *«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 38):

200. Առողջապահության ոլորտում Դատարանն ընդգծել է,որ որևէ կոնկրետ դեպքում 2-րդ հոդվածից բխող իրավունքների երաշխավորման հարցից բացի, հիվանդանոցային պայմաններում բժշկական անձնակազմի անփութության վերաբերյալ գործերի արագ քննությունը պայմանավորված է նաև այլ՝ ավելի ընդհանուր նկատառումներով: Բժշկական օգնության մատուցման ոլորտում թույլ տրված հնարավոր սխալների և փաստերի իմացությունն էական նշանակություն ունի, քանի որ թույլ է տալիս հաստատություններին և բժշկական անձնակազմին շտկել հնարավոր թերությունները և կանխել նմանատիպ սխալները: Ուստի նման գործերի արագ քննությունը կարևոր է առողջապահական ծառայությունների ողջ համակարգից օգտվող անձանց անվտանգության համար (*«Օյալն ընդդեմ Թուրքիայի»*, § 76):

201. Ի տարբերություն պաշտոնատար անձանց կողմից մահաբեր ուժի գործադրման կամ պատահարների դեպքերի, որոնցում իրավասու մարմինները պետք է սեփական նախաձեռնությամբ քննություն սկսեն, բժշկության ոլորտի աշխատակիցների անփութության վերաբերյալ գործերում, որոնցում մահը պատճառվել է անզգուշությամբ,

պետության ընթացակարգային պարտավորությունը կարող է գործարկվել մահացածի հարազատների կողմից համապատասխան ընթացակարգի մեկնարկը տալուց հետո (*«Շիլիհին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], § 156, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 220):

202. Այս ոլորտում նույնպես, Դատարանը համարել է, որ այս ընթացակարգային պարտավորությունը ոչ թե արդյունքի, այլ միայն միջոցի է (*«Բանելն ընդդեմ Լիտվայի»*, § 66, *«Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի»* [ՄՊ], § 221): Հետևաբար, միայն այն փաստը, որ ներպետական ընթացակարգի արդյունքը գոհացնողչի եղել շահագրգիռ կողմի համար, չի նշանակում, որ Պատասխա-նող պետությունը չի կատարել Կոնվենցիայի 2-րդ հոդվածից բխող իր պոզիտիվ պարտավորությունը (*նույն տեղում*, § 221, *«Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), § 50):

2. Օրինակներ

ա. բուժաշխատողների անփութության վերաբերյալ գործեր

203. Դատարանը, մասնավորապես, համարել է, որ իրավա- կան համակարգը, 2-րդ հոդվածի ներքո պետության վրա դրված ընթացակարգային պարտավորություններին համապատասխան, չի երաշխավորել պատշաճ և արագ արձագանք, *inter alia,* երբ՝

- ներպետական ընթացակարգը չափից ավելի երկար է տևել (*«Բիրժիկովսկին ընդդեմ Լեհաստանի»*, §§ 114-116, *«Շիլիհին ընդդեմ Սլովենիայի»* [ՄՊ], §§ 202-210, *«Զաֆեր Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի»*, §§ 56-57, *«Բիբիջան և Բլաժևիչն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 105-107):

- բժշկական փորձագետների և մեղադրյալի միջև կապը եղել է այնպիսին, որ վերջիններս չէին կարող օբյեկտիվորեն համարվել անկողմնակալ (*«Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 98-102 և հակառակը՝ *«Կարպիսևիչն ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.)):

- դատական փորձագետների և քննչական մարմինների միջև համագործակցություն չի եղել, իսկ փորձագետների եզրակացությունները չեն եղել հիմնավորված (*«Եվգենյա Լազարն ընդդեմ Ռումինիայի»*, §§ 81-85):
- ներպետական իրավական համակարգը մահացածի ողջ մնացած հարազատին հնարավորություն չի տվել պահանջել և ստանալ ոչ նյութական վնասի հատուցում (*«Սարիշվիլի-Բոլկվաձեն ընդդեմ Վրաստանի»*, §§ 90-98)

204. Ի հակադրություն՝ հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել քրեական, կարգապահական կամ քաղաքացիական պատասխանատվությունը սահմանող մեխանիզմի բացակայություն՝

- *«Վոն ընդդեմ Ֆրանսիայի»* [ՄՊ], § 95 (հղիության պարտադրված ընդհատում),
- *«Ուրսուն ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.) (մահ սրտի կանգի հետևանքով),
- *«Մարուսևան ընդդեմ Ռուսաստանի»* (որոշ.) (երեխայի մահ սրտի վիրահատության ընթացքում),
- *«Սևիմ Գյունգյորն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.) (տարեց պացիենտի մահը հիվանդանոցում բրոնխային թոքաբորբից), *«Բեսեն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.) (դիմումատուի մոր մահը վիրահատությունից հետո)
- *«Վակրիլովն ընդդեմ Բուլղարիայի»* (որոշ.), § 41 (մահ ծանր սրտանոթային և շնչառական անբավարարությունից),
- *«Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռումինիայի»* (որոշ.), § 56 (մահ հիվանդանոցում հետվիրահատական շրջանում բակտերիալ վարակի հետևանքով),
- *«Բուքսան ընդդեմ Լեհաստանի»* (որոշ.), §§ 15-16 (նորածնի մահը՝ լյարդում չախտորոշված բարորակ գոյացության հետևանքով):

բ. դժբախտ պատահարների վերաբերյալ գործեր

205. Դատարանը եզրակացրել է, որ պետությունը դժբախտ պատահարի հետևանքով անձի մահվան վերաբերյալ արդյունավետ քննություն չի ապահովել, եթե, *inter alia*,

- ներպետական ընթացակարգերը տևել են չափազանց երկար իշխանությունների կողմից ջանասիրություն չցուցաբերելու

պատճառով (*«Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի»*, § 83, *«Իգոր Շևչենկոն ընդդեմ Ուկրաինայի»*, § 61, *«Ստարշևիչն ընդդեմ Խորվաթիայի»*, § 67, *«Մուչիբաբիջն ընդդեմ Սերբիայի»*, § 135, *«Սիդիկա Իմրեն ընդդեմ Թուրքիայի»*, § 67, *«Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի»*, §§ 41-42):

- ապացույցների ձեռքերման հարցում տեղ են գտել այնպիսի թերություններ, որոնք բացասաբար են ազդել դեպքի հանգամանքները պարզելու և մեղավոր անձանց պատասխանատվության հարցը հետագա ընթացակարգերի շրջանակներում լուծելու հնարավորության վրա (*«Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի»*, § 75, *«Անտոնովն ընդդեմ Ուկրաինայի»*, § 50, *«Վովկը և Բոգդանովն ընդդեմ Ռուսաստանի»*, § 77):

206. Ի հակադրություն՝ հետևյալ գործերում Դատարանը չի արձանագրել ենթադրյալ մեղավորներին քրեական, կարգապահական կամ քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ մեխանիզմի բացակայություն՝

- *«Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի»* (որոշ.) (լեռնագնացի մահ),
- *«Կոչեսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության»* (որոշ.), § 28 (խաղահրապարակում ծանր բետոնե սյուների փլատակների տակ մնացած երեխայի մահ),
- *«Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի»*, § 125 (չսահմանանշված լողափում լողալիս շարժիչային նավակի հետ բախման արդյունքում դիմումատուի կողմից ստացված ծանր վնասվածքներ),
- *«Միխնոն ընդդեմ Ուկրաինայի»*, § 151 (հանրության համար բաց օդային շոուի հանդիսատեսի մահը՝ ռազմական օդանավի վթարի պատճառով),
- *«Չաքմաքն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 34 (տարրական դպրոցի այգում սոճու կոներ հավաքելու ժամանակ դիմումատուների հարազատի էլեկտրահարում),
- *«Աքտաշն ընդդեմ Թուրքիայի»* (որոշ.), § 29 (մոտոցիկլով ֆուրգոնին բախված դիմումատուի որդու մահը):

ՄԵՋԲԵՐՎՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ

Սույն ուղեցույցում մեջբերված նախադեպային իրավունքը ընդգրկում է Դատարանի կայացրած վճիռները և որոշումները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի («Հանձնաժողով») որոշումները և զեկույցները:

Եթե այլ բան նախատեսված չէ, ապա բոլոր հղումները վերաբե- րում են Դատարանի պալատի կողմից ըստ էության կայացված վճռին: Հայերեն թարգմանության մեջ «(որոշում)» կամ հղման անգլերեն տարբերակում «(dec.)» բառը նշանակում է, որ հղում է կատարվում Դատարանի որոշմանը, իսկ «[ՄՊ]» հապավումը (հղման անգլերեն տարբերակում՝ [GC]) նշանակում է, որ գործը քննվել է Մեծ պալատի կողմից:

Սույն ուղեցույցի վերջին թարմացված տարբերակի հրապա- րակման պահի դրությամբ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի իմաստով պալատի ոչ վերջնական վճիռները ստորև բերված ցանկում նշված են աստղանիշով (*): Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպ- ված է հետևյալ կերպ. «Պալատի վճիռը դառնում է վերջնական, եթե՝ ա. կողմերը հայտարարում են, որ չեն պահանջի գործի հանձնում Մեծ պալատին, կամ բ. վճռի կայացումից հետո երեք ամսվա ընթացքում չի պահանջվում գործի հանձնում Մեծ պալատին, կամ գ. Մեծ պալատի հանձնախումբը, 43-րդ հոդվածին համապատասխան, մերժում է գործը հանձնելու պահանջը»: Եթե Մեծ պալատի հանձնախումբն ընդունում է գործը հանձնելու պահանջը, ապա պալատի վճիռը վերջ- նական չի դառնում և հետևաբար չի ստանում որևէ իրավաբանական ուժ, իսկ Մեծ պալատն այնուհետև ընդունում է վերջնական վճիռ:

Ուղեցույցի էլեկտրոնային տարբերակում մեջբերված գործերի գերկապային հղումներն ուղղորդում են դեպի «HUDOC» տվյալ- ների շտեմարան (*http://hudoc.echr.coe.int/fre*), որտեղ հասանելի է Դատարանի նախադեպային իրավունքը (Մեծ պալատի, պալատի և հանձնաժողովի վճիռները և որոշումները, ծանուցված գործե-րը, խորհրդատվական կարծիքները և իրավական սեղմագրերը՝

ամփոփված Դատական նախադեպի տեղեկատվական ծանոթագրությունում) և Հանձնաժողովի նախադեպային իրավունքը (որոշումները և զեկույցները), ինչպես նաև Նախարարների կոմիտեի ընդունած բանաձևերը:

Դատարանն իր վճիռներն ու որոշումները կայացնում է անգլերեն և (կամ) ֆրանսերեն, որոնք Դատարանի երկու պաշտոնական լեզուներն են: «HUDOC» տվյալների շտեմարանում առկա են նաև բազմաթիվ կարևոր գործերի թարգմանություններ ավելի քան երեսուն ոչ պաշտոնական լեզուներով, ինչպես նաև հղումներ այլ կազմակերպությունների պատրաստած և նախադեպային պրակտիկային վերաբերող մոտ հարյուր առցանց հավաքածուներին:

—Ա—

Ա-ն և Բ-ն ընդդեմ Ռումինիայի, թիվ 48442/16 և 48831/16, 2 հունիսի 2020 թ.
Աբուևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 27065/05, 2 դեկտեմբերի 2010թ.
Ադիյամանն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 58933/00, 9 փետրվարի 2010թ.
Աֆթանաչեն ընդդեմ Ռումինիայի, թիվ 999/19, 26 մայիսի 2020 թ.
Աղդաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 34592/97, 27 հուլիսի 2004 թ.
Ահմեդ Օզկանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 21689/93, 6 ապրիլի 2004թ.
Ակդենիզը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 23954/94, 31 մայիսի 2001թ.
Ակդողդուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46747/99, 18 հոկտեմբերի 2005թ.
Ակելիենեն ընդդեմ Լիտվայի, թիվ 54917/13, 16 հոկտեմբերի 2018 թ.
Ակումը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 21894/93, ՄԻԵԴ, 2005-II (քաղվածքներ)
Ակտաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 24351/94, ՄԻԵԴ, 2003-V (քաղվածքներ)
Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի, թիվ 28761/11, 24 հուլիսի 2014թ.
Ալ-Սաադուն և Մուֆդհին ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 61498/08, ՄԻԵԴ, 2010թ.

Ալ-Սկեյհնը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 55721/07, ՄԻԵԴ, 2011թ.
Ալբեկովը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 68216/01, 9 հոկտեմբերի 2008թ.
Ալի և Այշե Դուրանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 42942/02, 8 ապրիլի 2008թ.
Ալքինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 75588/01, 13 հոկտեմբերի 2009թ.
Ալթուղը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 32086/07, 30 հունիսի 2015թ.
Ամուևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 17321/06, 25 նոյեմբերի 2010թ.
Անդրոնիկուն և Կոնստանտինուն ընդդեմ Կիպրոսի, 9 հոկտեմբերի 1997, Վճիռների և որոշումների ժողովածու 1997թ.
Անգելովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 38361/97, ՄԻԵԴ, 2002-IV
Աննա Տոդորովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 23302/03, 24 մայիսի 2011թ.
Անտոնովն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 28096/04, 3 նոյեմբերի 2011թ.
Արմանի Դա Սիլվան ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 5878/08, 30 մարտի 2016թ.
Արսկայան ընդդեմ Ուկրաինայի, թիվ 45076/05, 5 դեկտեմբերի 2013թ.
Ասիյե Գենչն ընդդեմ Թուրքիայի, թիվ 24109/07, 27 հունվարի 2015թ.
Ասլախանովան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 2944/06 և 4 այլ գործ, 18 դեկտեմբերի 2012թ.
«1989 թ. դեկտեմբերի 21» ասոցացիան և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 33810/07 և 18817/08, 24 մայիսի 2011 թ.
Աթամանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46252/99, 27 ապրիլի 2006 թ.
Ավշարն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25657/94, ՄԻԵԴ, 2001-VII (քաղվածքներ)
Այդողդուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 40448/06, 30 օգոստոսի 2016 թ.

—Բ—

Բաբար Ահմադը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 24027/07 և 4 այլ գործ, 6 հուլիսի 2010թ.
Բաջիջն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 41108/10, 13 նոյեմբերի 2012թ.
Բականն ընդդեմ Թուրքիայի, թիվ 50939/99, 12 հունիսի 2007թ.
Բանելն ընդդեմ Լիտվայի, թիվ 14326/11, 18 հունիսի 2013թ.

Բարբու Անգելեսկուն ընդդեմ Ռումինիայի, թիվ 46430/99, 5 հոկտեմբերի 2004թ.
Բայրաքը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 42771/98, 12 հունվարի 2006թ.
Բայսաևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 74237/01, 5 ապրիլի 2007թ.
Բազորկինան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 69481/01, 27 հուլիսի 2006թ
Բեքերն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27866/03, 24 մարտի 2009թ.
Բեկսուլտանովան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 31564/07, 27 սեպտեմբերի 2011թ.
Բեկթաշը և Յոզալփն ընդդեմ Թուրքիայի, թիվ 10036/03, 20 ապրիլի 2010թ.
Բենզերը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 23502/06, 12 նոյեմբերի 2013թ.
Բեսեն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 48915/09, 19 հունիսի 2012թ.
Բետաևը և Բետաևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 37315/03, 29 մայիսի 2008թ.
Բիբիջան և Բլաժևիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 62870/13, 12 հունվարի 2016թ.
Բիննուր Ուզուն և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 28678/10, 19 սեպտեմբերի 2017թ.
Բյակայը և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 74448/12, 18 սեպտեմբերի 2014թ.
Բոսոն ընդդեմ Իտալիայի (որոշ.), թիվ 50490/99, 5 սեպտեմբերի 2002թ.
Բուքրուրուն և այլք ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 30059/15, 16 նոյեմբերի 2017թ.
Բրանկո Թոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 46598/06, 15 հունվարի 2009թ.
Բրեքնելն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 32457/04, 27 նոյեմբերի 2007թ.
Բրինքաթը և այլք ընդդեմ Մալթայի, թիվ 60908/11 և 4 այլ գործ, 24 հուլիսի 2014թ.
Բաբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 50196/99, ՄԻԵԴ,2005-II (քաղվածքներ)

Բուդաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 15339/02 և 4 այլ գործ, ՄԻԵԴ, 2008թ. (քաղվածքներ)
Բուքսան ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 75749/13, 31 մայիսի 2016թ.
Բուլդանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 28298/95, 20 ապրիլի 2004թ.
Բիրժիկովսկին ընդդեմ Լեհաստանի, թիվ 11562/05, 27 հունիսի 2006թ.

—Գ—

Գ.Ն.-ն և այլք ընդդեմ Իտալիայի, թիվ 43134/05, 1 դեկտեմբերի 2009թ.
Գարդը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 39793/17, 27 հունիսի 2017թ.
Գեորգեն ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 19215/04, 22 սեպտեմբերի 2005թ.
Գյիկոնդին և այլք ընդդեմ Հունաստանի, թիվ 17249/10, 21 դեկտեմբերի 2017թ.
Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 61827/00, 18 մարտի 2003թ.
Գյոքդեմիրն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 66309/09, 19 մայիսի 2015թ.
Գոնգաձեն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 34056/02, ՄԻԵԴ, 2005-XI
Գորովենկին և Բուգարան ընդդեմ Ուկրաինայի, թիվ 36146/05 և 42418/05, 12 հունվարի 2012թ.
Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի, 27 հուլիսի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-IV
Գուրթեքինը և այլք ընդդեմ Կիպրոսի (որոշ.), թիվ 60441/13 և 2 այլ գործ, 11 մարտի 2014թ.
Գյուզելյուրթուն և այլք ընդդեմ Կիպրոսի և Թուրքիայի [ՄՊ], թիվ 36925/07), 29 հունվարի 2019 թ.

—Դ—

«1989թ. դեկտեմբերի 21» ասոցիացիան և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 33810/07 և 18817/08, 24 մայիսի 2011թ.

Դե Դոնդերը և Դե Քլիպելն ընդդեմ Բելգիայի, թիվ 8595/06, 6 դեկտեմբերի 2011թ.
Դենիզչին և այլք ընդդեմ Կիպրոսի, թիվ 25316-25321/94 և 27207/95, ՄԻԵԴ, 2001-V
Դոդովն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 59548/00, 17 հունվարի 2008 թ.
Դումփեն ընդդեմ Լատվիայի (որոշ.), թիվ 71506/13, 16 հոկտեմբերի 2018 թ.

—Ե—

Ե.Մ.-ն և այլք ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 20192/07, 3 հունիսի 2014թ.
Եվգենյա Լազարն ընդդեմ Ռումինիայի, թիվ 32146/05, 16 փետրվարի 2010թ.

—Զ—

Զ.-ն ընդդեմ Լեհաստանի, թիվ 46132/08, 13 նոյեմբերի 2012թ.
Զաֆեր Օզթուրքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25774/09, 21 հուլիսի 2015թ.
Զենգինն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46928/99, 28 հոկտեմբերի 2004թ.
Զջելարը և այլք ընդդեմ Խորվաթիայի, թիվ 80960/12, 6 հուլիսի 2017թ.
Զինատուլինն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 10551/10, 28 հունվարի 2020 թ.

—Է—

Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, 16 դեկտեմբերի 1992թ., սերիա Ա, թիվ 247-Բ
Էմարսն ընդդեմ Լատվիայի, թիվ 22412/08, 18 նոյեմբերի 2014թ.
Էմին և այլք ընդդեմ Կիպրոսի, Հունաստանի և Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 59623/08 և 6 այլ գործ, 3 հունիսի 2010թ.
Էնուկիձեն և Գիրգվլիանին ընդդեմ Վրաստանի, թիվ 25091/07, 26 ապրիլի 2011թ.

Էնզիլ Օզդեմիրն ընդդեմ Թուրքիայի, թիվ 54169/00, 8 հունվարի 2008թ.
Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 19807/92, 25 ապրիլի 2006թ.
Էրգին ընդդեմ Թուրքիայի, 28 հուլիսի 1998, *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-IV
Էստամիրովն և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 60272/00, 12 հոկտեմբերի 2006թ.
Էվանս ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 6339/05, ՄԻԵԴ, 2007-I
Էվրիմ Օքտեմն ընդդեմ Թուրքիայի, թիվ 9207/03, 4 նոյեմբերի 2008թ.

—Թ—

Թահսին Աքարն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 26307/95, ՄԻԵԴ, 2004-III
Թանիշը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 65899/01, ՄԻԵԴ, 2005–VIII
Թանլին ընդդեմ Թուրքիայի, թիվ 26129/95, ՄԻԵԴ, 2001-III (քաղվածքներ)
Թեքին և Արսլանն ընդդեմ Բելգիայի, թիվ 37795/13, 5 սեպտեմբերի 2017թ.
Թիմուրթաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 23531/94, ՄԻԵԴ, 2000-VI

—Ի—

Իգոր Շևչենկոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 22737/04, 12 հունվարի 2012թ.
Իկինչիսոյն ընդդեմ Թուրքիայի, թիվ 26144/95, 27 հուլիսի 2004թ.
Իլբեյի Քեմալօղլուն և Մերիյե Քեմալօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 19986/06, 10 ապրիլի 2012թ.
Իլհանն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 22277/93, ՄԻԵԴ, 2000-VII
Իորգան ընդդեմ Մոլդովայի, թիվ 12219/05, 23 մարտի 2010 թ.
Իփեքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25760/94, ՄԻԵԴ, 2004-II (քաղվածքներ)
Իսաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 57947/00 և 2 այլ գործ, 24 փետրվարի 2005թ.

—Լ—

Լ.Ց.Բ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության, 9 հունիսի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-III

Լամբերը և այլք ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], թիվ 46043/14, ՄԻԵԴ, 2015 (քաղվածքներ)

Լըրեյը և այլք ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 44617/98, 16 հունվարի 2001թ.

Լոպես դե Սուսա Ֆերնանդեսն ընդդեմ Պորտուգալիայի [ՄՊ], թիվ 56080/13, 19 դեկտեմբերի 2017թ.

—Խ—

Խայրուլինան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 29729/09, 19 դեկտեմբերի 2017թ.

Խաշիևը և Ակաևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 57942/00 և թիվ 57945/00, 24 փետրվարի 2005թ.

—Կ—

Կագիրովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 36367/09, 23 ապրիլի 2015թ.

Կակուլին ընդդեմ Թուրքիայի, թիվ 38595/97, 22 նոյեմբերի 2005թ.

Կարապիսևիչն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 14730/09, 11 դեկտեմբերի 2012թ.

Կաթսը և այլք ընդդեմ Ուկրաինայի, թիվ 29971/04, 18 դեկտեմբերի 2008թ.

Կալվելին և Չիլյոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 32967/96, ՄԻԵԴ, 2002-I

Կելերն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 26824/04, 17 հոկտեմբերի 2013թ.

Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 25781/94, ՄԻԵԴ, 2001-IV

Կիտանովսկա Ստանոյկովիչը և այլք ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, թիվ 2319/14, 13 հոկտեմբերի 2016թ.

Կլաասն ընդդեմ Գերմանիայի, 22 սեպտեմբերի 1993, սերիա Ա թիվ 269

Կոլևին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 1108/02, 5 նոյեմբերի 2009թ.
Կոլյադենկոն և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 17423/05 և 5 այլ գործ, 28 փետրվարի 2012թ.
Կոչեսկին ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության (որոշ.), թիվ 41107/07, 22 հոկտեմբերի 2013թ.
Կոսևան ընդդեմ Բուլղարիայի (որոշ.), թիվ 6414/02, 22 հունիսի 2010թ.
Կոտելնիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 45104/05, 12 հուլիսի 2016թ.
Կուդրան ընդդեմ Խորվաթիայի, թիվ 13904/07, 18 դեկտեմբերի 2012թ.
Կուշտովան և այլք ընդդեմ Ռուսաստան (թիվ 2), թիվ 60806/08, 21 փետրվարի 2017թ.
Կրաստանովն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 50222/99, 30 սեպտեմբերի 2004թ.
Կուկալաշվիլին և այլք ընդդեմ Վրաստանի, թիվ 8938/07 և 41891/07, 2 ապրիլի 2020 թ.

—Հ—

Հասան ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 31322/07, ՄԻԵԴ, 2011թ.
Հասանն ընդդեմ Միացյալ Թագավորության [ՄՊ], թիվ 29750/09, ՄԻԵԴ, 2014թ.
Հարիսոնն ը այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 44301/13, 25 մարտի 2014թ.
Հեմսթորթն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 58559/09, 16 հուլիսի 2013թ.
Հիլերն ընդդեմ Ավստրիայի, թիվ 1967/14, 22 նոյեմբերի 2016թ.
Հրիստոզովը և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 47039/11 և 358/12, ՄԻԵԴ, 2012թ. (քաղվածքներ)
Հյու Ջորդանն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 24746/94, 4 մայիսի 2001թ.
Հուոհվանայնենն ընդդեմ Ֆինլանդիայի, թիվ 57389/00, 13 մարտի 2007թ.

—Զ—

Զյեցյական ընդդեմ Լեհաստանի, թիվ 77766/01, 9 դեկտեմբերի 2008թ.

—Մ—

Մ. Օզելը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 14350/05 և 2 այլ գործ, 17 նոյեմբերի 2015թ.
Մագոմադովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 68004/01, 12 հուլիսի 2007թ.
Մահմուտ Քայան ընդդեմ Թուրքիայի, թիվ 22535/93, ՄԻԵԴ, 2000-III
Մայորանոն և այլք ընդդեմ Իտալիայի, թիվ 28634/06, 15 դեկտեմբերի 2009թ.
Մակարացիսն ընդդեմ Հունաստանի [ՄՊ], թիվ 50385/99, ՄԻԵԴ, 2004-XI
Մախարաձեն և Սիխարուլիձեն ընդդեմ Վրաստանի, թիվ 35254/07, 22 նոյեմբերի 2011թ.
Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի *, թիվ 17247/13, 26 մայիսի 2020 թ.
Մալիք Բաբայև ընդդեմ Ադրբեջանի, թիվ 30500/11, 1 հունիսի 2017թ.
Մանսուրօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 43443/98, 26 փետրվարի 2008թ.
Մարգուշն ընդդեմ Խորվաթիայի [ՄՊ], թիվ 4455/10, ՄԻԵԴ, 2014թ. (քաղվածքներ)
Մարիուս Ալեքսանդրուն և Մարինելա Ստեֆանն ընդդեմ Ռումինիայի, թիվ 78643/11, 24 մարտի 2020 թ.
Մարուսևան ընդդեմ Ռուսաստանի (որոշ.), թիվ 28602/02, 1 հունիսի 2006թ.
Մաստրոմատեոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 37703/97, ՄԻԵԴ, 2002-VIII
Մազեպան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 15086/07, 17 հուլիսի 2018 թ.
Մըկքենն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, 27 սեպտեմբերի 1995, սերիա Ա թիվ 324
Մըկքերն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 28883/95, 4 ապրիլի 2000թ.

Մեդովան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 25385/04, 15 հունվարի 2009թ.
Մեհմեդ Շենթյուրքը և Բեքիր Շենթյուրքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 13423/09, ՄԻԵԴ, 2013թ.
Մենդին ընդդեմ Ֆրանսիայի (որոշ.), թիվ 71428/12, 4 սեպտեմբերի 2018 թ.
Մենսոն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 47916/99, ՄԻԵԴ, 2003-V
Մերյեմ Չելիքը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 3598/03, 16 ապրիլի 2013թ.
Մեժիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 44297/06, 16 ապրիլի 2015թ.
Միքայիլ Մամադովն ընդդեմ Ադրբեջանի, թիվ 4762/05, 17 դեկտեմբերի 2009թ.
Միխնոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 32514/12, 1 սեպտեմբերի 2016թ.
Միկիևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 61536/08 և 4 այլ գործ, 30 հունվարի 2014թ.
Միտիչն ընդդեմ Սերբիայի, թիվ 31963/08, 22 հունվարի 2013թ.
Մոլին ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 13754/02, 1 սեպտեմբերի 2009թ.
Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի [ՄՊ], թիվ 10865/09 և 2 այլ գործ, ՄԻԵԴ, 2014թ. (քաղվածքներ)
Մոյզիևն ընդդեմ Լեհաստանի, թիվ 11818/02, 24 մարտի 2009թ.
Մոսենձն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 52013/08, 17 հունվարի 2013թ.
Մուչիբաբիջն ընդդեմ Սերբիայի, թիվ 34661/07, 12 հուլիսի 2016թ.
Մուսաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 74239/01, 26 հուլիսի 2007թ.
Մուստաֆա Թունչը և Ֆեչիր Թունչն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 24014/05, 14 ապրիլի 2015թ.

—Յ—

Յաբանսուն և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 43903/09, 12 նոյեմբերի 2013թ.
Յանգերն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 57420/00,ՄԻԵԴ, 2003-I

Յերեմյաշովան և Պեչովան ընդդեմ Չեխական (վերանայված), թիվ 23944/04, 20 հունիսի 2013թ.
Յոտովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 43606/04, 23 հոկտեմբերի 2012թ.
Յուքսել Էրդողանը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 57049/00, 15 փետրվարի 2007թ.

—Ն—

Նաչովան և այլք ընդդեմ Բուլղարիայի [ՄՊ], թիվ 43577/98 և 43579/98, ՄԻԵԴ, 2005-VII
Նաֆիյե Չեթինը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 19180/03, 7 ապրիլի 2009թ.
Նենչևան և այլք ընդդեմ Բուլղարիայի, թիվ 48609/06, 18 հունիսի 2013թ.
Նեսիբե Հարան ընդդեմ Թուրքիայի, թիվ 28299/95, 6 հոկտեմբերի 2005 թ.
Նիկոլաե Վիրջիլիու Տենասեն ընդդեմ Ռումինիայի, [ՄՊ], թիվ 41720/13, 25 հունիսի 2019 թ.
Նիտեցկին ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 65653/01, 21 մարտի 2002թ.
Նուրայ Շենն ընդդեմ Թուրքիայի (թիվ 2), թիվ 25354/94, 30 մարտի 2004թ.

—Շ—

Շանդրուն և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 22465/03, 8 դեկտեմբերի 2009թ.
Շաֆիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 49379/09, 3 մայիսի 2012թ.
Շիլիհն ընդդեմ Սլովենիայի [ՄՊ], թիվ 71463/01, 9 ապրիլի 2009թ.
Շիմշեկը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 35072/97 և 37194/97, 26 հուլիսի 2005թ.
Շիրին Յիլմազն ընդդեմ Թուրքիայի, թիվ 35875/97, 29 հուլիսի 2004թ.

—Չ—

Չավիտ Թինարլիօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 3648/04, 2 փետրվարի 2016թ.
Չաքմակչին ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 3952/11, 2 մայիսի 2017թ.
Չաքմաքն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 34872/09, 21 նոյեմբերի 2017թ.
Չելիոօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 69546/12, 4 հոկտեմբերի 2016թ.
Չորեֆտակիսը և Չորեֆտակին ընդդեմ Հունաստանի, թիվ 46846/08, 17 հունվարի 2012թ.

—Պ—

Պալիչն ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի, թիվ 4704/04, 15 փետրվարի 2011թ.
Պենտյացովան և այլք ընդդեմ Մոլդովայի (որոշ.), թիվ 14462/03, ՄԻԵԴ, 2005-I
Պերեյրա Էնրիկեսն ընդդեմ Լյուքսեմբուրգի, թիվ 60255/00, 9 մայիսի 2006թ.
Պերևեդենցևն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 39583/05, 24 ապրիլի 2014թ.
Պիտալևն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 34393/03, 30 հուլիսի 2009թ.

—Ջ—

Ջալուդն ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], թիվ 47708/08, ՄԻԵԴ, 2014թ.
Ջելիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 57856/11, 12 հունիսի 2014թ.
Ջուլիանին և Գաջոն ընդդեմ Իտալիայի [ՄՊ], թիվ 23458/02, ՄԻԵԴ, 2011թ. (քաղվածքներ)
Ջենթին ընդդեմ Բելգիայի, թիվ 82284/17, 31 մարտի 2020 թ.

—Ռ—

Ռ.Ռ.-ն և այլք ընդդեմ Հունգարիայի, թիվ 19400/11, 4 դեկտեմբերի 2012թ.

Ռաջկովսկան ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 37393/02, 27 նոյեմբերի 2007թ.

Ռամսահայը և այլք ընդդեմ Նիդեռլանդների [ՄՊ], թիվ 52391/99, ՄԻԵԴ, 2007-II

Ռանցևև ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի, թիվ 25965/04, ՄԻԵԴ, 2010թ. (քաղվածքներ)

Ռենոլդեն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 5608/05, ՄԻԵԴ, 2008թ. (քաղվածքներ)

Ռեյնոլդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 2694/08, 13 մարտի 2012թ.

Ռոմեո Կաստանյոն ընդդեմ Բելգիայի, թիվ 8351/17, 9 հուլիսի 2019 թ.

Ռուպան ընդդեմ Ռումինիայի (թիվ 1), թիվ 58478/00, 16 դեկտեմբերի 2008թ.

—Ս—

Սալմանն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 21986/93, ՄԻԵԴ, 2000-VII

Սաուդն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 9375/02, 9 հոկտեմբերի 2007թ.

Սարիշվիլի-Բոլկվաձեն ընդդեմ Վրաստանի, թիվ 58240/08, 19 հուլիսի 2018 թ.

Սաշո Գորգիևն ընդդեմ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության, թիվ 49382/06, ՄԻԵԴ, 2012թ. (քաղվածքներ)

Սելահաթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի, թիվ 15028/09, 23 հունիսի 2015թ.

Սեյհանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33384/96, 2 նոյեմբերի 2004թ.

Սեսիլիա Պերեյրա Էնրիկեսը և այլք ընդդեմ Լյուքսեմբուրգի (որոշ.), թիվ 60255/00, 26 օգոստոսի 2003թ.

Սերգեյ Շևչենկոն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 32478/02, 4 ապրիլի 2006թ.

Սերֆն ընդդեմ Թուրքիայի, թիվ 12938/07, 3 մայիսի 2016թ.

Սևիմ Գյունգյորն ընդդեմ Թուրքիայի (որոշ.), թիվ 75173/01, 14 ապրիլի 2009թ.

Սիդիկա Իմրեն ընդդեմ Թուրքիայի, թիվ 47384/11, 13 սեպտեմբերի 2016թ.

Սինիմն ընդդեմ Թուրքիայի, թիվ 9441/10, 6 հունիսի 2017թ.
Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 57671/00, ՄԻԵԴ, 2004-IX (քաղվածքներ)
Սկավուձո-Հագերն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 41773/98, 7 փետրվարի 2006թ.
Սյեչոնսկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 19776/04, 14 հունիսի 2011թ.
Սոարեն և այլք ընդդեմ Ռումինիայի, թիվ 24329/02, 22 փետրվարի 2011թ.
Ստարշևիչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 80909/12, 13 նոյեմբերի 2014թ.
Ստոյանովին ընդդեմ Բուլղարիայի, թիվ 42980/04, 9 նոյեմբերի 2010թ.
Սեմաչն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 36083/16, 21 հունիսի 2018 թ.
Ս.Ֆ.-ն ընդդեմ Շվեյցարիայի, թիվ 23405/16, 30 հունիսի 2020 թ.
Սուարես Կամպոսն ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 30878/16, 14 հունվարի 2020 թ.
Սոլսկան և Ռիբիկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 30491/17 և 31083/17, 20 սեպտեմբերի 2018 թ.

—Վ—

Վալենտին Կամպենուի անվան իրավաբանական ռեսուրսների կենտրոնն ընդդեմ Ռումինիայի [ՄՊ], թիվ 47848/08, ՄԻԵԴ, 2014թ.
Վալերի Ֆուկլևն ընդդեմ Ուկրաինայի, թիվ 6318/03, 16 հունվարի 2014թ.
Վակրիլովն ընդդեմ Բուլղարիայի (որոշ.), թիվ 18698/06, 9 հոկտեմբերի 2012թ.
Վան Քոլլն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 7678/09, 13 նոյեմբերի 2012թ.
Վառնավան և այլք ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 16064/90 և 8 այլ գործ, ՄԻԵԴ, 2009թ.
Վասիլևսկան և Կալուցկան ընդդեմ Լեհաստանի, թիվ 28975/04 և 33406/04, 23 փետրվարի 2010թ.
Վելիկովան ընդդեմ Բուլղարիայի, թիվ 41488/98, ՄԻԵԴ, 2000-VI
Վիլնեսը և այլք ընդդեմ Նորվեգիայի, թիվ 52806/09 և 22703/10, 5 դեկտեմբերի 2013թ.

Վյատերն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 42290/08, 15 մայիսի 2012թ.
Վոլկն ընդդեմ Սլովենիայի, թիվ 62120/09, 13 դեկտեմբերի 2012թ.
Վոն ընդդեմ Ֆրանսիայի [ՄՊ], թիվ 53924/00, ՄԻԵԴ, 2004-VIII
Վանյո Թոդորովն ընդդեմ Բուլղարիայի, թիվ 31434/15, 21 հուլիսի 2020 թ.
Վարդոսանիձեն ընդդեմ Վրաստանի, թիվ 43881/10, 7 մայիսի 2020 թ.
Վովկը և Բոգդանովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 15613/10, 11 փետրվարի 2020 թ.
Վարեշիակն ընդդեմ Լեհաստանի (որոշ.), թիվ 58558/13, 10 մարտի 2020 թ.

—Տ—

Տագաևան և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 26562/07 և 6 այլ գործ, 13 ապրիլի 2017թ.
Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 4353/03, ՄԻԵԴ, 2006-XV (քաղվածքներ)
Տուրլուևան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 63638/09, 20 հունիսի 2013թ.
Տրևալեցն ընդդեմ Բելգիայի, թիվ 30812/07, 14 հունիսի 2011թ.
Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 49790/99, 5 հուլիսի 2005թ.
*Տյորշանան ընդդեմ Ալբանիայի**, թիվ 48756/14, 4 Օգոստոսի 2020 թ.

—ՈՒ—

Ուրսուն ընդդեմ Ռումինիայի (որոշ.), թիվ 58670/00, 3 մայիսի 2005թ.

—Փ—

Փաշա ե Էրքան Էրոլն ընդդեմ Թուրքիայի, թիվ 51358/99, 12 դեկտեմբերի 2006թ.
Փաուլն ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 45305/99, ՄԻԵԴ, 2000-V
Փերքն և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 50739/99, 28 մարտի 2006թ.

Փոլ և Օդրի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 46477/99, ՄԻԵԴ, 2002-II
Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 2346/02, ՄԻԵԴ, 2002-III

—Ք—

Քալենդերն ընդդեմ Թուրքիայի, թիվ 4314/02, 15 դեկտեմբերի 2009թ.
Քամինզը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 27306/05, 13 դեկտեմբերի 2005թ.
Քայան ընդդեմ Թուրքիայի, 19 փետրվարի 1998թ., Ժողովածու 1998-I
Քեթրեբն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 38447/09, 19 հուլիսի 2012թ.
Քելլին և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 30054/96, 4 մայիսի 2001թ.
Քիլինչը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 40145/98, 7 հունիսի 2005թ.
Քիլիչն ընդդեմ Թուրքիայի, թիվ 22492/93, ՄԻԵԴ, 2000-III
Քինանն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 27229/95, ՄԻԵԴ,2001-III
Քիշմիրն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27306/95, 31 մայիսի 2005թ.
Քոքուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 27305/95, 31 մայիսի 2005թ.
Քուրթն ընդդեմ Ավստրիայի, թիվ 62903/15, 4 հուլիսի 2019 թ.

—Օ—

Օ՛Լուգլինը և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (որոշ.), թիվ 23274/04, 25 օգոստոսի 2005թ.
Օղուրն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 21594/93, ՄԻԵԴ, 1999-III
Օլևնիկ-Սիեպլինշկան և Օլևնիկն ընդդեմ Լեհաստանի, թիվ 20147/15, 5 սեպտեմբերի 2019 թ.
Օներյիլդիզն ընդդեմ Թուրքիայի [ՄՊ], թիվ 48939/99, ՄԻԵԴ, 2004-XII
Օփուզն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33401/02, ՄԻԵԴ, 2009թ.
Օրհանն ընդդեմ Թուրքիայի, թիվ 25656/94, 18 հունիսի 2002թ.
Օրուքն ընդդեմ Թուրքիայի, թիվ 33647/04, 4 փետրվարի 2014թ.

Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության, 28 հոկտեմբերի 1998թ., *Վճիռների և որոշումների ժողովածու* 1998-VIII
Օսմանօղլուն ընդդեմ Թուրքիայի, թիվ 48804/99, 24 հունվարի 2008թ.
Օյալն ընդդեմ Թուրքիայի, թիվ 4864/05, 23 մարտի 2010թ.
Օզալփը և այլք ընդդեմ Թուրքիայի, թիվ 32457/96, 8 ապրիլի 2004թ.

—Ֆ—

Ֆ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի [ՄՊ], թիվ 43611/11, 23 մարտի 2016թ.
Ֆերգեչն ընդդեմ Խորվաթիայի, թիվ 68516/14, 9 մայիսի 2017թ.
Ֆերնանդես դե Օլիվեյրան ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 78103/14, 31 հունվարի 2019 թ.
Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի (որոշ.), թիվ 18299/03 և 27311/03, 18 մարտի 2010թ.
Ֆինոգենովը և այլք ընդդեմ Ռուսաստանի, թիվ 18299/03 և 27311/03, ՄԻԵԴ, 2011թ. (քաղվածքներ)
Ֆուրդիկն ընդդեմ Սլովակիայի (որոշ.), թիվ 42994/05, 2 դեկտեմբերի 2008թ.
Ֆունտասն ընդդեմ Հունաստանի, թիվ 50283/13, 3 հոկտեմբերի 2019 թ.

blj_pnll.JWJt, rinrhmr11u w11w2wLJ1wpu t LlwJrgwLlw!)nll.l Llwr11m t,pwtj_mu!)ubpntj_ qpwri.tj_nri. 4wqLlw4bpll.Jmra1muubpt, 2wp!)mLI: blj_pnll.JwJt, rinrhr11t,u wu11wLlw4gmLI bu 47 ll.JbUlmr,Jmuutp, npngt,g 27-[l t.ft,wawLlwuwlj uwu blj_pnll.JWLjwu t.ft,mr,;Jwu wu11wt.i'ubp bu: btj_pnll.JWJt, rinrhr11t, wu11wLl pntnr Ll.JbLJ1mr,;1muubp(l t.ft,wgb[bu lJwp11m t,pwlj_mU!)Ubpt, t;Lj_rnll.JW4wu 4nutj_tiugt,w1t,u' npll.JbU Llwr11m t,pwtj_mu!)ubpt,, anri.nt1r11wtj_wpmr,;1wu u t,pwtj_mu!)t, q.bpwljWJnL[aJWU Ll.JW2Ulll.JWUnL[aJWU[l Ull.JWUlw4wmri.ri.t1wo t.ft,2wqq.w1t,u hwLlwbw1uwq.pt,: LJwr11m t,pwtj_mu!)ubpt, tilj_rnll.Jwljwu 11wLJ1wpwu[! Lj_bpwhuljtj_mLT t '-mutj_bugt,wJt, t,pwq.npomt.i'u wu11wLl Ll.JbUlmr,;Jmuubpmll:

www.coe.int

blj_rnll.JWLjwu t.ft,mr,;JnLU[l 27 blj_pnll.JWLjwu anri.nt1r11wtj_wpw4wu bpljubpt, LJ1uLJ1buw4wu u !)Wfl.W!)Wljwu1mrwhwLJ1m4 q.npo[!u4bpmr,;1mu t' tir 500 t.ft,u,nu !)Wfl.W!)Wgt,utirt, hwLlwr wnwlj_ti[wr11wr u Wll.JWhnlj_ w2riwrhmLI riwri.wri.mr,;imu, pwpq.wtj_w6mLl u wqwLJ1mr,;1mu Wll.Jwhnlj_b[m Ull.JW Ulw ljn lj_: UJU wubuu t,pwq.nrob[nL hwLlwr blJ tirlJrutirl! ht,t.i'utit bu Llwrt.ft,uutir' bLJ w2riwLJ1WU!)Utipu t,pwljwuwgutitm u upw opbuu11rmr,;1muu [!U'lmubtm hwLlwp: lipw ht,t.i'uwljwu Llwpt.ft,uubpu bu btj_rnll.Jwljwu ri nphp11wr wu[!, (np(l ubpljwJwgumLI t wqq.w1t,u 4wnwtj_wpmr,;1muubp(l) u blj_rnll.Jwljwu hwubuwanri.nl{[l (np(l ubpljwJwgumLI t bIJ [!U'lhwumr 2whbp[!):

http://europa.eu

Translation co-funded by the European Union

EUROPEA N COURT OF HUM AN RIGHTS

COUNCIL OF EUROPE